Կրկնակի փորձաքննության համար վճարը վճարված լինելու մասին փոխանցման (մուտքի, վճարման) անդորրագրի լուսապատճենը		
Լուսանկար/ներ (առկայության դեպքում)		
Տեսագրություն/ներ (առկայության դեպքում)		
7. Հաստատումներ		
7.1.	Կրկնակի փորձաքննություն նշանակելու հիմքերի առկայության դեպքում լիազորում եմ Բյուրոյին համապատասխան փորձագետի հետ Բյուրոյի կնքած պայմանագրի շրջանակներում կրկնակի փորձաքննության անցկացման պահանջ ներկայացրած անձի անունից և հաշվին պատվիրել Դիմումով պահանջվող կրկնակի փորձաքննության անցկացումը և ստանալ փորձաքննության արդյունքները:	
7.2.	Խնդրում եմ կրկնակի փորձաքննության արդյունքները սույն դիմումով սահմանված եղանակով ինձ ծանուցելու պահից համապատասխան փորձագետի ծառայությունները համարել կրկնակի փորձաքննության անցկացման պահանջ ներկայացրած անձին մատուցված և դրա հետ կապված դուրս գրված հաշիվ ապրանքագիրն նրա կողմից ինքնաշխատ ստորագրված (հաստատված):	
7.3.	Տեղեկացված եմ, որ կրկնակի փորձաքննությունն անց է կացվում պահանջ ներկայացրած անձի միջոցների հաշվին և կրկնակի փորձաքննություն անցկացնելու համար պահանջվող գումարի չվճարումը և (կամ) վճարման հիմք հանդիսացող փաստաթղթի չկցելը սույն դիմումին կհանգեցնի կրկնակի փորձաքննության անցկացման պահանջի՝ Բյուրոյի կողմից մերժմանը (կիրառելի չէ Ապահովագրողի նկատմամբ):	
7.4.	Ծանոթացել եմ Բյուրոյի համապատասխան կանոններին և Բյուրոյի կայքում հրապարակված՝ կրկնակի փորձաքննության անցկացման պայմաններին, ժամկետներին, վճարի չափին և համաձայն եմ դրանց:	
7.5.	Տեղեկացված եմ, որ կրկնակի փորձաքննության պահանջը մերժվելու կամ այլ հիմքով փորձաքննություն չիրականացվելու դեպքում կրկնակի փորձաքննության համար վճարված գումարը փոխանցվելու է սույն դիմումում ներկայացված բանկային հաշվին:	

7.6.	Տեղեկացված են, որ եթե հետագայում ցանկանամ ընթացք չտալ սույն դիմումին, և այդ պահի դրությամբ Բյուրոյի կողմից արդեն իսկ նշանակված լինի կրկնակի փորձաքննություն, ապա սույն դիմումի հիման վրա նշանակված կրկնակի փորձաքննությունը ամեն դեպքում չի դադարեցվի և կիրականացվի սահմանված կարգով:			
Դիմողի (դիմողի անունից ներկայացված անձի) անունը ազգանունը		Դիմողի (դիմողի անունից ներկայացված անձի) ստորագրությունը		
Դիմումի լրացման ամսաթիվը				
	օր	ամիս	տարի	

Ձև 8.3

(Ձև 8.3-ը լրաց. է 28/04/2020թ թիվ 10-Լ և փոփ. է 29/09/2020թ թիվ 34-Լ))

ԿՐԿՆԱԿԻ (ԼՐԱՑՈՒՑԻՉ) ՓՈՐԾԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱԳՆԵԼՈՒ ՊԱՅԱՆՋԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԴԻՄՈՒՄԻՆ ԸՆԹԱՑՔ ՉՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԻՄՈՒՄ

1. Փորձաքննությունն իրականացնելու պահանջի վերաբերյալ դիմումի ներկայացման ամսաթիվը			
	օր	ամիս	տարի
2. Դիմումի հասցեատերը	Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրո		
2. ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՅԱՆՋԸ			
Խնդրում եմ կրկնակի (լրացուցիչ) փորձաքննությունն իրականացնելու պահանջի վերաբերյալ ներկայացված դիմումին ընթացք չտալ և դադարեցնել դրա գծով իրականացվող գործընթացը:			
Գիտակցում եմ, որ կրկնակի փորձաքննությունն իրականացնելու պահանջի վերաբերյալ ներկայացված դիմումի հիման վրա օրենքով սահմանված կարգով Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի կողմից արդեն իսկ կրկնակի փորձաքննությունն նշանակված լինելու դեպքում սույն դիմումը կթողնվի անհետևանք:			
3. Մեկնաբանություններ (լրացվում է ըստ ցանկության)			
Դիմումատու			
	(անունը և ազգանունը)	(ստորագրությունը)	
Դիմումի լրացման ամսաթիվը			
	օր	ամիս	տարի

ԾԱՆՈՒՑՈՒՄ
ԿՐԿՆԱԿԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄՆ ՍՏԱՑՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ծանուցման ամսաթիվը և հերթական համարը				
	համարը	օր	ամիս	տարի
Ծանուցումն իրականացնողի անվանումը				
	(նշվում է ծանուցումն իրականացնողի անվանումը)			
Ծանուցվող անձը				
	(նշվում է անձի անվանումը/անուն, ազգանունը, ում հասցեագրված է ծանուցումը)			
Կրկնակի փորձաքննություն իրականացնելու վերաբերյալ դիմումի ներկայացման ամսաթիվը				
	օր	ամիս	տարի	
Տեղեկացնում ենք, որ Ձեր կողմից ներկայացված կրկնակի փորձաքննություն իրականացնելու պահանջի վերաբերյալ դիմումն ստացված է Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի կողմից: Հետագա ընթացքի և արդյունքների մասին Դուք կստանաք լրացուցիչ ծանուցումներ:				
Հարգանքով, Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրո				

ԴԻՄՈՒՄ

ՎԵՐԱՍՎԱԾ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՏԱՐԲԵՐԱԿ ԸՆՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ամսաթիվը			
	օր	ամիս	տարի
Ապահովագրական հատուցումը վճարելու վերաբերյալ որոշում-ծանուցման համարը			
Խնդրում եմ ապահովագրական հատուցումն իրականացնել գույքին պատճառված վնասի վերականգնման եղանակով: Տեղեկացված եմ, որ գույքի վերականգնում իրականացնող կազմակերպությունը ինձ ծանուցված ապահովագրական հատուցման փաթեթում ներառված՝ պատճառված վնասի գնահատման հաշվետվության մեջ նշված վերանորոգող կազմակերպությունն է:			
Դիմում ներկայացնողի տվյալները և ստորագրությունը			
	(անունը, ազգանունը)	(ստորագրությունը)	

Ծանուցման ամսաթիվը			
	օր	ամիս	տարի
Ծանուցման հերթական համարը			
Ծանուցումն իրականացնողը	(նշվում է ծանուցումն իրականացնողի անվանումը)		
Ծանուցումը ստացող անձինք	(նշվում են ծանուցումը ստացող անձանց անվանումները)		
ԾԱՆՈՒՑՈՒՄ ԿՐԿՆԱԿԻ (ԼՐԱՑՈՒՑԻՉ) ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՄԱՆ (ՄԵՐԺՄԱՆ (ՉՆՇԱՆԱԿՄԱՆ)) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
1. Պատահարի միասնական նույնականացուցիչը, որին վերաբերում է սույն ծանուցումը			
2. Պատահարի ամսաթիվը	օր	ամիս	տարի
3. Վնասված գույքը նույնականացնող տվյալները (լրացվում է գույքին պատճառված վնասների փորձաքննության)			
4. Փորձաքննության նշանակման ամսաթիվը	օր	ամիս	տարի
5. Տեղեկացնում ենք, որ			
☐	կցված Ելակետ 1-ով արձանագրված ՃՏԴ-ի գծով նշանակված է հետևյալ փորձաքննությունը՝	Պատահարի առաջացման պատճառների վերաբերյալ Գույքին պատճառված վնասների վերաբերյալ	☐ առաջնային փորձաքննություն
			☐ լրացուցիչ փորձաքննություն
			☐ կրկնակի փորձաքննություն
			☐ առաջնային փորձաքննություն
			☐ լրացուցիչ փորձաքննություն
			☐ կրկնակի փորձաքննություն
☐	պատվիրված փորձաքննությունը մերժվել է (չի իրականացվել) հետևյալ հիմնավորմամբ՝		
	1		
	2		
	...		
Ծանուցումն իրականացնողի իրավասու անձը		(անունը և ազգանունը, պաշտոնը)	(ստորագրություն)

Ծանուցման հերթական համարը և ամսաթիվը	համարը	օր	ամիս	տարի
Կրկնակի փորձաքննություն նշանակման վերաբերյալ ծանուցման համարը և ամսաթիվը	համարը	օր	ամիս	տարի
Ծանուցումն իրականացնողը	Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրո (Բյուրո)			
Ծանուցում ստացողը				
ԾԱՆՈՒՑՈՒՄ				
ԲՅՈՒՐՈՅԻ ԿՈՂՄԻՑ ԿՐԿԼԱԿԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ				
Սույն ծանուցմամբ տեղեկացնում ենք, որ՝				
☐	Կրկնակի փորձաքննություն իրականացնելու պահանջի վերաբերյալ դիմում ներկայացրած անձի կողմից ներկայացված դիմումի համաձայն՝ կրկնակի փորձաքննության իրականացման գործընթացը դադարեցվել է:			
☐	Բյուրոյի կողմից նշանակված կրկնակի փորձաքննությունը չի իրականացնել և համապատասխանաբար սույն ծանուցմանը կցված է փորձաքննության անհնարինության վերաբերյալ գրության՝ հետևյալ տվյալներով էլեկտրոնային տարբերակը			
	Անհնարինության վերաբերյալ գրության համարը			
☐	Բյուրոյի կողմից նշանակված կրկնակի փորձաքննությունն իրականացվել է և համապատասխանաբար սույն ծանուցմանը կցված են փորձաքննության եզրակացության հետևյալ տվյալներով էլեկտրոնային տարբերակը՝			
	Եզրակացության հերթական համարը			
Համաձայն «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 3-4-րդ մասերի դրույթների՝ կրկնակի փորձաքննության նշանակումից հետո լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննություն նշանակվել չի կարող: Կրկնակի փորձաքննության արդյունքները կարող են բողոքարկվել միայն դատական կարգով:				
Բյուրոյի իրավասու անձը				
	(անունը և ազգանունը, պաշտոնը)		(ստորագրություն)	

ԾԱՆՈՒՑՈՒՄ ԴՄԱ-ԻՑ ՀՊԱ-ԻՆ (ՀՊԱ-ՆԵՐԻՆ)
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ծանուցման ամսաթիվը			
	օր	ամիս	տարի
Ծանուցումն իրականացնողը՝			
	(նշվում է ծանուցումն իրականացնողի ԴՄԱ-ի անվանումը)		
Ծանուցումն ստացողը			
	(նշվում են ծանուցումն ստացող ՀՊԱ-ի (ների) անվանումները)		
1. Պատահարի միասնական նույնականացուցիչը, որին վերաբերում է սույն ծանուցման մեջ նշված հատուցումը			
2. Ապահովագրական հատուցումը վճարելու (մերժելու) վերաբերյալ որոշում-ծանուցման ամսաթիվը և համարը, որին վերաբերում է սույն ծանուցման մեջ նշված հատուցումը			
3. Տուժողի անունը ազգանունը (անվանումը), տուժողի նույնականացման տվյալները			
4. Ապահովագրական հատուցումը վճարելու ամսաթիվը	օր	ամիս	տարի
5. Վճարված ապահովագրական հատուցման չափը			ՀՀ դրամ
6. Վճարված ապահովագրական հատուցման գծով կատարված փորձաքննությունների համար վճարված ծախսերի չափը			ՀՀ դրամ
7. Վճարման փաստը հավաստող փաստաթղթի սթանավորված տարբերակը (տրամադրվում է կանոններով նախատեսված դեպքերում և կարգով)			
Ծանուցումն իրականացնողի իրավասու անձը			
	(անունը և ազգանունը, պաշտոնը)		

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ			
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՃՇԳՐՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
1	Ամսաթիվը	օր	ամիս տարի
2	Հայտարարատու	(անունը և ազգանունը կամ անվանումը)	
3	Ապահովագրական ընկերությունը (Բյուրոն), որին ուղղված է սույն հայտարարությունը		
4	Փաստաթուղթը, որին առնչվում է սույն հայտարարությունը (այսուհետ Փաստաթուղթ)		
5	Փաստաթղթում առկա՝ հայտարարատուին վերաբերող տեղեկատվությունը, որն, ըստ հայտարարատուի, հավաստի չէ		
6	Այն տեղեկատվությունը, որը, ըստ հայտարարատուի, պետք է հավաստի ճանաչվի		
7	Սույնով հաստատում եմ, որ՝ . սույն հայտարարության 5-րդ կետով նախատեսված տեղեկատվության փոխարեն հավաստի է 6-րդ կետում նշված տեղեկատվությունը, . տեղեկացված եմ, որ սույն հայտարարության 6-րդ կետում նշված տեղեկատվությունը և դրա հետևանքները կիրառելի են միայն իմ և սույն հայտարարությանը համաձայնություն տված Ապահովագրողի և (կամ) Բյուրոյի միջև հարաբերություններում և չեն կարող դրվել այլ անձանց շահերին առնչվող գործընթացների հիմքում, . տեղեկացված եմ, որ կեղծ տեղեկություններ ներկայացնելու դեպքում օրենքով սահմանված կարգով կարող եմ ենթարկվել քրեական պատասխանատվության, ինչպես նաև գիտակցում եմ հիշյալ տեղեկատվության փոխարինման հետևանքներն իմ նկատմամբ:		
8	Հայտարարատուի անունից հանդես եկող անձ	(անունը, ազգանունը)	(ստորագրություն)

ՊԱՐՏԱՎՈՐԱԳԻՐ ԱՄՄՊ համակարգում օգտատիրոջ հաշվից օգտվելու վերաբերյալ		
Պարտավորագրի հասցեատերը		Օգտատիրոջ հաշվի բացման հայտը ներկայացրած (ներկայացնող) ընկերությունը
Պարտավորագիրը ներկայացնող անձը		
Նշվում են համապատասխան անձի անունը, ազգանունը և պաշտոնը		
1. ՊԱՐՏԱՎՈՐԱԳԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ		
1)	Անուն (հայերեն)	
2)	Ազգանուն (հայերեն)	
3)	Հայրանուն (հայերեն)	
4)	Անուն (անգլերեն)	
5)	Ազգանուն (անգլերեն)	
6)	Հայրանուն (անգլերեն)	
7)	Անուն (ռուսերեն)	
8)	Ազգանուն (ռուսերեն)	
9)	Հայրանուն (ռուսերեն)	
10)	Անձը հաստատող փաստաթղթի համար	
11)	Անձը հաստատող փաստաթղթի տրման ամսաթիվ	
12)	Անձը հաստատող փաստաթղթի վավերականության ամսաթիվ	
13)	ՀԾՀ (սոցիալական քարտի համար) կամ ՀԾՀ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համար	
14)	Հեռախոսահամար	
15)	Էլեկտրոնային փոստի հասցե	
16)	Այլ նշումներ (լրացվում է՝ ըստ անհրաժեշտության)	
2. ՀԱՎԱՍՏՈՒՄՆԵՐ		
2.1 Սույնով համաձայնություն եմ տալիս, որպեսզի.		

1) Բյուրոյի «ԱՊՊԱ ընդհանուր պայմաններ» RL 1-001 կանոններով սահմանված ԱՄՄՊ (այսուհետ՝ ԱՄՄՊ) համակարգի միջոցով գործառնությունների իրականացման էլեկտրոնային հաշվի (այսուհետ՝ Հաշիվ) միջոցով կատարված հաստատումները, պատվիրակումները, համաձայնությունները, ներբեռնված փորձագիտական եզրակացությունները և այլ գրություններն ու փաստաթղթերը, հայտնած կարծիքները, տեղեկությունները և այլ գրառումները համարվեն իմ կողմից պաշտոնապես կատարված և ստորագրված հաստատումներ, պատվիրակումներ, համաձայնություններ, հայտնած կարծիքներ և այլ գրառումներ:			
2) ԱՄՄՊ համակարգի միջոցով Հաշվին ուղարկված ծանուցումները, փաստաթղթերը, որպես ԱՊՊԱ ոլորտում որակավորված փորձագետի Հաշվին ուղարկված պատվերները, նյութերը և այլ գրառումները ուղարկման պահից համարվեն ինձ պաշտոնապես տրված և իմ կողմից պատշաճ կերպով ստացված ծանուցումներ, փաստաթղթեր, նյութեր և այլ գրառումներ:			
2.2 Տեղեկացված եմ, որ.			
1) Հաշվի օգտագործման իրավասություն ունեմ միայն պարտավորագրի հասցեատիրոջ աշխատակից հանդիսանալու (պայմանագրային հարաբերությունների շրջանակում համապատասխան ծառայությունների մատուցման), իսկ որպես ԱՊՊԱ ոլորտում փորձագետի հանդես գալու պարագայում՝ որակավորման գործողության ժամանակահատվածում:			
2) Հաշվի օգտագործման Օգտատիրոջ անունը և գաղտնաբառի ստեղծման կամ վերականգնման հղումները, ինչպես նաև Հաշվի օգտագործման հետ կապված այլ ծանուցումներն ինձ կուղարկվեն իմ կողմից սույն պարտավորագրում նշված էլեկտրոնային փոստի հասցեին:			
3. ՍՏԱՆՁՆԿՈՂ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ			
Սույնով պարտավորվում եմ.			
1) ԱՄՄՊ համակարգից օգտվել իմ Հաշվին ուղարկված ծանուցումներով նախատեսված, ինչպես նաև ԱՄՄՊ համակարգի համապատասխան բաժիններում տեղադրված՝ ԱՄՄՊ համակարգի օգտագործման կանոններին և պայմաններին համապատասխան, որոնց համաձայն եմ:			
2) որպես ԱՊՊԱ ոլորտում փորձագետ հանդես գալու դեպքում նաև Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի կանոնների համաձայն՝ իմ կողմից կազմվող բոլոր փորձագիտական եզրակացություններն ու այլ փաստաթղթերը և դրանց կցվող փաստաթղթերն ու նյութերն սահմանված ժամկետներում և ամբողջությամբ ներբեռնել ԱՄՄՊ համակարգ:			
Պարտավորագիրը ներկայացնող անձի ստորագրությունը			
		(ստորագրություն)	
Պարտավորագրի լրացման ամսաթիվը			
		օր	ամիս
			տարի

Հավելված 2
«ԱՊՊԱ ընդհանուր պայմաններ» կանոնների

ՀԱՎԵԼՎԱԾ 2.1. ԱՊՊԱ ՎԿԱՅԱԳԻՐԸ ԿԱԶՄԵԼՈՒ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ԱՊՊԱ ՎԿԱՅԱԳԻՐԸ ԼՐԱՅՆԵԼՈՒ ՀՐԱՀԱՆԳԸ

1. ԱՊՊԱ ՎԿԱՅԱԳԻՐԸ ԿԱԶՄԵԼՈՒ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ	
1.	Վկայագիրը, ինչպես նաև սույն հրահանգով նախատեսված դեպքում Վկայագրի հավելվածը կազմվում (ստորագրվում) են երկու օրինակից, որոնցից մեկ օրինակը, տրվում է Ապահովադիրին (Ապահովադրի ներկայացուցչին), իսկ մյուս օրինակը պահվում է Ապահովագրողի (Ապահովագրողի լիազորված անձի կամ ապահովագրական գործակալի) մոտ: Ապահովադիրների կողմից առցանց էլեկտրոնային եղանակով ԱՊՊԱ պայմանագիր կնքվելու դեպքում Ապահովադիրին նույնականացնող տվյալները համապատասխան էլեկտրոնային համակարգում մուտքագրվելու և դրան ի պատասխան՝ Ապահովադրի էլեկտրոնային փոստի հասցեին Վկայագրի (հավելվածի)՝ սույն կանոններով նախատեսված տեխնիկական պահանջներին բավարարող էլեկտրոնային տարբերակի ստացման ուժով համարվում է, որ տվյալ ԱՊՊԱ պայմանագիրը կնքվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցով, որը հնարավորություն է տալիս հաստատելու դրա իսկությունը և ճշգրիտ որոշելու, որ այն ելնում է պայմանագրի կողմից, և որի դեպքում էլեկտրոնային թվային ստորագրությամբ չպաշտպանված Վկայագիրն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ կողմերի կողմից ձեռագիր ստորագրված փաստաթուղթը:
2.	Վկայագիրը լրացվում է հայերենով, բացառությամբ փաստաթղթերի ոչ հայատառ սերիաների և Ավտոտրանսպորտային միջոցի համարանիշերի:
3.	Վկայագրի տվյալները լրացվում են մեկ էջի վրա:
4.	Մեկ պայմանագրով մեկից ավելի Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվություն ապահովագրելու դեպքերում Վկայագրին կցվում է Վկայագրի հավելվածը:
5.	Վկայագիրը և դրա հավելվածները լրացվում են համակարգչի կամ այլ էլեկտրոնային համակարգի կիրառման միջոցով և տպվում են սպիտակ թղթի վրա՝ սև գույնով (բացառությամբ ընկերության լոգոտիպի և մինչև «1. Ապահովադիր» դաշտը (չներառելով այդ հորիզոնականը) լրացվող տեղեկատվության գույնի, որի ընտրությունը կատարվում է տվյալ ընկերության կողմից) և առնվազն համակարգչի 7 տառաչափով (բացառությամբ Վկայագրի տողատակի նշումների, որոնք կարող են տպվել ավելի փոքր տառաչափով), «Գրապալատ» տառատեսակով (համակարգչային անվանումը՝ «ՂԷԱ Գրապալատ» (GHEA Grapalat))՝ «Յունիկոդ» (Unicode) կոդավորման համակարգով: Վկայագրի ձևի խախտում չեն համարվում Վկայագիրը պարունակող թղթի վրա կատարված դիզայնի և ձևավորումները, որոնք չպետք է խոչընդոտեն Վկայագրի տեքստի լիարժեք ընթերնելիությանը:

6.	Վկայագրերը կազմվում են այնպես, որպեսզի պահպանվեն արտացոլման ենթակա բոլոր տվյալները՝ ըստ սույն կանոններով հաստատված Վկայագրի ձևի բաժինների և յուրաքանչյուր բաժնի ներսում լրացման ենթակա տվյալների հաջորդականության: Վկայագրի բոլոր համարակալված բաժինները և դրանց ներքո գտնվող դաշտերը (աղյուսակները) պետք է միմյանցից սահմանազատվեն հստակ տեսանելի սահմանագծերով: Վկայագրի 3-րդ կետի չլրացվող դաշտը, ինչպես նաև Վկայագրի 12-րդ կետի անհրաժեշտության բացակայության դեպքում՝ Վկայագրի այդ դաշտը չեն տպագրվում:
----	--

2. ԱՊՊԱ ՎԿԱՅԱԳԻՐԸ ԼՐԱՑՆԵԼՈՒ ՀՐԱՀԱՆԳԸ

Վկայագրի դաշտի անվանումը կամ համարը	Լրացման ենթակա դաշտերում լրացվող տեղեկատվության բովանդակությունը (բոլոր տեղեկությունները Վկայագրում ենթակա են պարտադիր լրացման)
«Ապահովագրական ընկերության լոգոտիպը»	Ապահովագրողի լոգոտիպը:
«Վկայագիր N»	Վկայագրի սերիան և հերթական համարը՝ յուրաքանչյուր վանդակում մեկ նիշ՝ սույն հավելվածի ենթահավելվածով սահմանված պահանջներին համապատասխան:
1.	Ապահովագրողի՝ 1) անվանումը, 2) գտնվելու վայրի հասցեն, 3) հեռախոսահամարները, 4) էլեկտրոնային փոստի հասցեն, 5) ինտերնետային կայքը, 6) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում գրանցման համարը, 7) լիցենզիայի համարը, ՀՎՀՀ-ն, բանկային հաշվեհամարը:

Նախքան ԱՊՊԱ վկայագրում Ապահովագրի վերաբերյալ տվյալներ լրացնելն ԱՄՄԴ համակարգում ընտրվում է ԱՊՊԱ պայմանագրի կնքման հետևյալ տարբերակներից մեկը՝

Ապահովագրման ենթակա Ավտոտրանսպորտային միջոցը՝

1) գրանցված է Հայաստանի Հանրապետությունում, եթե Ավտոտրանսպորտային միջոցը սահմանված կարգով գրանցված է Հայաստանի Հանրապետությունում կամ Արցախի Հանրապետությունում: Ընդ որում, «գրանցված է Հայաստանի Հանրապետությունում» տարբերակն ընտրելիս անհրաժեշտ է ընտրել՝

ա. «Հաշվառված է ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու մարմնի կողմից », եթե տրանսպորտային միջոցը սահմանված կարգով հաշվառված է Հայաստանի Հանրապետության կամ Արցախի Հանրապետության ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու մարմնի կողմից,

բ. «Հաշվառված չէ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու մարմնի կողմից » եթե տրանսպորտային միջոցը

սահմանված կարգով հաշվառված չէ Հայաստանի Հանրապետության կամ Արցախի Հանրապետության ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու մարմնի կողմից:

2) գրանցված չէ Հայաստանի Հանրապետությունում, եթե Ավտոտրանսպորտային միջոցը սահմանված կարգով գրանցված չէ Հայաստանի Հանրապետությունում կամ Արցախի Հանրապետությունում: Ընդ որում, «գրանցված չէ Հայաստանի Հանրապետությունում» տարբերակն ընտրելիս ընտրվում է նաև ստորև նշված տարբերակներից համապատասխան տարբերակը՝

ա. «Օտարերկրյա հաշվառման համարանիշներով տրանսպորտային միջոց»,

բ. «Օտարերկրյա տարանցիկ հաշվառման համարանիշներով տրանսպորտային միջոց»,

գ. «Ժամանակավոր հաշվառման համարանիշով տրանսպորտային միջոց»,

դ. «Տրանսպորտային միջոց առանց հաշվառման համարանիշի»:

	Ապահովադրի՝	
2.	Ֆիզիկական անձի դեպքում՝	1) Անունը և ազգանունը, 2) Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ անձը հաստատող փաստաթղթերից որևէ մեկի սերիան և համարը, 3) հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը (չի լրացվում այն անձանց համար, ում, օրենքի համաձայն, հանրային ծառայությունների համարանիշ չի հատկացվում), 4) հաշվառման հասցեն, հեռախոսահամար(ներ)ը, էլեկտրոնային փոստի հասցեն, 5) Ապահովադրին պատկանող և Հայաստանի Հանրապետությունում գործող բանկում բացված բանկային հաշվեհամարը՝ «Ապահովադրին պատկանող բանկային հաշվեհամար» բառերի և բանկի անվանման պարտադիր նշումով: Եթե ԱՊՊԱ պայմանագիրը կնքվում է ՊԿԱ-ի գլխամասային գրասենյակում կամ մասնաճյուղում և ներկայացվել է ԱՊՊԱ պայմանագրի շրջանակներում Ապահովադրին վճարման ենթակա գումարներն ստանալու լիազորություններ պարունակող՝ նոտարական կարգով վավերացված լիազորագիր, ապա կարող է լրացվել նաև լիազորված անձին պատկանող բանկային հաշվեհամարը՝ «Ապահովադրի լիազորած անձին պատկանող բանկային հաշվեհամար» բառերի և բանկի անվանման պարտադիր նշումով: Սույն ենթակետով նախատեսված տեղեկատվությունը ենթակա է պարտադիր լրացման միայն Հայաստանի Հանրապետությունում կամ Արցախի Հանրապետությունում հաշվառված (բացառությամբ

	Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով Հայաստանի Հանրապետության տարածք վարելու միջոցով մուտք գործող Ավտոտրանսպորտային միջոցների գծով երեք ամսից ոչ ավելի ժամկետով կնքվող պայմանագրերի) Ավտոտրանսպորտային միջոցի գծով կնքվող պայմանագրերում, իսկ այլ դեպքերում՝ միայն համապատասխան տեղեկատվությունը ներկայացվելու դեպքում, 6) Բոնուս-Մալուս դասը և դասի վերջին փոփոխման ամսաթիվը:
իրավաբանական անձի դեպքում	1) լրիվ անվանումը, 2) ՀՎՀՀ-ն, 3) գտնվելու վայրի հասցեն, հեռախոսահամար(ներ)ը, էլեկտրոնային փոստի հասցեն, 4) Բոնուս-Մալուս դասը և դասի վերջին փոփոխման ամսաթիվը, 5) Ապահովագրին պատկանող և Հայաստանի Հանրապետությունում գործող բանկում բացված բանկային հաշվեհամարը (ենթակա է լրացման միայն Հայաստանի Հանրապետությունում կամ Արցախի Հանրապետությունում հաշվառված (բացառությամբ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով Հայաստանի Հանրապետության տարածք վարելու միջոցով մուտք գործող Ավտոտրանսպորտային միջոցների գծով երեք ամսից ոչ ավելի ժամկետով կնքվող պայմանագրերի) Ավտոտրանսպորտային միջոցի գծով կնքվող պայմանագրերում, իսկ այլ դեպքերում՝ միայն Ապահովագրի կողմից ներկայացվելու դեպքում)՝ «Ապահովագրին պատկանող բանկային հաշվեհամար» բառերի և բանկի անվանման պարտադիր նշումով:
Հայաստանի Հանրապետության դեպքում	1) պետության անունից հանդես եկող մարմնի անվանումը, 2) պետության անունից հանդես եկող մարմնի հասցեն, հեռախոսահամար(ներ)ը, էլեկտրոնային փոստի հասցեն, 3) Ապահովագրին պատկանող բանկային հաշվեհամարը՝ «Ապահովագրին պատկանող բանկային հաշվեհամար» բառերի և բանկի անվանման պարտադիր նշումով: 4) Բոնուս-Մալուս դասը և դասի վերջին փոփոխման ամսաթիվը

Օտարերկրյա պետության դեպքում՝	1) երկիրը, 2) օտարերկրյա պետության անունից հանդես եկող մարմնի անվանումը (դեսպանատուն, հյուպատոսարան, այլ), 3) օտարերկրյա պետության անունից հանդես եկող մարմնի հասցեն, հեռախոսահամար(ներ)ը, էլեկտրոնային փոստի հասցեն, 4) Ապահովադրին պատկանող և Հայաստանի Հանրապետությունում գործող բանկում բացված բանկային հաշվեհամարը (ենթակա է լրացման միայն Հայաստանի Հանրապետությունում կամ Արցախի Հանրապետությունում հաշվառված (բացառությամբ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով Հայաստանի Հանրապետության տարածք վարելու միջոցով մուտք գործող Ավտոտրանսպորտային միջոցների գծով երեք ամսից ոչ ավելի ժամկետով կնքվող պայմանագրերի) Ավտոտրանսպորտային միջոցի գծով կնքվող պայմանագրերում, իսկ այլ դեպքերում՝ միայն Ապահովադրի կողմից ներկայացվելու դեպքում)՝ «Ապահովադրին պատկանող բանկային հաշվեհամար» բառերի և բանկի անվանման պարտադիր նշումով: 5) Բոնուս-Մալուս դասը և դասի վերջին փոփոխման ամսաթիվը
Համայնքի դեպքում՝	1) համայնքի անվանումը 2) համայնքի անունից հանդես եկող մարմնի անվանումը, 3) համայնքի անունից հանդես եկող մարմնի հասցեն, հեռախոսահամար(ներ)ը, էլեկտրոնային փոստի հասցեն, 4) Ապահովադրին պատկանող բանկային հաշվեհամարը՝ «Ապահովադրին պատկանող բանկային հաշվեհամար» բառերի և բանկի անվանման պարտադիր նշումով: 5) Բոնուս-Մալուս դասը և դասի վերջին փոփոխման ամսաթիվը
Միջազգային կազմակերպության դեպքում՝	1) միջազգային կազմակերպության անվանումը, 2) հասցեն, հեռախոսահամար(ներ)ը, էլեկտրոնային փոստի հասցեն, 3) Ապահովադրին պատկանող և Հայաստանի Հանրապետությունում գործող բանկում բացված բանկային հաշվեհամարը (ենթակա է լրացման միայն Հայաստանի Հանրապետությունում կամ Արցախի Հանրապետությունում հաշվառված (բացառությամբ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով

	Հայաստանի Հանրապետության տարածք վարելու միջոցով մուտք գործող Ավտոտրանսպորտային միջոցների գծով երեք ամսից ոչ ավելի ժամկետով կնքվող պայմանագրերի) Ավտոտրանսպորտային միջոցի գծով կնքվող պայմանագրերում, իսկ այլ դեպքերում՝ միայն Ապահովագրի կողմից ներկայացվելու դեպքում)՝ «Ապահովագրին պատկանող բանկային հաշվեհամար» բառերի և բանկի անվանման պարտադիր նշումով: 4) Բոնուս-Մալուս դասը և դասի վերջին փոփոխման ամսաթիվը
3.	Վկայագրով մեկ Ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվություն ապահովագրվելու դեպքում լրացվում են Ավտոտրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշը Հայաստանի Հանրապետությունում և Արցախի Հանրապետությունում հաշվառված Ավտոտրանսպորտային միջոցների դեպքում, իսկ մնացած Ավտոտրանսպորտային միջոցների դեպքում՝ օտարերկրյա հաշվառման համարանիշը, դրա բացակայության դեպքում Ավտոտրանսպորտային միջոցի ժամանակավոր հաշվառման համարանիշը, դրա բացակայության դեպքում նույնացման համարը (VIN), իսկ վերջինի բացակայության դեպքում՝ թափքի համարը), Հայաստանի Հանրապետությունից և Արցախի Հանրապետությունից բացի ցանկացած այլ երկրում հաշվառված Ավտոտրանսպորտային միջոցի դեպքում՝ նաև 1968 թվականի նոյեմբերի 8-ի «Ճանապարհային երթևեկության մասին» կոնվենցիայի 45-րդ հոդվածով սահմանված կարգով տվյալ երկրի կողմից ընտրված տարբերանշանը՝ ենթագրով (subscript, օրինակ՝ «_{RUS} H847XC177»), Ավտոտրանսպորտային միջոցի տեսակը, շարժիչի հզորությունը և դրա օգտագործման նպատակը: Համապատասխան ծրագրային լուծմամբ կարող է նախատեսվել, որ այն Ավտոտրանսպորտային միջոցների տեսակների գծով, որոնց օգտագործման բոլոր նպատակների համար ԱՊՊԱ ապահովագրավճարի հաշվարկում կիրառվում է միևնույն գործակիցը, Ավտոտրանսպորտային միջոցի օգտագործման նպատակը չի լրացվում (ավտոմատ կերպով դրվում է գծիկ նշան): Վկայագրով մեկից ավելի Ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվություն ապահովագրվելու դեպքում Վկայագրում լրացվում է Ավտոտրանսպորտային միջոցների քանակը, իսկ Վկայագրի հավելվածում յուրաքանչյուր Ավտոտրանսպորտային միջոցի համար լրացվում է սույն կետով մեկ Ավտոտրանսպորտային միջոցի համար սահմանված տվյալները, ընդ որում՝ Վկայագրի հավելվածի տողերն ավելացվում են Ավտոտրանսպորտային միջոցների քանակին համապատասխան: Որպես Ավտոտրանսպորտային միջոցի տեսակ ավտոբուս (ներառյալ միկրոավտոբուս) կամ տրոլեյբուս նշվելու դեպքում լրացվում է նաև դրա՝ առանց վարորդի նստատեղի հաշվարկված նստատեղերի քանակի մասին տեղեկատվությունը՝ համապատասխանաբար հետևյալ եղանակներից

մեկով՝ 1) առանց վարորդի նստատեղի՝ մինչև 17 (ներառյալ) նստատեղ ունեցող կամ 2) առանց վարորդի նստատեղի՝ 17-ից ավելի նստատեղ ունեցող: Ընդ որում, տրոլեյբուսի դեպքում նստատեղերի քանակի մասին տեղեկատվությունը մշտապես լրացվում է 2-րդ եղանակով: Որպես Ավտոտրանսպորտային միջոցի օգտագործման նպատակ հիմք է ընդունվում հետևյալ նպատակներից որևէ մեկը (մի քանի նպատակով օգտագործվելու դեպքում նշվում է այն նպատակը, որի համար ԱՊՊԱ ապահովագրավճարի հաշվարկում կիրառվում է ավելի բարձր գործակից)՝	
Պայմանագրի գործողության ընթացքում Ավտոտրանսպորտային միջոցի օգտագործման նպատակ	Նպատակի նկարագրություն
1. Անձնական	Ֆիզիկական անձանց պատկանող Ավտոտրանսպորտային միջոցներ, որոնք չեն օգտագործվելու սույն մասի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ կետերում նշված նպատակներով
2. Ծառայողական	Ֆիզիկական անձանցից բացի ցանկացած այլ անձին պատկանող Ավտոտրանսպորտային միջոցներ, որոնք չեն օգտագործվելու սույն մասի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ կետերում նշված նպատակներով
3. Առևտրային	Ավտոտրանսպորտային միջոցն օգտագործվելու է նաև ապրանքների փոխադրման և (կամ) ծառայությունների մատուցման նպատակով
4. Հանրային տրանսպորտ	Ավտոտրանսպորտային միջոցն օգտագործվելու է նաև կանոնավոր ուղևորափոխադրումներ կատարելու նպատակով
5. Պատվերով ուղևորափոխադրումներ	Ավտոտրանսպորտային միջոցն օգտագործվելու է նաև պատվերով ուղևորափոխադրումներ իրականացնելու համար, ընդ որում, Ավտոտրանսպորտային միջոցը, անկախ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիայի առկայության, համարվում է սույն ենթակետով նախատեսված նպատակով օգտագործվող նաև այն դեպքերում, եթե տվյալ Ավտոտրանսպորտային միջոցը ներառված է ուղևորների փոխադրման պատվերների ստացման համար նախատեսված հատուկ էլեկտրոնային հարթակներում (ներառյալ բջջային հավելվածներում) կամ Ավտոտրանսպորտային

		միջոցի վրա առկա է կահավորման որևէ տարր, որը հանրության մոտ առաջացնում է ուղևորափոխադրման ծառայությունների մատուցման վերաբերյալ ընկալում (օրինակ՝ հետևյալ տարրերից որևէ մեկը՝ ուղևորների փոխադրման պատվերների ստացման համար նախատեսված հատուկ էլեկտրոնային հարթակների տարբերանշան, կիլոմետրի արժեք, տաքսամետր (սակաչափիչ), տանիքին, դիմապակու վրա կամ որևէ այլ մասում՝ «SU-FUH» (հայերեն կամ օտար լեզվով) գրառում կամ շախմատաձև դեղին և սև տարբերանշան և այլն): (փոփ. է 31/08/2021թ թիվ 30-Լ)
	6. Վարձակալություն	Ավտոտրանսպորտային միջոցը կարող է տրվել նաև վարձակալությամբ:
4.	պայմանագրի գործողության ժամկետի սկիզբը և ավարտը՝ համապատասխանաբար օր/ամիս/տարի/ժամ և օր/ամիս/տարի ֆորմատներով և հաջորդականությամբ:	
5.	«Ապահովագրավճար առանց ԲՄ դասի» բառերը, որը սույն կանոնների համաձայն հաշվարկված տվյալ պայմանագրի ապահովագրավճարի մեծությունն է՝ առանց ԲՄ դասը հաշվի առնելու և առանց կլորացման, Առանց ԲՄ դասի ապահովագրավճարի չափը՝ «գծիկ, թվերով արտահայտված գումար, գծիկ, ՀՀ դրամ»՝ առանց բացատների ֆորմատով, «Բոնուս» կամ «Մալուս» բառը՝ կախված այն հանգամանքից, թե ապահովագրին տրվում է բոնուս, թե՞ մալուս, Ապահովագրի Բոնուս-Մալուս դասի գործակցի կիրառման արդյունքում ապահովագրավճարի չափին ավելացման կամ նվազեցման ենթակա գումարի մեծությունը՝ «գծիկ, թվերով արտահայտված գումար, գծիկ, ՀՀ դրամ»՝ առանց բացատների ֆորմատով, «Վճարման ենթակա ապահովագրավճար» բառերը և Ապահովագրի կողմից տվյալ պայմանագրով վճարման ենթակա ապահովագրավճարի մեծությունը՝ գծիկ, թվերով արտահայտված գումար, գծիկ, ՀՀ դրամ՝ առանց բացատների ֆորմատով (օրինակ՝ Ապահովագրավճար առանց ԲՄ դասի՝ -45708-ՀՀ դրամ, Բոնուս՝ -2742-ՀՀ դրամ, վճարման ենթակա ապահովագրավճար՝ -43000-ՀՀ դրամ): Այն դեպքում, երբ պայմանագրով ապահովագրվում է մեկից ավելի Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվությունը, այս մասում նշվում են բոլոր Ավտոտրանսպորտային միջոցների համար հաշվարկված առանց ԲՄ դասի ապահովագրավճարների հանրագումարը, տրամադրվող բոնուսի կամ մալուսի չափը և վճարման ենթակա ապահովագրավճարների հանրագումարը, իսկ յուրաքանչյուր Ավտոտրանսպորտային միջոցի համար համապատասխան տեղեկատվությունը նշվում է Վկայագրին կցվող հավելվածի համապատասխան դաշտում:	

6.	ապահովագրավճարի վճարման կարգը, մասնավորապես նշվում է հետևյալ տարբերակներից որևէ մեկը՝ 1) միանվագ կամ տարաժամկետ վճարում, ընդ որում՝ սույն կանոններով նախատեսված դեպքերում ապահովագրավճարը ԱՊՊԱ պայմանագրի կնքման պահին չվճարվելու և տարաժամկետ վճարման տարբերակ ընտրելու դեպքերում Վկայագրում նշվում է նաև ապահովագրավճարի կամ դրա տարաժամկետվող մասի վճարման կարգն ու ժամկետները, 2) կանխիկ կամ անկանխիկ, ընդ որում ԱՊՊԱ պայմանագրի կնքման պահին ապահովագրավճարը (դրա մի մասը) սույն կանոններով նախատեսված կարգով «Կանխիկ» վճարման տարբերակով կնքվելու դեպքում Վկայագրում նշվում է նաև տվյալ պահին փաստացի սույն կանոններով սահմանված եղանակներով կանխիկ վճարված ապահովագրավճարի չափը:		
8.	ապահովագրողի՝ շուրջօրյա հասանելի, առնվազն երեք միաժամանակյա զանգի սպասարկման հնարավորություն ապահովող առնվազն մեկ հեռախոսահամար, որով Ապահովադիրը (Ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը) կարող է զանգահարել Ապահովագրողին՝ ապահովագրական պատահարի մասին հայտնելու համար:		
9.	9.1	<i>Ապահովագրողի անունից հանդես եկող անձի տեսակը</i>	<i>Ապահովագրողի անունից հանդես եկող անձի վերաբերյալ տվյալները</i>
		1) Ապահովագրողի գործադիր մարմնի ղեկավար	Գործադիր մարմնի ղեկավարի անունը, ազգանունը, ստորագրությունը և Ապահովագրողի կնիքն՝ առկայության դեպքում: Վկայագրի՝ Ապահովադիրի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվող էլեկտրոնային տարբերակում՝ միայն գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը: Ընդ որում, Ապահովադիրների կողմից առցանց էլեկտրոնային եղանակով ԱՊՊԱ պայմանագրի կնքվելու դեպքերում «ստորագրություն» դաշտը չի արտացոլվում (լրաց. է 28/04/2020թ թիվ 10-Լ)
		2) Ապահովագրողի գործադիր մարմնի ղեկավար չհանդիսացող այլ լիազորված ֆիզիկական անձ (կիրառելի չէ Ապահովադիրների կողմից առցանց	Տվյալ լիազորված ֆիզիկական անձի անունը, ազգանունը, ստորագրությունը, անձնագրային տվյալները, լիազորագրի համարը և տրման ամսաթիվը, և Ապահովագրողի հայեցողությամբ կարող է դրվել Ապահովագրողի կնիքը: Վկայագրի՝ Ապահովադիրի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվող էլեկտրոնային

		էլեկտրոնային եղանակով ԱՊՊԱ պայմանագիր կնքվելու դեպքերում)	տարբերակում ստորագրություն չի դրվում (լրաց. է 28/04/2020թ թիվ 10-Լ)
		3) Ֆիզիկական անձ (բացառությամբ անհատ ձեռնարկատեր) ապահովագրական գործակալ (կիրառելի չէ Ապահովագրիչների կողմից առցանց էլեկտրոնային եղանակով ԱՊՊԱ պայմանագիր կնքվելու դեպքերում)	Անունը, ազգանունը, որպես գործակալ հաշվառման վկայականի համարը (տրվելու դեպքում), ստորագրությունը, և Ապահովագրողի հայեցողությամբ կարող է դրվել Ապահովագրողի կնիքը: Վկայագրի՝ Ապահովագրիչի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվող էլեկտրոնային տարբերակում ստորագրություն չի դրվում (լրաց. է 28/04/2020թ թիվ 10-Լ)
		4) Իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր ապահովագրական գործակալ (կիրառելի չէ Ապահովագրիչների կողմից առցանց էլեկտրոնային եղանակով ԱՊՊԱ պայմանագիր կնքվելու դեպքերում)	Անվանումը, իրավասություն ունեցող անձի անունը, ազգանունը և ստորագրությունը (կնիքն՝ առկայության դեպքում), և Ապահովագրողի հայեցողությամբ կարող է դրվել Ապահովագրողի կնիքը: Վկայագրի՝ Ապահովագրիչի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվող էլեկտրոնային տարբերակում կնիք և ստորագրություն չեն դրվում (լրաց. է 28/04/2020թ թիվ 10-Լ)
	9.2	Ապահովագրի անունից հանդես եկող անձի տեսակը	Ապահովագրի անունից հանդես եկող անձի վերաբերյալ տվյալները
		1) Ֆիզիկական անձ ապահովագրիչ	անունը, ազգանունը և ստորագրությունը: Վկայագրի՝ Ապահովագրիչի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվող էլեկտրոնային տարբերակում ստորագրություն չի դրվում: Ընդ որում, Ապահովագրիչների կողմից առցանց էլեկտրոնային եղանակով ԱՊՊԱ պայմանագիր կնքվելու դեպքերում

			համաձայնության վերաբերյալ դրույթը և ստորագրությունը պարունակող դաշտերը չեն արտացոլվում (լրաց. է 28/04/2020թ թիվ 10-Լ)
		2) Իրավաբանական անձ ապահովադիր	անունը և ազգանունը, ստորագրությունը և կազմակերպության կնիքն՝ առկայության դեպքում: Վկայագրի՝ Ապահովադրի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվող էլեկտրոնային տարբերակում ստորագրություն և կնիք չեն դրվում: Ընդ որում, Ապահովադիրների կողմից առցանց էլեկտրոնային եղանակով ԱՊՊԱ պայմանագիր կնքվելու դեպքերում համաձայնության վերաբերյալ դրույթը և ստորագրությունը պարունակող դաշտերը չեն արտացոլվում (լրաց. է 28/04/2020թ թիվ 10-Լ)
		3) Ապահովադրի ներկայացուցիչ	անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, լիազորագրի համարը և (կամ) տրման ամսաթիվը և ներկայացուցչի ստորագրությունը: Վկայագրի՝ Ապահովադրի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվող էլեկտրոնային տարբերակում ստորագրություն չի դրվում: (լրաց. է 28/04/2020թ թիվ 10-Լ)
10.	Ապահովադիրին Վկայագիրը տալու ամսաթիվը՝ օր/ամիս/տարի ֆորմատով և հաջորդականությամբ:		
11.	«Է կնքել» կամ «չի կնքել» բառերը՝ կախված այն հանգամանքից, թե այդ տարբերակներից որն է կիրառելի Ապահովագրողի նկատմամբ:		
12.	1) «Կրկնօրինակ» բառը, երբ սույն կանոնների համաձայն Ապահովադիրին տրվում է Վկայագրի կրկնօրինակը, 2) «Սույն պայմանագիրը կնքվել է կողմերի միջև էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցով և դրա՝ սույն կանոններով նախատեսված տեխնիկական պահանջներին բավարարող էլեկտրոնային տարբերակն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ կողմերի կողմից ձեռագիր ստորագրված փաստաթուղթը» բառերը՝ Ապահովադիրների կողմից առցանց էլեկտրոնային եղանակով ԱՊՊԱ պայմանագիր կնքվելու դեպքում Վկայագրի՝ Ապահովադրի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվող էլեկտրոնային տարբերակում, 3) «Սույն վկայագիրը թղթային եղանակով ստորագրված վկայագրի էլեկտրոնային տարբերակն է» բառերը՝ Ապահովադիրների կողմից առցանց էլեկտրոնային եղանակից տարբերվող ցանկացած եղանակով ԱՊՊԱ պայմանագիր կնքվելու դեպքում Վկայագրի՝ Ապահովադրի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվող էլեկտրոնային տարբերակում:		

Վկայագրի հավելվածը, ինչպես նաև ԱՊՊԱ պայմանագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ համաձայնագիրը լրացվում են սույն հրահանգով Վկայագրի համապատասխան կետերով նախատեսված դաշտերի լրացման համար սահմանված կանոններին համապատասխան:

1. Սույն ենթահավելվածով սահմանվում է ԱՊՊԱ պայմանագրերի հաշվառման կարգը:

2. Վկայագիրն ունի ծածկագիր, որը բաղկացած է սերիայից և համարից, ընդ որում՝ սկզբից նշվում է սերիան, այնուհետև՝ համարը: Սերիան պարունակում է 2 նիշ, իսկ համարը՝ 6 նիշ՝ սկսած 000001-ից: Վկայագրի ծածկագրերը չեն կրկնվում, անգամ եթե տվյալ ԱՊՊԱ պայմանագիրն այլևս ուժի մեջ չէ:

3. Սերիայի նիշերը մեծատառ են և լատինատառ: Սերիայի առաջին նիշը սահմանվում է «S», որի բոլոր հնարավոր համակցությունների օգտագործումից հետո առաջին նիշը սահմանվում է՝ ըստ լատինական այբուբենի այբբենական հերթականության՝ սկսվելով «A»-ից և չներառելով «S» տառը: Երկրորդ նիշը համապատասխանաբար փոփոխվում է ըստ լատինական այբուբենի այբբենական հերթականության (SA, SB, SC ... SZ, AA, AB, AC, ..., AZ, BA, BB, BC, ..., BZ և այլն):

4. Վկայագրի սերիաները տրամադրվում են ԱՄՄՊ համակարգի կողմից ինքնաշխատ եղանակով: Ընդ որում, յուրաքանչյուր Ապահովագրողի տրամադրվում է առանձին սերիա՝ հերթական համարի բոլոր հնարավոր համակցություններով:

5. Ապահովագրողին տրամադրված սերիայի համարների բոլոր հնարավոր համակցություններն օգտագործվելու դեպքում ԱՄՄՊ համակարգի կողմից ինքնաշխատ տրամադրվում է բոլոր Ապահովագրողներին տրամադրված սերիաներին հաջորդող հերթական չօգտագործված սերիան՝ համապատասխան Ապահովագրողին ծանուցելով հերթական սերիայի տրամադրման վերաբերյալ:

6. Ապահովագրողները վարում են իրենց կողմից կնքված Վկայագրերի, ինչպես նաև վնասված, խոտանված, կորած, հափշտակված և ոչնչացված Վկայագրերի ներքին հաշվառում:

ՀԱՎԵԼՎԱԾ 2.2. ԱՊՊԱ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՊԱՀՈՎԱԴՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ

		N	Ապահովադրի կողմից ներկայացվող փաստաթղթերի ցանկը	Ապահովադրի կողմից ներկայացվող (հայտարարվող) տեղեկությունների ցանկը
Ապահովադրի վերաբերյալ	Ֆիզիկական անձանց համար	1	Անձը հաստատող փաստաթուղթ	1. Ապահովադրի էլեկտրոնային փոստի հասցե, 2. Ապահովադրի հաշվառման (գտնվելու) հասցե, 3. Ապահովադրի հեռախոսահամար, 4. Ապահովադրին կամ, սույն կանոններով նախատեսված դեպքերում, վերջինի կողմից նոտարական կարգով վավերացված լիազորագրով տրամադրված համապատասխան լիազորություններ ունեցող անձին պատկանող բանկային հաշվեհամար (ենթակա է ներկայացման միայն Վկայագրում պարտադիր լրացման ենթակա լինելու դեպքում) 5. Ավտոտրանսպորտային միջոցի օգտագործման նպատակ, 6. ապահովագրության ժամկետ
		2	ՀՀ քաղաքացիների դեպքում, եթե ներկայացված անձը հաստատող փաստաթուղթը չի պարունակում հանրային ծառայությունների համարանիշ, ապա այդ համարանիշը պարունակող փաստաթուղթ (սոցիալական ապահովության քարտ կամ համապատասխան տեղեկանք) կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանք	
	Իրավաբանական անձաց համար	1	Հարկ վճարողի հաշվառման համարը պարունակող փաստաթուղթ	
	Այլ սուբյեկտների համար			
Ավտոտրանսպորտային միջոցի (միջոցների) վերաբերյալ		1	Հաշվառման (գրանցման) վկայագիր կամ այլ համարժեք փաստաթուղթ կամ մաքսային հայտարարագիր և Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասով սահմանված անձ համարվելու փաստը հավաստող փաստաթղթեր (սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական, լիզինգի պայմանագիր և այլն), եթե հաշվառման (գրանցման) վկայագրով	

		կամ այլ համարժեք փաստաթղթով կամ մաքսային հայտարարագրով ԱՊՊԱ պայմանագիր կնքելու իրավասությունը չի հաստատվում: Այլ անձին սեփականության իրավունքի փոխանցման գործընթացում գտնվող Ավտոտրանսպորտային միջոցների գծով ԱՊՊԱ պայմանագրի կնքման համար հաշվառման (գրանցման) վկայագրի փոխարեն ներկայացվում է իրավասու պետական մարմնի կողմից տվյալ Ավտոտրանսպորտային միջոցին հատկացված հաշվառման համարանիշը	
	2	Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասով սահմանված անձ համարվելու փաստը հավաստող փաստաթղթեր (սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական, լիզինգի պայմանագիր և այլն)	
Ներկայացուցչի վերաբերյալ	1	Անձը հաստատող փաստաթուղթ	
	2	Ապահովագրի կողմից տրված ԱՊՊԱ պայմանագրի կնքման լիազորությունները հավաստող հասարակ, գրավոր ձևով կազմված լիազորագիր	

Հավելված 3
«ԱՊՊԱ ընդհանուր պայմաններ» կանոնների

ԱՊՊԱ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԳԼՈՒԽ 1. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն հավելվածով սահմանվում են՝
 - 1) ԱՊՊԱ ոլորտում ապահովագրավճարների հաշվարկման կարգը,
 - 2) հիմնական և բազային ապահովագրավճարների առավելագույն սահմանաչափերը,
 - 3) ռիսկայնության գործակիցների թույլատրելի արժեքները,
 - 4) Բոնուս-Մալուս (այսուհետ՝ ԲՄ) համակարգի կիրառման կարգը, ԲՄ գործակիցների մեծությունները,
 - 5) Ապահովագրողների կողմից ապահովագրավճարների սահմանման և դրա կիրառման գործընթացի նկատմամբ նվազագույն պահանջները:

ԳԼՈՒԽ 2. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

2. ԱՊՊԱ պայմանագրում նշված յուրաքանչյուր ավտոտրանսպորտային միջոցի գծով ապահովագրավճարը հաշվարկում է Օրենքով սահմանված բանաձևի հիման վրա՝ հաշվարկի հիմքում դնելով տվյալ ՊԿԱ-ի՝ սահմանված կարգով Բյուրոյի հավանությունն ստացած ԱՊՊԱ ոլորտում կիրառվող ապահովագրավճարների գնագոյացման մոդելը, ինչպես նաև ԱՊՊԱ պայմանագրի ժամկետից կախված կիրառելով տվյալ մոդելով նախատեսված համապատասխան կարգավորիչ գործակիցը: Ընդ որում, եթե Բյուրոյի կողմից ՊԿԱ-ի՝ ԱՊՊԱ ոլորտում կիրառվող ապահովագրավճարների գնագոյացման մոդելին հավանություն տրամադրելուց հետո սույն կանոններում կատարվում են այնպիսի փոփոխություններ, որոնց հակասում է այդ մոդելը, ապա ապահովագրավճարի հաշվարկն այդ մասով կատարվում է սույն կանոնների համաձայն (համապատասխան մասով մոդելը համարվում է փոփոխված):

ԳԼՈՒԽ 3. ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒ ԲԱԶԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՍԱՀՄԱՆԱԶԱՓԸ ԵՎ ՌԻՍԿԱՅԵՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԻ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ԱՐԺԵՔՆԵՐԸ

3. ԱՊՊԱ ոլորտում կիրառվող հիմնական և բազային ապահովագրավճարների տարեկան առավելագույն սահմանաչափերն են՝

Աղյուսակ 2

Ցուցանիշի անվանումը	Առավելագույն սահմանաչափը
Հիմնական ապահովագրավճար (ՀԱ)	41,000 ՀՀ դրամ
Բազային ապահովագրավճար	ՀԱ x 2,5

4. ՊԿԱ-ն ապահովագրավճարի հաշվարկում դնում է իր՝ սահմանված կարգով Բյուրոյի հավանությունն ստացած ԱՊՊԱ ոլորտում կիրառվող ապահովագրավճարների գնագոյացման մոդելում նշված ռիսկայնության գործակիցներին տրված արժեքները, որոնք սահմանվել են՝ ելնելով առկա վիճակագրական տվյալներից և ապագայի նկատմամբ հուսալի ակտուարական կանխատեսումներից՝ ապահովելով ապահովագրության մեջ համարժեքության սկզբունքի պահպանումը:

5. Ապահովագրավճարի հաշվարկում ՊԿԱ-ն բացի Օրենքով նախատեսված ռիսկայնության գործոններից կարող է դնել նաև Ապահովադրին, Ավտոտրանսպորտային միջոցին կամ դրա օգտագործմանը վերաբերող այլ գործոններ, եթե դրանք ներառված են իր՝ սահմանված կարգով Բյուրոյի հավանությունն ստացած ԱՊՊԱ ոլորտում կիրառվող ապահովագրավճարների գնագոյացման մոդելում և բավարարում են Օրենքով սահմանված համապատասխան նվազագույն պահանջներին:

ԳԼՈՒԽ 4. ԲՄ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԲՄ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԻ ԱՐԺԵՔՆԵՐԸ

6. ԲՄ համակարգը կիրառվում է ԱՊՊԱ պայմանագրում սահմանված ապահովադրի նկատմամբ: Ընդ որում, Հայաստանի Հանրապետության, համայնքի և օտարերկրյա պետության անունից կնքված պայմանագրերի գծով որպես ապահովադիր սույն հավելվածի իմաստով դիտարկվում է նրանց անունից ԱՊՊԱ պայմանագիրը կնքած մարմինը:

7. Առաջին անգամ ԱՊՊԱ պայմանագիր կնքելու դեպքում ապահովադրին տրվում է ԲՄ բազիսային դասը: Առաջին ԱՊՊԱ պայմանագրի կնքումից հետո (անկախ հետագայում ԱՊՊԱ պայմանագրի կնքման հանգամանքից) ապահովադրի ԲՄ դասը սույն հավելվածի աղյուսակ 2-ով նախատեսված ԲՄ_{փոփ} հաշվարկման համար պայմաններից որևէ մեկի առկայության դեպքում պայմանի առաջացման ամսաթվին վերահաշվարկվում է հետևյալ բանաձևի հիման վրա (մնացած ժամանակահատվածում ապահովադրի ԲՄ դաս է համարվում վերջին անգամ վերահաշվարկված ԲՄ դասը)՝

$$\text{ԲՄ} = \text{ԲՄ}_{\text{նախ}} + \text{ԲՄ}_{\text{փոփ}}$$

որտեղ կատարված են հետևյալ նշանակումները՝

Աղյուսակ 2

ԲՄ	Ապահովադրի ԲՄ դասն է	
ԲՄ_{նախ}	Ապահովադրի՝ վերջին անգամ վերահաշվարկված ԲՄ դասն է	
ԲՄ_{փոփ}	ԲՄ դասի փոփոխությունն է, որը հաշվարկվում է հետևյալ եղանակով՝	
	$\text{ԲՄ}_{\text{փոփ}} =$	(+ U), եթե $J \geq 0,412$ (0), եթե $0.103 < J < 0.412$ (-1), եթե Ապահովադրի ԲՄ դասի վերջին վերահաշվարկի ամսաթվից հետո անցել է 365 պայմանագրային օր, և այդ օրը $J \leq 0,103$
	որտեղ կատարված են հետևյալ նշանակումները՝	
	U	մալուսային դասերի քանակն է և հավասար է J կարգավորող գործակցին՝ դրա կոտորակային մասը մինչև ամբողջական թիվ կլորացված (0.412-ից փոքր նիշերը կլորացվում են դեպի ներքև, իսկ մեծ կամ հավասար նիշերը՝ դեպի վերև)
	J	կարգավորող գործակիցն է և հաշվարկվում է հետևյալ բանաձևի հիման վրա
	$J = (K_1/C_1 + \dots + K_n/C_n)$ որտեղ կատարված են հետևյալ նշանակումները՝	
	K_n	Ապահովադրի ԲՄ դասի վերջին վերահաշվարկից հետո տեղի ունեցած n-րդ ԲՄ դեպքի համար հետևյալ սկզբունքի հիման վրա հաշվարկվող գործակից է (ԲՄ դեպքի բացակայության դեպքում տվյալ գործակիցը հավասար է 0-ի).

		1) Եթե ԲՄ դեպքի հիմք հանդիսացող պատահարը տեղի է ունեցել մինչև 2022 թվականի մարտի 1-ը, ապա $K = 4$, 2) Եթե ԲՄ դեպքի հիմք հանդիսացող պատահարը տեղի է ունեցել 2022 թվականի մարտի 1-ին կամ դրանից հետո, ապա՝ ա. $K = 3$, եթե ԲՄ դեպքի հիման վրա տվյալ Ապահովագրի կողմից կնքված պայմանագրում նշված Ավտոտրանսպորտային միջոցով պատճառած վնասի համար վճարման ենթակա հատուցման գումարը չի գերազանցում 100,000 ՀՀ դրամը, բ. $K = 4$, եթե ԲՄ դեպքի հիման վրա տվյալ Ապահովագրի կողմից կնքված պայմանագրում նշված Ավտոտրանսպորտային միջոցով պատճառած վնասի համար վճարման ենթակա հատուցման գումարը գերազանցում է 100,000 ՀՀ դրամը, սակայն չի գերազանցում 200,000 ՀՀ դրամը, գ. $K = 5$, եթե ԲՄ դեպքի հիման վրա տվյալ Ապահովագրի կողմից կնքված պայմանագրում նշված Ավտոտրանսպորտային միջոցով պատճառած վնասի համար վճարման ենթակա հատուցման գումարը գերազանցում է 200,000 ՀՀ դրամը, սակայն չի գերազանցում 500,000 ՀՀ դրամը, դ. $K = 6$, եթե ԲՄ դեպքի հիման վրա տվյալ Ապահովագրի կողմից կնքված պայմանագրում նշված Ավտոտրանսպորտային միջոցով պատճառած վնասի համար վճարման ենթակա հատուցման գումարը գերազանցում է 500,000 ՀՀ դրամը, սակայն չի գերազանցում 1,000,000 ՀՀ դրամը, ե. $K = 7$, եթե ԲՄ դեպքի հիման վրա տվյալ Ապահովագրի կողմից կնքված պայմանագրում նշված Ավտոտրանսպորտային միջոցով պատճառած վնասի համար վճարման ենթակա հատուցման գումարը գերազանցում է 1,000,000 ՀՀ դրամը, սակայն չի գերազանցում 1,800,000 ՀՀ դրամը, զ. $K = 8$, եթե ԲՄ դեպքի հիման վրա տվյալ Ապահովագրի կողմից կնքված պայմանագրում նշված Ավտոտրանսպորտային միջոցով պատճառած վնասի համար վճարման ենթակա հատուցման գումարը գերազանցում է 1,800,000 ՀՀ դրամը: Ընդ որում, սույն բանաձևում կիրառվող տարրերի համար. 1) ԲՄ դեպք է համարվում ԱՊՊԱ ոլորտում Ապահովագրողի կողմից ամբողջությամբ կամ մասամբ ապահովագրական հատուցում վճարելու որոշման ուժի մեջ մտնելը, որը պայմանավորված է տվյալ Ապահովագրի կողմից կնքված պայմանագրում նշված որևէ ավտոտրանսպորտային միջոցով 2012 թվականի դեկտեմբերի 31-ից հետո պատճառած վնասի հատուցման հետ, բացառությամբ այն որոշումների, որոնք կայացվել են 2019 թվականի ապրիլի 1-ից հետո տեղի ունեցած ԱՊՊԱ պատահարների գծով, և որոնց հիման վրա վճարված ողջ գումարը, ինչպես նաև հատուցման վճարման և (կամ) հետադարձ պահանջի իրականացման գծով տվյալ Ապահովագրողի կողմից պարտապաններից գանձվող այլ ծախսերը (փորձաքննությունների
--	--	--

	վճարներ, դատական ծախսեր, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսներ և այլն) վերադարձվել են Ապահովագրողին՝ սույն կանոնների 18-րդ գլխով նախատեսված հետադարձ պահանջի (սուբրոգացիայի) իրավունքի առկայության հիմքով: ԲՄ դեպք չեն համարվում այն ապահովագրական հատուցում վճարելու վերաբերյալ որոշում կայացնելու դեպքերը, որոնք պայմանավորված են պետության կարիքների հիման վրա օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովադրի տիրապետությունից դուրս եկած ավտոտրանսպորտային միջոցով նշված հիմքով տիրապետությունից դուրս գտնվելու ժամանակահատվածում պատճառված վնասների հատուցման հետ, ընդ որում, նշված դեպքերը ԲՄ դեպքերի մեջ չներառելու համար Ապահովադրի կողմից պետք է ներկայացվեն համապատասխան հիմքերի առկայության փաստը հավաստող փաստաթղթերը: 2) Միևնույն պատահարի շրջանակներում տվյալ Ապահովադրի կողմից կնքված պայմանագրում նշված որևէ Ավտոտրանսպորտային միջոցով (միջոցներով) պատճառած վնասների գծով մեկից ավելի հատուցման որոշում ուժի մեջ մտնելու դեպքում դրանք դիտարկվում են որպես մեկ ԲՄ դեպք, իսկ որպես K գործակցի հաշվարկման հիմքում դրված ապահովագրական հատուցման չափ ընդունվում է տվյալ պահին ուժի մեջ մտած բոլոր որոշումների հիման վրա վճարման ենթակա հատուցման գումարների հանրագումարը: 3) Մի քանի անձանց կողմից պատճառված վնասի հատուցման դեպքում K գործակցի հաշվարկման հիմքում դրված ապահովագրական հատուցման չափի որոշման համար կիրառվում են հետևյալ սկզբունքները. ա. Եթե ապահովագրական հատուցում վճարելու վերաբերյալ որոշմամբ կամ դրա հիմքում դրված փորձագիտական եզրակացությամբ տարանջատված է այն վնասի չափը, որը պատճառվել է տվյալ Ապահովադրի կողմից կնքված ԱՊՊԱ պայմանագրում (պայմանագրերում) նշված Ավտոտրանսպորտային միջոցի (միջոցների) օգտագործմամբ, ապա որպես վճարման ենթակա հատուցման չափ հիմք է ընդունվում այդ չափը, բ. Եթե ապահովագրական հատուցում վճարելու վերաբերյալ որոշմամբ և դրա հիմքում դրված փորձագիտական եզրակացությամբ տարանջատված չէ այն վնասի չափը, որը պատճառվել է տվյալ Ապահովադրի կողմից կնքված ԱՊՊԱ պայմանագրում (պայմանագրերում) նշված Ավտոտրանսպորտային միջոցի (միջոցների) օգտագործմամբ, ապա որպես վճարման ենթակա հատուցման չափ հիմք է ընդունվում ընդհանուր հատուցման գումարի և վնաս պատճառած անձանց քանակի հարաբերակցությունը:
--	--

	C _n	Ապահովադրի ԲՄ դասի վերջին վերահաշվարկից հետո տեղի ունեցած n-րդ ԲՄ դեպքի հիմք հանդիսացող պատահարի պահին Ապահովադրի անունից կնքված և գործող ԱՊՊԱ պայմանագրերում նշված ՏՄ-ների քանակն է:
	Պայմանագրային օր	2012 թվականի դեկտեմբերի 31-ից հետո ընկած օրերի քանակ, որոնց ընթացքում առկա է եղել Ապահովադրի կողմից կնքված ԱՊՊԱ պայմանագիր (պայմանագրեր):

8. Միջին կամ բարձր ռիսկային դասում գտնվող և վերջին 1460 պայմանագրային օրվա ընթացքում անընդմեջ ընդհանուր առմամբ (-4) դաս ստացած Ապահովադիրը վերջին բոնուսային դասի ստացման ամսաթվին ստանում է ԲՄ բազիսային դասը:

9. ԲՄ դասի հաշվարկն իրականացվում է ապահովադիրների վերաբերյալ Տեղեկատվական համակարգում առկա տեղեկատվության հիման վրա:

10. ԲՄ դասին համապատասխանող գործակիցների մեծություններն են՝

Աղյուսակ 3

ԲՄ խումբը	ԲՄ դասը	ԲՄ գործակցին համապատասխանող մեծությունը
Բարձր ռիսկային	25	300%
	24	300%
	23	290%
	22	270%
	21	250%
	20	250%
	19	230%
Միջին ռիսկային	18	200%
	17	160%
	16	150%
	15	140%
	14	130%
	13	125%
	12	115%
	11	110%
Բազիսային	10	100%
Ցածր ռիսկային	9	97%
	8	94%
	7	91%
	6	88%
	5	85%
	4	82%
	3	75%
	2	65%
	1	50%

11. Ապահովադրի ԲՄ դասի հաշվարկման ժամանակ սույն գլխով սահմանված հանգամանքները հիմք են ընդունվում՝ անկախ ավտոտրանսպորտային միջոցի կամ ապահովագրական ընկերության փոփոխման հանգամանքից:

ԳԼՈՒԽ 5. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԵՎ ԴՐԱ ԿԻՐԱՌՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

12. Ապահովագրողը ցանկացած անձի պահանջով պարտավոր է տրամադրել վերջինի կողմից տվյալ Ավտոտրանսպորտային միջոցի գծով տվյալ պահին կնքման ենթակա կամ արդեն կնքված ԱՊՊԱ պայմանագրով ապահովագրավճարի չափի հաշվարկման տրամաբանությունը:

13. Ապահովագրողներն սույն կանոններով նախատեսված պայմանների շրջանակներում ինքնուրույն են որոշում և սահմանում ապահովագրավճարների տարաժամկետ վճարման հնարավորությունները և կարգը:

14. Ապահովագրողներն իրենց պաշտոնական ինտերնետային կայքում մշտապես հրապարակում են տվյալ պահի դրությամբ իրենց կողմից կիրառվող՝

1) հիմնական և բազային ԱՊՊԱ ապահովագրավճարների նվազագույն և առավելագույն չափերը,

2) ռիսկայնության գործոնները,

3) ԱՊՊԱ պայմանագրի ժամկետից կախված կիրառվող կարգավորիչ գործակիցները,

4) ԱՊՊԱ ապահովագրավճարի տարաժամկետ վճարման հնարավորությունները,

5) ԱՊՊԱ ապահովագրավճարի էլեկտրոնային հաշվիչը, որով ցանկացած անձ կկարողանա սույն հավելվածով նախատեսված՝ ապահովագրավճարի մեծության վրա ազդող պայմանների կամ իրեն ու համապատասխան ավտոտրանսպորտային միջոցը նույնականացնող տվյալների մուտքագրմամբ հաշվարկել տվյալ Ապահովագրողից ձեռքբերվող ԱՊՊԱ պայմանագրի ապահովագրավճարի չափը:

15. Ապահովագրողներն իրենց ԱՊՊԱ ոլորտում կիրառվող ապահովագրավճարների գնագոյացման մոդելը հաստատելու և այդ մոդելում փոփոխություններ կատարելու դեպքում պարտավոր են այդ մոդելը (դրա փոփոխությունները) ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան տասն օր առաջ առնվազն իրենց պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել դրանում հիմք ընդունված՝ սույն հավելվածի 14-րդ կետով նախատեսված ցուցանիշները, ինչպես նաև մոդելի (դրա փոփոխությունների) հիման վրա այդ կետի 5-րդ ենթակետի համաձայն ապահովագրավճարի չափը հաշվարկող էլեկտրոնային հաշվիչը:

ԳԼՈՒԽ 6. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

16. Ապահովադրի՝ սույն հավելվածին համապատասխան ԲՄ դասի հաշվարկման ժամանակ նրա՝ մինչև 2016 թվականի սեպտեմբերի 1-ը ձևավորված ապահովագրական պատմությունը հաշվի է առնվում հետևյալ կանոններին համապատասխան.

1) 2012 թվականի դեկտեմբերի 31-ից հետո ուժի մեջ մտած որևէ ԱՊՊԱ պայմանագրում որպես լիազորված տիրապետող (ներառյալ՝ վարելու իրավունք ունեցող ապահովադիր) չնշված անձանց համար մինչև սույն հավելվածն ուժի մեջ մտնելը ձևավորված ողջ ապահովագրական պատմության նկատմամբ կիրառվում են սույն հավելվածի դրույթները,

2) 2012 թվականի դեկտեմբերի 31-ից հետո ուժի մեջ մտած որևէ ԱՊՊԱ պայմանագրում որպես լիազորված տիրապետող (ներառյալ՝ վարելու իրավունք ունեցող ապահովադիր)

նշված անձանց համար որպես լիազորված տիրապետող հաշվարկված ԲՄ դասը մինչև 2016 թվականի սեպտեմբերի 1-ը վերջին անգամ փոխվելու կամ ԲՄ դաս ստանալու օրը համարվում է իբրև սույն հավելվածով նախատեսված՝ ապահովագրի դասի վերջին վերահաշվարկման օր, իսկ որպես լիազորված տիրապետող ստացած ԲՄ դասը՝ իբրև ապահովագրի վերջին անգամ վերահաշվարկված ԲՄ դաս՝ այդ օրվանից հետո ընկած ժամանակահատվածի նկատմամբ կիրառելով սույն հավելվածի դրույթները,

3) սույն կետի 2-րդ ենթակետով նախատեսված անձանց համար սույն հավելվածի 7-րդ կետով նախատեսված օրերի քանակի մեջ հաշվարկվում են այդ անձանց՝ մինչև 2016 թվականի սեպտեմբերի 1-ը վերջին անգամ մալուս ստանալու օրվան հաջորդող օրվանից հետո ընկած պայմանագրային օրերը:

17. Ապահովագիրների որոշակի խմբի համար, ի լրումն սույն հավելվածով սահմանված կարգով հաշվարկված ԲՄ դասի, տրամադրվում է մեկանգամյա արտոնություն՝ համաձայն ենթահավելված 3.1-ի:

18. Մինչև 2022 թվականի մարտի 1-ը տեղի ունեցած պատահարների գծով Ապահովագրի ԲՄ դասը չի կարող 22-րդ դասից ավելի բարձրանալ:

19. Արցախի Հանրապետության բնակչության բռնի տեղահանման արդյունքում Արցախի Հանրապետությունից Հայաստանի Հանրապետության տարածք մուտք եղած Ավտոտրանսպորտային միջոցների գծով մինչև 2024 թվականի հունվարի 1-ը առցանց էլեկտրոնային եղանակով կնքվող ԱՊՊԱ պայմանագրով ապահովագրավճարի հաշվարկման հիմքում դրվող հիմնական ապահովագրավճարի չափը կազմում է տվյալ ՊԿԱ-ի մոդելով նշված եղանակով կնքվող ԱՊՊԱ պայմանագրերի համար սահմանված հիմնական ապահովագրավճարի 50 տոկոսը, եթե այդ Ավտոտրանսպորտային միջոցը միաժամանակ բավարարում է հետևյալ պայմաններին.

- 1) ԱՊՊԱ պայմանագրի կնքման պահին հաշվառված է Արցախի Հանրապետությունում,
- 2) մինչև 2020 թվականի արտադրության է,
- 3) չի հանդիսանում պետական կամ համայնքային սեփականություն,
- 4) սեփականության իրավունքն ապահովագրի անվամբ գրանցվել է մինչև 2023 թվականի օգոստոսի 1-ը:

Ենթահավելված 3.1
«ԱՊՊԱ ընդհանուր պայմաններ» կանոնների

1. 2016 թվականի դեկտեմբերի 12-ի դրությամբ սույն կանոնների հավելված 3-ի համաձայն հաշվարկված ԲՄ դասերը 2016 թվականի դեկտեմբերի 12-ին սույն կանոնների ուժով հետևյալ պահանջներին բավարարող ապահովագրիչների համար նվազեցվում են 4 դասով, բայց ոչ պակաս, քան բազիսային ԲՄ դասը.

1) տվյալ ապահովագրիչն 2016 թվականի օգոստոսի 31-ի դրությամբ ունի (ունեցել է) կնքված և գործող ԱՊՊԱ պայմանագիր, որում որպես օգտագործման նպատակ նշված է «հանրային տրանսպորտ» կամ «տաքսի»,

2) տվյալ ապահովագրիչ կողմից կնքված և 2016 թվականի օգոստոսի 31-ին գործողության մեջ եղած ԱՊՊԱ պայմանագրով (պայմանագրերով) ապահովագրված է եղել մեկից ավելի ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվությունը:

2. Բյուրոն Ապահովագրողներին տրամադրում է սույն ենթահավելվածի 1-ին կետով սահմանված պահանջներին բավարարող ապահովագրիչների ցանկը (այսուհետ՝ Ցանկ), ինչպես նաև դրանցում կատարված փոփոխությունները և լրացումները:

3. Մինչև սույն ենթահավելվածի 1-ին կետով նախատեսված նվազեցումն ավտոմատ իրականացնող տեխնիկածրագրային փոփոխությունների ներդրումը Ցանկում ներառված ապահովագրիչների համար սույն կանոններով նախատեսված արտոնություններն Ապահովագրողները հաշվարկում են ինքնուրույն՝ Տեղեկատվական համակարգից ստացված ԲՄ դասը նվազեցնելով 4 դասով, բայց ոչ պակաս, քան բազիսային ԲՄ դասը և նվազեցված դասերն արտացոլելով վերջինների հետ կնքվող ԱՊՊԱ պայմանագրերում: Սույն ենթահավելվածի 1-ին կետով նախատեսված նվազեցումն ավտոմատ իրականացնող տեխնիկածրագրային փոփոխությունների ներդրման պահից (ինչի մասին Բյուրոյի գործադիր տնօրենը գրավոր իրազեկում է Ապահովագրողներին) ԱՊՊԱ պայմանագրում պետք է արտացոլվեն ԱՊՊԱ տեղեկատվական համակարգից ստացված ԲՄ դասերն՝ առանց որևէ ինքնուրույն նվազեցումների իրականացման:

4. Մինչև սույն ենթահավելվածի 1-ին կետով նախատեսված նվազեցումն ավտոմատ իրականացնող տեխնիկածրագրային փոփոխությունների ներդրումը Ապահովագրողների կողմից Ցանկում ներառված անձանց հետ ԱՊՊԱ պայմանագրեր կնքելիս սույն գլխով նախատեսված կարգով և արտոնության չափով Տեղեկատվական համակարգից ստացված ԲՄ դասի ինքնուրույնաբար նվազեցումը և դրա ԱՊՊԱ պայմանագրում արտացոլումը չի դիտարկվում որպես սույն կանոնների խախտում:

Հավելված 4
«ԱՊՊԱ ընդհանուր պայմաններ» կանոնների
 (Հավելված 4-ը լրաց. է 29.03.2022թ թիվ 6-Լ)

ԱՊՊԱ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՀԻՄՔԻ ԴԵՊՔՈՒՄ ԱՊՊԱ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԴԱԴԱՐՄԱՆ ՊԱՀԸ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԱՍԻ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ԴԵՊՔԵՐԸ, ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

N	ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարեցման հիմքը	ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարման պահը	ՊԿԱ-ին ներկայացվող փաստաթղթերի, տեղեկությունների ցանկը	ԱՊՊԱ պայմանագրով նախատեսված ապահովագրավճարի համապատասխան մասի վերադարձման (տարաժամկետ վճարման դեպքում վճարվելիք ապահովագրավճարի վճարման) և դրա հաշվարկման կարգն ու պայմանները
1.	Հայաստանի Հանրապետության իրավասու պետական մարմնի կողմից Ավտոտրանսպորտային միջոցի նկատմամբ սեփականության իրավունքը գրանցվել է Ապահովագրից տարբերվող այլ անձի անունով՝ բացառությամբ եթե Ապահովագիրը ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով տվյալ ավտոտրանսպորտային միջոցի վարձակալն է: Եթե Ապահովագիրը Ավտոտրանսպորտային միջոցի ֆինանսական վարձակալության	Համապատասխան հիմքն ի հայտ գալու պահին		

	(լիզինգի) պայմանագրով վարձակալն է, ապա ԱՊՊԱ պայմանագրի գործողությունը վաղաժամկետ դադարում է այն դեպքում, եթե դադարել է ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագիրը, և Ավտոտրանսպորտային միջոցի նկատմամբ սեփականության իրավունքը չի գրանցվել Ապահովագրի անունով կամ գրանցվելուց հետո օտարվել է այլ անձի		1. ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ գրավոր դիմում՝ համաձայն սույն կանոնների Հավելված 1-ի Ձև 1.5-ի: Ընդ որում, եթե նախքան նման դիմումի ստացումը ՊԿԱ-ն սույն աղյուսակի «ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարեցման հիմքը» սյան 1-ին կամ 2-րդ տողում նշված հիմքի առկայության վերաբերյալ տեղեկատվությունն ստացել է Միասնական տեղեկատվական համակարգի միջոցով, ապա սույն կետով նախատեսված դիմումը համարվում է ՊԿԱ-ին ներկայացված՝ համապատասխան տեղեկատվությանը փաստացի տիրապետելու և պայմանագրի վաղաժամկետ դադարեցման մասին սահմանված կարգով Ապահովագրին ծանուցելու օրվան հաջորդող օրը, և փաստացի նման դիմում լրացուցիչ չի ներկայացվում,	Վերադարձվում է պայմանագրի գործողության չլրացած ժամկետի համար վճարված ապահովագրավճարը՝ (պայմանագրով նախատեսված ապահովագրավճար * պայմանագրի չլրացած ժամկետի օրեր / պայմանագրի գործողության օրեր) – պայմանագրի գծով չվճարված ապահովագրավճար: Ընդ որում՝ գործողության չլրացած ժամկետը հաշվարկվում է համապատասխան գրավոր դիմում ՊԿԱ-ին ներկայացնելու օրվանից սկսած, սակայն համապատասխան հիմքն ի հայտ գալու օրվանից ոչ շուտ: Ընդ որում, բացասական մեծության դեպքում համապատասխան տարբերության գումարը ենթակա է վճարման ՊԿԱ-ին
2.	Ավտոտրանսպորտային միջոցը հանվել է (ներառյալ՝ ժամանակավոր) հաշվառումից	Ավտոտրանսպորտային միջոցը հաշվառումից հանելու օրվան հաջորդող օրը՝ բացառությամբ խոտանման հիմքով հաշվառումից հանվելու, հաշվառումից ժամանակավոր հանվելու, ինչպես նաև հաշվառումից հանվելու այնպիսի դեպքերի, երբ նույն պահին ավտոտրանսպորտային միջոցը	տեղեկատվությունն ստացել է Միասնական տեղեկատվական համակարգի միջոցով, ապա սույն կետով նախատեսված դիմումը համարվում է ՊԿԱ-ին ներկայացված՝ համապատասխան տեղեկատվությանը փաստացի տիրապետելու և պայմանագրի վաղաժամկետ դադարեցման մասին սահմանված կարգով Ապահովագրին ծանուցելու օրվան հաջորդող օրը, և փաստացի նման դիմում լրացուցիչ չի ներկայացվում,	

		հաշվառվում է այլ անձի անվամբ (անվանմամբ), որոնց դեպքում պայմանագիրը վաղաժամկետ դադարում է ավտոտրանսպորտային միջոցը հաշվառումից հանվելու պահին	2. Դադարեցման համապատասխան հիմքը հավաստող փաստաթուղթը, եթե դրան ՊԿԱ-ն չի տիրապետում 3. Ներկայացուցչի միջոցով դիմումը ներկայացնելիս՝ նաև ներկայացուցչի պատշաճ լիազորված լինելը հավաստող փաստաթղթերը	
3.	ՊԿԱ-ն լուծարվել է, և Ապահովագիրը չի ցանկանում պայմանագիրը շարունակել այն ապահովագրական ընկերության հետ, որին ՊԿԱ-ն փոխանցում է ապահովագրական պորտֆելը			
4.	Օրենքով նախատեսված դեպքերում ՊԿԱ-ն իր ապահովագրական պորտֆելը փոխանցում է այլ ապահովագրական ընկերության, և Ապահովագիրը չի ցանկանում պայմանագիրը շարունակել այդ ապահովագրական ընկերության հետ	Համապատասխան հիմքն ի հայտ գալու պահին	1. ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ գրավոր դիմում՝ համաձայն սույն կանոնների Հավելված 1-ի Ձև 1.5-ի, 2. Ներկայացուցչի միջոցով դիմումը ներկայացնելիս՝ նաև ներկայացուցչի պատշաճ լիազորված լինելը հավաստող փաստաթղթերը	

5.	Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո վերացել է ԱՊՊԱ պատահարի վրա հասնելու հնարավորությունը, և ապահովագրական ռիսկի գոյությունը դադարել է ԱՊՊԱ պատահարից տարբեր այլ հանգամանքների բերումով		1. ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ գրավոր դիմում՝ համաձայն սույն կանոնների Հավելված 1-ի և 1.5-ի 2. ԱՊՊԱ պատահարի վրա հասնելու հնարավորության կամ ապահովագրական ռիսկի գոյության վերացումը հիմնավորող փաստաթղթեր, եթե դրանց ՊԿԱ-ն չի տիրապետում, 3. Ներկայացուցչի միջոցով դիմումը ներկայացնելիս՝ նաև ներկայացուցչի պատշաճ լիազորված լինելը հավաստող փաստաթղթերը	
6.	Ապահովադրի պահանջով	Ապահովադրի կամ նրա ներկայացուցչի դիմումի մեջ նշված օրը, բայց ոչ շուտ, քան դիմումի ներկայացման	1. ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ գրավոր դիմում՝ համաձայն սույն կանոնների Հավելված 1-ի և 1.5-ի,	Վերադարձվում է պայմանագրի գործողության չլրացած ժամկետի համար վճարված ապահովագրավճարը՝ հաշվարկման ժամանակ որպես հիմք ընդունելով պայմանագրով նախատեսված ապահովագրավճարի 80%-ը՝

		ամսաթվին հաջորդող օրը	2. Ներկայացուցչի միջոցով դիմումը ներկայացնելիս՝ նաև ներկայացուցչի պատշաճ լիազորված լինելը հավաստող փաստաթղթերը	(պայմանագրով նախատեսված ապահովագրավճար * 80 % / պայմանագրի գործողության օրեր) * պայմանագրի չլրացած օրեր – պայմանագրի գծով չվճարված ապահովագրավճար: Ընդ որում՝ գործողության չլրացած ժամկետը հաշվարկվում է պայմանագրի գործողության դադարեցման օրվանից սկսած: ՊԿԱ-ն իրավունք ունի իր հայեցողությամբ սույն հաշվարկում 80%-ի փոխարեն հիմք ընդունել ապահովագրավճարի 80-ից ավելի բարձր՝ մինչև 100%-ը ներառյալ: Ընդ որում, բացասական մեծության դեպքում համապատասխան տարբերության գումարը ենթակա է վճարման ՊԿԱ-ին: ԱՊՊԱ պատահարի պահին գործող ԱՊՊԱ պայմանագիր չունեցած Ավտոտրանսպորտային միջոցի գծով պատահարից հետո՝ երեք ամսվա ընթացքում, կնքված ԱՊՊԱ պայմանագրի դեպքում սույն տողում նշված հաշվարկում 80%-ի փոխարեն պարտադիր հիմք է ընդունվում ապահովագրավճարի 20%-ը (լրաց. է 30/03/2021թ թիվ 12-Լ)
--	--	-----------------------	---	---

6.1	ՊԿԱ-ի պահանջով, եթե Ապահովագրիրը գրավոր եղանակով հետ է կանչել սույն կանոնների 17-րդ կետում նշված թույլտվությունը	Համապատասխան հիմքն ի հայտ գալու պահին	-	Վերադարձվում է պայմանագրի գործողության չլրացած ժամկետի համար վճարված ապահովագրավճարը՝ հաշվարկման ժամանակ որպես հիմք ընդունելով պայմանագրով նախատեսված ապահովագրավճարի 80%-ը՝ (պայմանագրով նախատեսված ապահովագրավճար * պայմանագրի չլրացած ժամկետի օրեր * 80 % / պայմանագրի գործողության օրեր) – պայմանագրի գծով չվճարված ապահովագրավճար: Ընդ որում՝ գործողության չլրացած ժամկետը հաշվարկվում է համապատասխան հիմքն ի հայտ գալու օրվանից: Ընդ որում, բացասական մեծության դեպքում համապատասխան տարբերության գումարը ենթակա է վճարման ՊԿԱ-ին
7.	ՊԿԱ-ի պահանջով, եթե Ապահովագրիրը թույլ է տվել սույն կանոնների էական խախտում: Ընդ որում, ՊԿԱ-ն իրավունք չունի պահանջելու վաղաժամկետ լուծել պայմանագիրը, եթե Ապահովագրիրը խախտել է սույն կանոնների 52-րդ կետով	ՊԿԱ-ի կողմից խախտումը հայտնաբերելու պահից եռամսյա ժամկետում՝ նրա պահանջը ներկայացվելուց անմիջապես հետո	-	Վերադարձվում է պայմանագրի գործողության չլրացած ժամկետի համար վճարված ապահովագրավճարի և այդ պայմանագրով ՊԿԱ-ի կողմից վճարված ապահովագրական հատուցումների դրական տարբերությունը՝ (պայմանագրով

	սահմանված պահանջը, սակայն արդեն վերացել են ապահովագրական ռիսկի մեծացման վրա որակապես ազդող փոփոխությունները, ինչպես նաև եթե Ապահովադրի կողմից պայմանագրով ստանձնած պարտավորությունների խախտումը կատարվել է ոչ իր մեղքով			նախատեսված ապահովագրավճար * պայմանագրի չլրացած ժամկետի օրեր / պայմանագրի գործողության օրեր) – պայմանագրի գծով չվճարված ապահովագրավճար - տվյալ պայմանագրով կատարված հատուցումների գումար: Ընդ որում՝ գործողության չլրացած ժամկետը հաշվարկվում է պայմանագրի գործողության դադարեցման օրվանից սկսած: Ընդ որում, բացասական մեծության դեպքում համապատասխան տարբերության գումարը ենթակա է վճարման ՊԿԱ-ին
8.	Ապահովադրի պահանջով, եթե ՊԿԱ-ն թույլ է տվել պայմանագրի պայմանների էական խախտում	Ապահովադրի կողմից նման խախտումը հայտնաբերելու պահից եռամսյա ժամկետում՝ նրա պահանջը ներկայացվելուց անմիջապես հետո	1. ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ գրավոր դիմում՝ հիմնավորելով ՊԿԱ-ի կողմից կատարված խախտումները՝ համաձայն սույն կանոնների Հավելված 1-ի Ձև 1.5-ի, 2. Ներկայացուցչի միջոցով դիմումը ներկայացնելիս՝ նաև ներկայացուցչի պատշաճ լիազորված լինելը	Վերադարձվում է հետևյալ մեծություններից առավելագույնը՝ 1. վճարված ապահովագրավճարներ և այդ պայմանագրով ՊԿԱ-ի կողմից վճարված ապահովագրական հատուցումների դրական տարբերությունը, կամ 2. պայմանագրի գործողության չլրացած ժամկետի համար վճարված ապահովագրավճարը՝ (պայմանագրով նախատեսված ապահովագրավճար * պայմանագրի չլրացած

			հավաստող փաստաթղթերը	Ժամկետի օրեր / պայմանագրի գործողության օրեր) – Ապահովադիրի կողմից չվճարված ապահովագրավճար: Ընդ որում՝ գործողության չլրացած ժամկետը հաշվարկվում է պայմանագրի գործողության դադարեցման օրվանից սկսած: Ընդ որում, բացասական մեծության դեպքում համապատասխան տարբերության գումարը ենթակա է վճարման ՊԿԱ-ին: Այն դեպքում, երբ պայմանագրի լուծման հիմք հանդիսացած խախտումը պայմանագրով վճարման ենթակա հատուցման ոչ լրիվ կատարումն է (այն է՝ սույն կանոնների խախտմամբ՝ սահմանված ժամկետում վճարման ենթակա գումարի չվճարումը կամ ոչ ամբողջական վճարումը), ապա Ապահովադիրն իրավունք ունի հետ ստանալու վճարված ապահովագրավճարներն ամբողջությամբ:
9.	ՊԿԱ-ի պահանջով, եթե պայմանագիրը կնքելուց հետո պարզ է դարձել, որ Ապահովադիրը	ՊԿԱ-ի պահանջով՝ անմիջապես	-	Ապահովագրավճարները վերադարձման ենթակա չեն, իսկ տարաժամկետ վճարման դեպքում

	պայմանագիրը կնքելիս ՊԿԱ-ին (լիազորված անձին կամ ապահովագրական գործակալին) ներկայացրել է ակնհայտ սխալ, ապակողմնորոշիչ, կեղծ կամ ոչ ամբողջական տեղեկություններ պատահարի տեղի ունենալու և դրա արդյունքում հնարավոր վնասի չափը որոշելու համար էական նշանակություն ունեցող հանգամանքների երևան գալու՝ իրեն հայտնի հավանականության վերաբերյալ: Ընդ որում, ՊԿԱ-ն չի կարող օգտվել նշված իր իրավունքից, եթե պայմանագրի կնքման պահին նա գիտեր կամ կարող էր իմանալ, որ Ապահովադրի կողմից ներկայացվել են ապակողմնորոշիչ, կեղծ կամ ոչ ամբողջական տեղեկություններ, կամ պայմանագիրը կնքվել է Վկայագրի համապատասխան մասերում տեղեկատվության բացակայության պայմաններում, ինչպես նաև Օրենքով նախատեսված այլ դեպքերում			ապահովագրավճարի չվճարված մասը ենթակա է ամբողջությամբ վճարման ՊԿԱ-ին:
10.	Ապահովադրի պահանջով, եթե ՊԿԱ-ն սահմանված կարգով ծանուցել է սույն կանոնների	Ապահովադրի պահանջով՝ անմիջապես	1. ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ	Վերադարձվում է պայմանագրի գործողության չլրացած ժամկետի համար վճարված

	դրույթների փոփոխման մասին և Ապահովադիրը համաձայն չէ կատարված փոփոխություններին		գրավոր դիմում՝ համաձայն սույն կանոնների Հավելված 1-ի Ձև 1.5-ի, 2. Ներկայացուցչի միջոցով դիմումը ներկայացնելիս՝ նաև ներկայացուցչի պատշաճ լիազորված լինելը հավաստող փաստաթղթերը	ապահովագրավճարը՝ (պայմանագրով նախատեսված ապահովագրավճար * պայմանագրի չլրացած ժամկետի օրեր / պայմանագրի գործողության օրեր) – պայմանագրի գծով չվճարված ապահովագրավճար: Ընդ որում՝ գործողության չլրացած ժամկետը հաշվարկվում է պայմանագրի գործողության դադարեցման օրվանից սկսած: Ընդ որում, բացասական մեծության դեպքում համապատասխան տարբերության գումարը ենթակա է վճարման ՊԿԱ-ին
11.	Վկայագրով նախատեսված ապահովագրավճարի (ապահովագրավճարի առաջին կամ հերթական մասի) վճարումն Ապահովադիրի կողմից կետանցվել է, և ՊԿԱ-ն պայմանագրի ենթադրվող դադարեցման օրվանից առնվազն երեք օր առաջ Ապահովադիրին ուղարկել է հիշեցում-ծանուցում (համաձայն սույն կանոնների ձև 1.2-ի)՝ ապահովագրավճարի հերթական մասը վճարելու անհրաժեշտության և չվճարելու դեպքում, որպես	Սույն տողով նախատեսված պահանջներին բավարարող հիշեցում-ծանուցման մեջ նշված օրը, բայց ոչ շուտ, քան Ապահովագրավճարի (ապահովագրավճարի հերթական մասի) չվճարման (կետանցման)	-	Վերադարձվում է պայմանագրի գործողության չլրացած ժամկետի համար վճարված ապահովագրավճարը՝ հաշվարկման ժամանակ որպես հիմք ընդունելով պայմանագրով նախատեսված ապահովագրավճարի 80%-ը (պայմանագրով նախատեսված ապահովագրավճար * պայմանագրի չլրացած ժամկետի օրեր / պայմանագրի գործողության օրեր) – պայմանագրի գծով չվճարված ապահովագրավճար:

	հետևանք ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարեցման մասին: Սույն կետով նախատեսված դեպքերում Ապահովագրողի կողմից ապահովագրավճարի վճարման համար լրացուցիչ ժամկետ չի տրամադրվում:	օրվան հաջորդող օրը		Ընդ որում՝ գործողության չլրացած ժամկետը հաշվարկվում է պայմանագրի գործողության դադարեցման օրվանից սկսած: Ընդ որում, բացասական մեծության դեպքում համապատասխան տարբերության գումարը ենթակա է վճարման ՊԿԱ-ին: ԱՊՊԱ պատահարի պահին գործող ԱՊՊԱ պայմանագիր չունեցած Ավտոտրանսպորտային միջոցի գծով պատահարից հետո՝ երեք ամսվա ընթացքում, կնքված ԱՊՊԱ պայմանագրի դեպքում սույն տողում նշված հաշվարկում 80%-ի փոխարեն պարտադիր հիմք է ընդունվում ապահովագրավճարի 20%-ը (լրաց. է 30/03/2021թ թիվ 12-Լ)
12.	Օրենքով նախատեսված այլ դեպքերում և կարգով			
Ապահովագրավճարի վերադարձման կարգն ու ժամկետները				
ՊԿԱ-ն սույն հավելվածով նախատեսված դեպքերում պարտավոր է ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարեցման դիմումի (առկայության դեպքում) ստացման և ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարեցման ամսաթվերից ավելի ուշ ամսաթվից սկսած 2 օրվա ընթացքում վերադարձնել ապահովագրավճարի համապատասխան մասը (դրա առկայության դեպքում) և Ապահովադրին ծանուցել (տրամադրել) վաղաժամկետ դադարեցման արդյունքում վերադարձվող/վճարման ենթակա ապահովագրավճարի հաշվարկը-ծանուցումը, որը պետք է առնվազն պարունակի սույն կանոնների 2և 1.3-ով նախատեսված տեղեկատվությունը: Ընդ որում, ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարեցման դեպքում ապահովագրավճարի լրավճարում իրականացնելու անհրաժեշտության դեպքում ծանուցման մեջ նշում է կատարվում ապահովագրավճարի լրավճարում իրականացնելու կարգի և ժամկետների վերաբերյալ: (փոփ. է 30/03/2021թ թիվ 12-Լ)				

**ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴՍԱ-ԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ
ԵՆԹԱԿԱ ՓԱՏՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԸ**

Պարզեցված հատուցումների գործընթացի դեպքում

Տուժողի անձը հաստատող փաստաթղթի բնօրինակը (անձի նույնականացման նպատակով)
Ավտոտրանսպորտային միջոցի սեփականության իրավունքը հավաստող փաստաթղթի բնօրինակը (կիրառելի չէ, եթե տուժողին պատկանող Ավտոտրանսպորտային միջոցը հաշվառված է Հայաստանի Հանրապետությունում կամ Արցախի Հանրապետությունում)
Իրավահաջորդությունը հիմնավորող օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերի բնօրինակը կամ դրա՝ նոտարապես հաստատված պատճենը, եթե ԴՍԱ-ին դիմել է տուժողի իրավահաջորդը
Ներկայացուցչի միջոցով գրավոր դիմում ներկայացվելու դեպքում՝ լիազորված անձ լինելու փաստը հավաստող փաստաթղթի բնօրինակը կամ դրա՝ նոտարապես հաստատված պատճենը և լիազորված անձի անձը հաստատող փաստաթղթի բնօրինակը
Լրացման հրահանգին համապատասխան լրացված համաձայնեցված հայտարարագրի բնօրինակը կամ լուսապատճենը (սույն կանոնների 13-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն ներկայացվելու դեպքում), բացառությամբ եթե համաձայնեցված հայտարարագիրը լրացվել է համապատասխան էլեկտրոնային ծրագրի միջոցով (ընդ որում՝ եթե որևէ փաստաթղթի բացակայության հիմքով համաձայնացված հայտարարագրի համապատասխան տողում գծիկ է դրված, ապա սույն կանոնների համաձայն այն համարվում է պատշաճ լրացված)
Ապահովագրական պատահարի վայրում սույն կանոնների պահանջներին համապատասխան իրականացված լուսանկարները և (կամ) տեսանյութերը
Սույն կանոններով սահմանված ժամկետում դիմելու և (կամ) փաստաթղթեր ներկայացնելու անհնարինության կամ տեղյակ չլինելու հանգամանքները հիմնավորող փաստաթղթերի կամ այլ ապացույցների բնօրինակները կամ պատճենները
Ապահովագրական պատահարի հետևանքով վնասված Ավտոտրանսպորտային միջոցի վերաբերյալ գործող ԱՊՊԱ պայմանագրի բնօրինակը կամ պատճենը կամ տվյալ Ավտոտրանսպորտային միջոցի գծով հետևյալ հանգամանքներից որևէ մեկի առկայության փաստը հավաստող փաստաթղթի պատճենը. 1) Ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվությունը, համաձայն Օրենքի, ապահովագրական պատահարի օրվա դրությամբ ենթակա չի եղել պարտադիր ապահովագրման, կամ 2) Ավտոտրանսպորտային միջոցն ապահովագրական պատահարից հետո խոտանման կամ Հայաստանի Հանրապետության տարածքից մշտապես արտահանելու հիմքով հաշվառումից հանվել է: Ընդ որում, ապահովագրական պատահարի պահին Ավտոտրանսպորտային միջոցի վերաբերյալ գործող ԱՊՊԱ պայմանագրի բացակայության դեպքում ներկայացված ԱՊՊԱ պայմանագրի կամ պայմանագրերի գործողության ընդհանուր ժամկետը չպետք է պակաս լինի մեկ տարուց (լրաց. է 30/03/2021թ թիվ 12-Լ)

Ստանդարտ հատուցումների գործընթաց 1-ի դեպքում

Տուժողի անձը հաստատող փաստաթղթի բնօրինակը (անձի նույնականացման նպատակով)
Ավտոտրանսպորտային միջոցին պատճառված վնասի հատուցման գծով՝ դրա նկատմամբ սեփականության իրավունքը հավաստող փաստաթղթի բնօրինակը (կիրառելի չէ, եթե տուժողին պատկանող Ավտոտրանսպորտային միջոցը հաշվառված է Հայաստանի Հանրապետությունում կամ Արցախի Հանրապետությունում)
Իրավահաջորդությունը հիմնավորող օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերի բնօրինակը կամ դրա՝ նոտարապես հաստատված պատճենը, եթե ԴՍԱ-ին դիմել է տուժողի իրավահաջորդը
Ներկայացուցչի միջոցով գրավոր դիմում ներկայացվելու դեպքում՝ լիազորված անձ լինելու փաստը հավաստող փաստաթղթի բնօրինակը կամ դրա՝ նոտարապես հաստատված պատճեն և լիազորված անձի անձը հաստատող փաստաթղթի բնօրինակը
Ապահովագրական պատահարի վայրում իրականացված լուսանկարները և (կամ) տեսանյութերը (առկայության դեպքում)
Ելակետ 1-ի և Ելակետ 2-ի պատճենները (լուսապատճենները)
Ավտոտրանսպորտային միջոցից բացի այլ գույքին պատճառված վնասի հատուցման գծով՝ այլ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը հավաստող փաստաթղթերի, իսկ գույքը կորած լինելու դեպքում՝ նաև կորած լինելը հավաստող փաստաթղթերի և (կամ) նյութերի բնօրինակները կամ դրանց՝ նոտարապես հաստատված պատճենները
Սույն կանոններով սահմանված կարգով եռամսյա ժամկետում դիմելու և (կամ) փաստաթղթեր ներկայացնելու անհնարինության կամ տեղյակ չլինելու հանգամանքները հիմնավորող փաստաթղթերի կամ այլ ապացույցների բնօրինակները կամ պատճենները
Ապահովագրական պատահարի հետևանքով վնասված Ավտոտրանսպորտային միջոցի վերաբերյալ գործող ԱՊՊԱ պայմանագրի բնօրինակը կամ պատճենը կամ տվյալ Ավտոտրանսպորտային միջոցի գծով հետևյալ հանգամանքներից որևէ մեկի առկայության փաստը հավաստող փաստաթղթի պատճենը. 1) Ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվությունը, համաձայն Օրենքի, ապահովագրական պատահարի օրվա դրությամբ ենթակա չի եղել պարտադիր ապահովագրման, կամ 2) Ավտոտրանսպորտային միջոցն ապահովագրական պատահարից հետո խոտանման կամ Հայաստանի Հանրապետության տարածքից մշտապես արտահանելու հիմքով հաշվառումից հանվել է: Ընդ որում, ապահովագրական պատահարի պահին Ավտոտրանսպորտային միջոցի վերաբերյալ գործող ԱՊՊԱ պայմանագրի բացակայության դեպքում ներկայացված ԱՊՊԱ պայմանագրի կամ պայմանագրերի գործողության ընդհանուր ժամկետը չպետք է պակաս լինի մեկ տարուց (ըստ է 30/03/2021թ թիվ 12-Լ)

Ստանդարտ հատուցումների գործընթաց 2-ի դեպքում

Տուժողի անձը հաստատող փաստաթղթի բնօրինակը (անձի նույնականացման նպատակով)
Ավտոտրանսպորտային միջոցին պատճառված վնասի հատուցման գծով՝ դրա նկատմամբ սեփականության իրավունքը հավաստող փաստաթղթի բնօրինակը (կիրառելի չէ, եթե

տուժողին պատկանող Ավտոտրանսպորտային միջոցը հաշվառված է Հայաստանի Հանրապետությունում կամ Արցախի Հանրապետությունում)
Իրավահաջորդությունը հիմնավորող օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերի բնօրինակը կամ դրա՝ նոտարապես հաստատված պատճեն, եթե ԴՍԱ-ին դիմել է տուժողի իրավահաջորդը
Ներկայացուցչի միջոցով գրավոր դիմում ներկայացվելու դեպքում՝ լիազորված անձ լինելու փաստը հավաստող փաստաթղթի բնօրինակը կամ դրա՝ նոտարապես հաստատված պատճենը և լիազորված անձի անձը հաստատող փաստաթղթի բնօրինակը
Ապահովագրական պատահարի գծով հարուցված (նախաձեռնված) գործի (վարույթի) շրջանակներում ընդունված հետևյալ փաստաթղթերից որևէ մեկի բնօրինակները կամ պատճենները. 1. օրինական ուժի մեջ մտած գործն ըստ էության լուծող (եզրափակիչ) դատական ակտ, 2. քրեական դատավարության օրենսդրության շրջանակներում ընդունված եզրափակիչ դատավարական այլ ակտ, որում առկա են հետևություններ պատահարում անձի մեղավորության վերաբերյալ, և (կազմված լինելու դեպքում) դրա հիմքում ընկած փաստաթղթեր (դեպքի վայրի սխեմա, բացատրություններ, փորձագիտական եզրակացություն), 3. ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջները կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելու և (կամ) ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը թողնելու հանցակազմի հատկանիշներով նախաձեռնված վարույթի շրջանակներում քրեական դատավարության օրենսդրության շրջանակներում ընդունված դատավարական ակտ՝ քննությունից խուսափելու կամ այլ պատճառներով մեղադրյալի գտնվելու վայրն անհայտ լինելու հիմքով քրեական հետապնդման ժամկետները կասեցնելու վերաբերյալ և (կազմված լինելու դեպքում) դրա հիմքում ընկած փաստաթղթեր (դեպքի վայրի սխեմա, բացատրություններ, փորձագիտական եզրակացություն), 4. իրավասու պետական մարմնի կողմից տրամադրված փաստաթուղթ, որով հավաստվում է, որ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջները կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելու և (կամ) ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը թողնելու հանցակազմի հատկանիշներով նախաձեռնվել է վարույթ, սակայն ավելի քան երկու ամիս չի հարուցվել քրեական հետապնդում, ինչպես նաև (կազմված լինելու դեպքում) վարույթի շրջանակներում կազմված փաստաթղթեր (դեպքի վայրի սխեմա, բացատրություններ, փորձագիտական եզրակացություն), 5. վարչական վարույթ իրականացնող մարմնի կողմից ընդունված եզրակացություն կամ որոշում և (կազմված լինելու դեպքում) դրա հիմքում ընկած փաստաթղթեր (դեպքի վայրի սխեմա, բացատրություններ, փորձագիտական եզրակացություն)


Ավտոտրանսպորտային միջոցից բացի այլ գույքին պատճառված վնասի հատուցման գծով՝ այդ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը հավաստող փաստաթղթերի, իսկ գույքը կորած լինելու դեպքում՝ նաև կորած լինելը հավաստող փաստաթղթերի և (կամ) նյութերի բնօրինակները կամ դրանց՝ նոտարապես հաստատված պատճենները
Սույն կանոններով սահմանված ժամկետում դիմելու և (կամ) փաստաթղթեր ներկայացնելու անհնարինության կամ տեղյակ չլինելու հանգամանքները հիմնավորող փաստաթղթերի կամ այլ ապացույցների բնօրինակներ կամ պատճենները
Ապահովագրական պատահարի հետևանքով վնասված Ավտոտրանսպորտային միջոցի վերաբերյալ գործող ԱՊՊԱ պայմանագրի բնօրինակը կամ պատճենը կամ տվյալ Ավտոտրանսպորտային միջոցի գծով հետևյալ հանգամանքներից որևէ մեկի առկայության փաստը հավաստող փաստաթղթի պատճենը. 1) Ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվությունը, համաձայն Օրենքի, ապահովագրական պատահարի օրվա դրությամբ ենթակա չի եղել պարտադիր ապահովագրման, կամ 2) Ավտոտրանսպորտային միջոցն ապահովագրական պատահարից հետո խոտանման կամ Հայաստանի Հանրապետության տարածքից մշտապես արտահանելու հիմքով հաշվառումից հանվել է: Ընդ որում, ապահովագրական պատահարի պահին Ավտոտրանսպորտային միջոցի վերաբերյալ գործող ԱՊՊԱ պայմանագրի բացակայության դեպքում ներկայացված ԱՊՊԱ պայմանագրի կամ պայմանագրերի գործողության ընդհանուր ժամկետը չպետք է պակաս լինի մեկ տարուց (լրաց. է 30/03/2021թ թիվ 12-Լ)
Տուժողի առողջությանը պատճառված վնասների հատուցման համար նաև՝
1) տուժողի կողմից ստացված վնասվածքների վերաբերյալ եզրահանգումը պարունակող դատաբժշկական (բժշկական) փորձաքննության (ներառյալ՝ քրեադատավարական գործընթացներից դուրս կազմված) ակտի (եզրակացության) բնօրինակը, բացառությամբ այն դեպքերի, երբ քրեական վարույթն իրականացնող մարմնի եզրակացությունը կամ գործն ըստ էության լուծող (եզրափակիչ) և օրինական ուժի մեջ մտած դատական ակտն ամբողջությամբ պարունակում է դատաբժշկական փորձաքննության (եզրակացության) եզրահանգումները, 2.1) ամբուլատոր բժշկական օգնության դեպքում՝ ամբուլատոր քարտից քաղվածքի և (կամ) բժշկական տեղեկանքի և (կամ) կոնսուլտացիոն թերթիկի և (կամ) բժշկի եզրակացության բնօրինակը, 2.2) ստացիոնար բժշկական օգնության դեպքում՝ ստացիոնար քարտից քաղվածքի (էպիկրիզի) բնօրինակը 3) միասնական էլեկտրոնային համակարգով պատշաճ կերպով դուրս գրված հաշիվ կամ բուժհաստատության ղեկավարի և (կամ) բժշկական սարքավորումներ կամ պարագաներ մատակարարող կազմակերպության և գլխավոր հաշվապահի կողմից ստորագրված և կնքված (կնիքի առկայության դեպքում) թղթային հաշիվ, որոնցում պետք է արտացոլված լինեն նաև բժշկական ծառայություն ստացած անձի անունը, ազգանունը և մատուցված բժշկական ծառայության տեսակը, իսկ առողջությանը պատճառված վնասների գծով տուժողի կամ երրորդ անձի կողմից արդեն իսկ վճարում կատարված լինելու դեպքերում՝

ա) վճարման հաշվի (հաշիվ-ապրանքագրի) բնօրինակը և հետևյալ փաստաթղթերից որևէ մեկի բնօրինակը՝ դրամարկղային ֆիսկալային կտրոն կամ դրամարկղի մուտքի օրդեր (կանխիկ վճարման դեպքում) կամ բանկային փոխանցման անդորրագիր (անկանխիկ վճարման դեպքում) կամ վճարման փաստը հավաստող այլ փաստաթուղթ՝ ներառյալ ծառայությունը մատուցած կամ ապրանքը վաճառած հաստատության կողմից տրված համապատասխան տեղեկանք, բ) կամ դրամարկղային ֆիսկալային կտրոն կամ դրամարկղի մուտքի օրդեր կամ վճարահաշվարկային այլ փաստաթղթեր (կանխիկ վճարման դեպքում), որոնցում հստակ արտացոլված է մատուցված ծառայությունների կամ ձեռքբերված ապրանքների վերաբերյալ տեղեկատվություն, 4) տուժողի առողջությանը պատճառված վնասների հետևանքով աշխատավարձի (եկամուտների) կորստի դեպքում՝ կորցրած աշխատավարձի (եկամուտների) չափը հաստատող փաստաթղթերի բնօրինակները 5) Տուժողի առողջությանը պատճառված վնասների հետևանքով աշխատունակության կորստի աստիճանը հիմնավորող փաստաթղթերի բնօրինակները:	Տուժողի մահվան հետ կապված հատուցում ստանալու համար նաև՝ 1) Օրենքի համաձայն տուժողի մահվան հետևանքով վնասների հատուցման իրավունք ունեցող անձ համարվելու փաստը հավաստող փաստաթղթերի բնօրինակները (եթե պահանջվում է հատուցել կերակրողին կորցնելու հետ կապված ծախսերը), 2) դատաբժշկական (բժշկական) փորձաքննության ակտի (եզրակացության) բնօրինակը կամ պատճենը, բացառությամբ այն դեպքերի, երբ քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշումը կամ գործն ըստ էության լուծող և օրինական ուժի մեջ մտած դատական ակտն ամբողջությամբ պարունակում է դատաբժշկական փորձաքննության (եզրակացության) եզրահանգումները, ինչպես նաև այն դեպքերի, երբ այդ որոշմամբ կամ դատական ակտով հաստատվում է այն փաստը, որ մահը վրա է հասել տվյալ պատահարի հետևանքով, և առկա չեն տուժողի առողջությանը պատճառված վնասների հետ կապված, հատուցման ենթակա ծախսեր, 3) ՀՀ քրեական դատավարության օրենսդրության հիման վրա կայացված տուժող ճանաչելու մասին որոշման բնօրինակը կամ պատճենը, 4) կերակրողին կորցնելու հետ կապված վնասի հատուցման չափը հավաստող փաստաթղթերի բնօրինակները (եթե պահանջվում է հատուցել կերակրողին կորցնելու հետ կապված ծախսերը)
--	---

1. Հատուցում ստանալու գրավոր դիմումը ստորագրվում է երկկողմանի՝ դիմումատուի և դիմումն ընդունողի կողմից, այնուհետև ներկայացված դիմումը դիմումն ընդունած Ապահովագրողի ներկայացուցչի կողմից պատճենահանվում է, և պատճենը տրվում է դիմումատուին: Սույն կետը չի տարածվում սույն կանոնների 13-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ ներկայացված դիմումների վրա: 2. (ուժը կորցրել է Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի խորհրդի 29/09/2020թ թիվ 34-Լ որոշմամբ): 3. Սույն հավելվածով տուժողի նույնականացման համար ներկայացվող անձը հաստատող փաստաթուղթը ենթակա չէ ներկայացման, եթե տուժողն ԱՊՊԱ պատահարի պահին
--

գործող ԱՊՊԱ պայմանագրով Ապահովադիր է, և ապահովագրական հատուցում ստանալու վերաբերյալ դիմումը ԴՍԱ-ին ներկայացրել է սույն կանոնների 13-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն:

Հավելված 6.1. Պարզեցված հատուցման գործընթացի գործողությունների հաջորդականություն



Հավելված 6.1-ին վերաբերող նշումներ և այլ պահանջներ

Հասկացություններ

Կողմեր՝ Տուժող, Ապահովագրիչ և Ապահովագրված անձ:


Հոսքագրից հղումներ (աղյուսակի առաջին սյունակում նշված են հղումների համարները)

1	1. Ապահովագրական հատուցումը վճարելու (մերժելու) փաթեթը ծանուցվում է նաև պատահարում ներգրավված և ԱՊՊԱ պատահարի պահին ԱՊՊԱ պայմանագիր չունեցած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ պատշաճ էլեկտրոնային փոստի հասցեին (նման տվյալի առկայության դեպքում): 2. Ապահովագրական հատուցումը մերժելու փաթեթ ծանուցելու դեպքում տվյալ դեպքով հատուցման գործընթացն ավարտվում է, եթե իրավասու անձանց կողմից սույն կանոններով սահմանված կարգով կրկնակի փորձաքննության պահանջ չի ներկայացվում:	
2	Պայման 1	ԴՍԱ-ի և Օրենքով նախատեսված այլ անձանց համաձայնությունը լրացուցիչ փորձաքննության անցկացմանը համարվում է ինքնաշխատ տրված, եթե լրացուցիչ փորձաքննության նշանակման դիմումը ներկայացվել է ապահովագրական հատուցումը վճարելու (մերժելու) փաթեթի ծանուցմանը հաջորդող 5 օրվա ընթացքում
3	Պայման 2	ԴՍԱ-ն մերժում է լրացուցիչ փորձաքննության նշանակման դիմումը, եթե վերջինս չի ներկայացվել ապահովագրական հատուցումը վճարելու (մերժելու) փաթեթի ծանուցմանը հաջորդող 5 օրվա ընթացքում:
4	Գույքին պատճառված վնասների գծով ապահովագրական հատուցումն իրականացվում է համապատասխան գումար վճարելով կամ վնասը վերականգնելով՝ ըստ տուժողի կողմից հատուցումը վճարելու (մերժելու) փաթեթի ծանուցումից հետո կատարած ընտրության: Ընդ որում, եթե տուժողը սահմանված կարգով ընտրություն չի կատարում, ապա համարվում է, որ նա ընտրել է համապատասխան գումար վճարելու տարբերակը: Այն դեպքերում, երբ սույն կանոններով նախատեսված որևէ հիմքով համապատասխան գույքին պատճառված վնասների վերականգնումը գնահատվել է որպես ոչ ողջամիտ, ապահովագրական հատուցումն իրականացվում է համապատասխան գումար վճարելով:	

	ԴՍԱ-ն պարտավոր է ՀՊԱ-ի կողմից համապատասխան պահանջն ստանալու պահից հետո 2 օրվա ընթացքում վերջինին փոխանցել տվյալ գործով ապահովագրական հատուցման վճարման փաստը հավաստող փաստաթղթի սքանավորված տարբերակը:
Գործընթացի վերաբերյալ ընդհանուր պահանջներ	
Ա	ՊԿԱ-ի (ՊԿԱ-ների) անունից պատահարի հետևանքով պատճառված վնասի կրկնակի կամ լրացուցիչ փորձաքննություն իրականացնելու պահանջ ներկայացնելու և լրացուցիչ փորձաքննության իրականացմանը համաձայնություն տրամադրելու նպատակահարմարությունը որոշում և Օրենքով և սույն հավելվածով նախատեսված իրավունքն իրականացնում է ԴՍԱ-ն, բացառությամբ ՊԿԱ հանդիսացող Բյուրոյի, որը կարող է պատահարի հետևանքով պատճառված վնասի կրկնակի կամ լրացուցիչ փորձաքննություն իրականացնելու պահանջ ներկայացնել նաև ինքնուրույն՝ վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ կամ վարորդի հաշվին:
Բ	Լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննությունների դիմումի մերժման դեպքում հետագա գործընթացների համար նախատեսված ժամկետների հաշվարկը չի վերսկսվում և շարունակվում է հաշվարկվել ապահովագրական հատուցումը վճարելու (մերժելու) փաթեթի ծանուցման հաջորդող օրվանից սկսված:
Գ	Լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննության անցկացման պահանջ ներկայացնելու համար սահմանված ժամկետի սկիզբ է համարվում առաջնային (առկայության դեպքում՝ լրացուցիչ) փորձաքննության (փորձաքննությունների) արդյունքների մասին ծանուցում ստանալու օրը, իսկ ԴՍԱ-ի համար՝ շահագրգիռ անձանց (շահագրգիռ անձանցից վերջինին) առաջնային (կամ լրացուցիչ (եթե արդեն իրականացվել է)) փորձաքննության (փորձաքննությունների) արդյունքների մասին սույն կանոններով սահմանված կարգով ծանուցելու օրը, բայց ոչ ուշ քան փորձաքննության արդյունքների մասին շահագրգիռ անձանց ծանուցման համար սույն կանոններով սահմանված ժամկետի վերջին օրը:
Դ	Կրկնակի փորձաքննություն իրականացվելուց հետո չի կարող նշանակվել լրացուցիչ փորձաքննություն:
Ե	Կրկնակի փորձաքննություն և լրացուցիչ փորձաքննություն կարող է նշանակվել առավելագույնը մեկական անգամ՝ համապատասխան փորձաքննության արդյունքների առաջին անգամ (ներառյալ առաջին անգամ ծանուցված արդյունքների ճշգրտման) ծանուցումը ստանալուց հետո: Ընդ որում՝ սույն հավելվածով նախատեսված համապատասխան գործընթացների համար նախատեսված ժամկետների հաշվարկը սկսվում է համապատասխան փորձաքննության արդյունքներն առաջին անգամ (ներառյալ առաջին անգամ ծանուցված արդյունքների ճշգրտման) ծանուցումն ստանալու պահից:
Հոսքագրի տեխնիկական մասի բացառություններ	

	Գործողություն
	Ժամկետ (գործողության համար նախատեսված առավելագույն աշխատանքային օրեր)
	Պատասխանատու
	Պայման
	Պարտադիր գործողություն
	Պարտադիր է զուգահեռ գործողություններից որևէ մեկը
Հոսքագրում յուրաքանչյուր փուլի գործընթացն սկսվում է նախորդ գործընթացից հետո: Ընդ որում, ներկայացված դիմումի հիման վրա սահմանված ժամկետում հոսքագրով նախատեսված համապատասխան գործողությունը Բյուրոյի կամ ԴՍԱ-ի կողմից չիրականացվելու դեպքում նախքան այդ գործողության իրականացումը չի սկսվում հաջորդ փուլի գործընթացը (եթե կոնկրետ փուլի համար այլ բան նախատեսված չէ սույն հավելվածով), և սահմանված ժամկետների կետանցման համար համապատասխան ուշացված օրերի համար տույժերի վճարման պատասխանատվությունը կրում է սահմանված ժամկետում համապատասխան գործողությունը չիրականացրած Բյուրոն (ԴՍԱ-ն): Սահմանված ժամկետների կետանցմամբ դիմումի մերժումը հիմք չէ դիմումատուի կամ այլ անձանց համար հոսքագրով նախատեսված գործողությունների համար սահմանված ժամկետների երկարաձգման կամ վերսկսման համար: (լրաց. է 31/03/2020թ թիվ 9-Լ)	
Գործընթացների հաջորդականությունն իրականացվում է սլաքների ուղղությամբ:	

Հավելված 6.2. Ստանդարտ հատուցման գործընթաց 1-ի գործողությունների հաջորդականություն



Հավելված 6.2-ին վերաբերող նշումներ և այլ պահանջներ

Հասկացություններ

Կողմեր՝ տվյալ պատահարում ներգրավված Տուժողներ, Ապահովադիրներ և Ապահովագրված անձինք:

Հոսքագրից հղումներ (աղյուսակի առաջին սյունակում նշված են հղումների համարները)

1	Պայման 1	1. Ելակետ 1-ում վարորդներից առնվազն մեկի կողմից «մեղավոր եմ» նշման կատարում և Ելակետ 1-ում կատարված նշումներին ԴՍԱ-ի համաձայնություն կամ 2. Ելակետ 1-ում պատահարում ներգրավված միայն մեկ ՏՄ-ի առկայություն:
	Գործողություն 1	1) Պայման 1-ի 1-ին կետով նախատեսված պայմանի առկայության դեպքում Ելակետ 1-ում կատարված նշումներին համաձայնության մասին հարցում (Ձև 3) Ելակետ 1-ում նշված մեղավոր վարորդի (վարորդների) վարած ՏՄ վերաբերյալ պատահարի պահին գործող ԱՊՊԱ պայմանագիր ունեցող ՊԿԱ-ին (ՊԿԱ-ներին): 2) Պայման 1-ի 2-րդ կետով նախատեսված պայմանի առկայության դեպքում պատահարում ներգրավված ՏՄ վերաբերյալ պատահարի պահին գործող ԱՊՊԱ պայմանագիր ունեցող ՊԿԱ-ին տվյալ ՏՄ-ի վարորդի մեղավորությանը համաձայնության մասին հարցում:
2	Պայման 2	Պայման 1-ի պայմանների բացակայություն:
	Գործողություն 2	Պատճառի փորձաքննության նշանակում (պատվերի (Ձև 4.1) ներկայացում) փորձագետին և այդ մասին ծանուցում (Ձև 9.1) պատահարին մասնակից ՏՄ-ների վերաբերյալ պատահարի պահին գործող ԱՊՊԱ պայմանագիր կնքած ՊԿԱ-ին (ՊԿԱ-ներին):
2.1	* Գործողություն 2.1	ԱՄՄԴ-ի կողմից պատճառի փորձաքննության ինքնաշխատ նշանակում՝ սույն կանոններով նախատեսված մեղավորության որոշման հիմնական հարցադրման ներկայացմամբ: Սույն գործողությունը սույն հավելվածով նախատեսված գործընթացում կիրառելի է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության պայմաններում՝ ա) տվյալ ապահովագրական պատահարն Ստանդարտ հատուցման գործընթաց 1-ի հատկանիշներին բավարարող պատահար է և պատահարում ներառված (պատահարի հետ առնչվող) առնվազն մեկ Ապահովադիր սույն կանոններով նախատեսված կարգով ծանուցվել է


		ապահովագրական հատուցում ստանալու վերաբերյալ դիմումն Ապահովադրի կողմից ինքնաշխատ ներկայացված լինելու մասին, բ) տվյալ ապահովագրական պատահարով ԴՍԱ-ն (ԴՍԱ-ներից որևէ մեկը) սույն հավելվածով նախատեսված Գործողություն 2-ը չի իրականացրել սույն հավելվածով նախատեսված կարգով և ժամկետներում: Սույն հավելվածի գործողությունների հոսքագրում Գործողություն 2.1-ի կատարման համար նշված՝ Անմիջապես բառը նշանակում է, որ Գործողություն 2.1-ն իրականացվում է Գործողություն 2-ով նախատեսված ժամկետի ավարտից անմիջապես հետո:
3	1) Պայման 1-ի 1-ին կետով նախատեսված պայմանի առկայության դեպքում Ելակետ 1-ում նախնական մեղավորության վերաբերյալ նշումներին նշումների համաձայն մեղավոր վարորդի (վարորդների) վարած ՏՄ վերաբերյալ պատահարի պահին գործող ԱՊՊԱ պայմանագիր ունեցող ՊԿԱ-ի (ՊԿԱ-ների) կողմից համաձայնության տրամադրման պահից պատահարի պատճառների առաջնային փորձաքննությունը համարվում է նշանակված և ստացված, և որպես փորձագետի եզրակացություն ընդունվում է Ելակետ 1-ը, որով հաստատված են համարվում մեղավորության մասին նախնական նշումները: 2) Պայման 1-ի 2-րդ կետով նախատեսված պայմանի առկայության դեպքում պատահարում ներգրավված ՏՄ-ի վերաբերյալ պատահարի պահին գործող ԱՊՊԱ պայմանագիր ունեցող ՊԿԱ-ի կողմից համաձայնության տրամադրման պահից պատահարի առաջացման պատճառների առաջնային փորձաքննությունը համարվում է նշանակված և ստացված, և որպես փորձագետի եզրակացություն ընդունվում է Ելակետ 1-ը, որով հաստատված է համարվում, որ պատահարի առաջացման մեջ միակ մեղավորը պատահարում ներգրավված միակ ՏՄ-ի վարորդն է: Սույն տողով նախատեսված համաձայնության տրամադրումն իրականացվում է սույն կանոններով սահմանված ժամկետում պատահարի առաջացման պատճառների փորձաքննություն չնշանակելու միջոցով: Սույն տողով նախատեսված դեպքերում ԴՍԱ-ն և ՊԿԱ-ն (ՊԿԱ-ները), համաձայնության տրամադրմամբ հրաժարվում են հետագայում տվյալ պատահարի գծով պատահարի առաջացման պատճառների լրացուցիչ և (կամ) կրկնակի փորձաքննության իրականացման պահանջ ներկայացնելու իրենց իրավունքից:	
4	Ելակետ 1-ում կատարված նշումներին համաձայնության մասին հարցում ստացած և սույն կանոնների համաձայն պատահարի պատճառների փորձաքննություն նշանակած ՊԿԱ-ի կողմից հարցումն ստանալուց հետո՝ տվյալ տեսակի փորձաքննության իրականացման համար սահմանված ժամկետում, համապատասխան փորձաքննության	

	արդյունքների ստացումը և միասնական էլեկտրոնային հարթակում տեղադրումը չապահովելու դեպքում որպես փորձագետի եզրակացություն ընդունվում է Ելակետ 1-ը, որով հաստատված են համարվում մեղավորության մասին նախնական նշումները: Սույն կետով նախատեսված դեպքում միասնական էլեկտրոնային հարթակում փորձաքննության արդյունքների տեղադրման համար սահմանված ժամկետին հաջորդող օրվանից առկա են համարվում սույն աղյուսակի 3-րդ կետով նախատեսված պայմանները՝ այդ կետով սահմանված հետևանքներով, և դրանից հետո ստացված փորձաքննության արդյունքները համարվում են չեղյալ ու ենթակա չեն տեղադրման միասնական էլեկտրոնային հարթակում:	
5	1. Ապահովագրական հատուցումը վճարելու (մերժելու) փաթեթը ծանուցվում է նաև պատահարում ներգրավված և ԱՊՊԱ պատահարի պահին ԱՊՊԱ պայմանագիր չունեցած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ պատշաճ էլեկտրոնային փոստի հասցեին (նման տվյալի առկայության դեպքում): 2. Ապահովագրական հատուցումը մերժելու փաթեթ ծանուցելու դեպքում տվյալ դեպքով հատուցման գործընթացն ավարտվում է, եթե իրավասու անձանց կողմից սույն կանոններով սահմանված կարգով կրկնակի փորձաքննություն իրականացնելու վերաբերյալ դիմում չի ներկայացվում:	
6	ՊԿԱ-ի (ՊԿԱ-ների) անունից պատահարի հետևանքով պատճառված վնասի կրկնակի կամ լրացուցիչ փորձաքննություն իրականացնելու պահանջ ներկայացնելու և լրացուցիչ փորձաքննության իրականացմանը համաձայնություն տրամադրելու նպատակահարմարությունը որոշում և Օրենքով և սույն հավելվածով նախատեսված իրավունքն իրականացնում է ԴՍԱ-ն, բացառությամբ ՊԿԱ հանդիսացող Բյուրոյի, որը կարող է պատահարի հետևանքով պատճառված վնասի կրկնակի կամ լրացուցիչ փորձաքննություն իրականացնելու պահանջ ներկայացնել նաև ինքնուրույն՝ վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ կամ վարորդի հաշվին: Ընդ որում, այն դեպքում, երբ ապահովագրական պատահարի առաջացման պատճառների փորձաքննության արդյունքներով համապատասխան հիմքեր կան վնասների առաջնային և (կամ) լրացուցիչ փորձաքննության արդյունքների վերանայման համար, ԴՍԱ-ն պարտավոր է նշանակել վնասների լրացուցիչ փորձաքննություն:	
7	Պայման 3	ԴՍԱ-ի և Օրենքով նախատեսված այլ անձանց համաձայնությունը լրացուցիչ փորձաքննության անցկացմանը համարվում է ինքնաշխատ տրված, եթե լրացուցիչ փորձաքննության նշանակման դիմումը ներկայացվել է ապահովագրական հատուցումը վճարելու (մերժելու) փաթեթի ծանուցմանը հաջորդող 5 օրվա ընթացքում, կամ եթե լրացուցիչ փորձաքննության պահանջը ներկայացվել է


		փորձաքննության համար հիմք հանդիսացած ելակետային տվյալներում Բյուրոյի կանոններով սահմանված կարգով և ժամկետներում շտկում իրականացնելու արդյունքում:
8	Պայման 4	ԴՍԱ-ն մերժում է լրացուցիչ փորձաքննության նշանակման դիմումը, եթե վերջինս չի ներկայացվել ապահովագրական հատուցումը վճարելու (մերժելու) փաթեթի ծանուցմանը հաջորդող 5 օրվա ընթացքում:
9		Գույքին պատճառված վնասների գծով ապահովագրական հատուցումն իրականացվում է համապատասխան գումար վճարելով կամ վնասը վերականգնելով՝ ըստ տուժողի կողմից հատուցումը վճարելու (մերժելու) փաթեթի ծանուցումից հետո կատարած ընտրության: Ընդ որում, եթե տուժողը սահմանված կարգով ընտրություն չի կատարում, ապա համարվում է, որ նա ընտրել է համապատասխան գումար վճարելու տարբերակը: Այն դեպքերում, երբ գույքին պատճառված վնասի ընդհանուր չափը մինչև ապահովագրական պատահար տեղի ունենալը գույքի շուկայական արժեքի 80 տոկոսը գերազանցելու կամ սույն կանոններով նախատեսված այլ հիմքով այդ գույքին պատճառված վնասների վերականգնումը գնահատվել է որպես ոչ ողջամիտ, ապահովագրական հատուցումն իրականացվում է համապատասխան գումար վճարելով:
		ԴՍԱ-ն պարտավոր է ՀՊԱ-ի կողմից համապատասխան պահանջն ստանալու պահից հետո 2 օրվա ընթացքում վերջինին փոխանցել տվյալ գործով ապահովագրական հատուցման վճարման փաստը հավաստող փաստաթղթի սքանավորված տարբերակը:
Գործընթացի վերաբերյալ ընդհանուր պահանջներ		
Ա		Միևնույն պատահարի գծով ԱՊՊԱ համակարգում պատճառների առաջնային փորձաքննություն կարող է նշանակվել և իրականացվել մեկ անգամ, որի արդյունքները հիմք են ընդունվում, որպես առաջնային փորձաքննության արդյունքներ տվյալ պատահարի գծով իրականացվող բոլոր հատուցման գործընթացներում: Համապատասխանաբար՝ 1. պատահարի պատճառների առաջնային փորձաքննության պատվեր ներկայացված լինելու վերաբերյալ սույն կանոններով սահմանված կարգով ծանուցում ստացած Ապահովագրողները տվյալ պատահարի գծով պատճառների առաջնային փորձաքննության առանձին պատվեր չեն ներկայացնում և արդեն իսկ նշանակված փորձաքննությունն Օրենքի իմաստով համարվում է նշանակված նաև իրենց կողմից,

	2. տվյալ պատահարով հատուցման հետագա բոլոր գործընթացների նկատմամբ կիրառելի չեն (շրջանցվում են) պատահարի պատճառների առաջնային փորձաքննության հետ կապված՝ սույն հավելվածով սահմանված գործողությունները, 3. պատահարի պատճառների առաջնային փորձաքննության եզրակացությանն առաջին անգամ ծանուցվելուց հետո՝ Օրենքով սահմանված ժամկետում, լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննության անցկացման պահանջ չներկայացվելու դեպքում տվյալ պատահարով հատուցման մյուս բոլոր գործընթացների նկատմամբ կիրառելի չեն (շրջանցվում են) պատահարի պատճառների լրացուցիչ և կրկնակի փորձաքննության հետ կապված՝ սույն հավելվածով սահմանված գործողությունները:
Բ	Լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննությունների դիմումի մերժման դեպքում հետագա գործընթացների համար նախատեսված ժամկետների հաշվարկը չի վերսկսվում և շարունակվում է հաշվարկվել ապահովագրական հատուցումը վճարելու (մերժելու) փաթեթի ծանուցման հաջորդող օրվանից սկսված:
Գ	Լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննության անցկացման պահանջ ներկայացնելու համար սահմանված ժամկետի սկիզբ է համարվում առաջին անգամ տվյալ առաջնային (առկայության դեպքում՝ լրացուցիչ) փորձաքննության (փորձաքննությունների) արդյունքների մասին ծանուցում ստանալու օրը (անկախ այն հանգամանքից՝ տվյալ, թե՛ այլ հատուցման գործընթացի շրջանակներում են համապատասխան արդյունքները ծանուցվել), իսկ փորձաքննություն նշանակված ԴՍԱ-ի համար՝ շահագրգիռ անձանց (շահագրգիռ անձանցից վերջինին) առաջին անգամ տվյալ առաջնային (կամ լրացուցիչ (եթե արդեն իրականացվել է)) փորձաքննության (փորձաքննությունների) արդյունքների մասին սույն կանոններով սահմանված կարգով ծանուցելու օրը, բայց ոչ ուշ քան փորձաքննության արդյունքների մասին շահագրգիռ անձանց ծանուցման համար սույն կանոններով սահմանված ժամկետի վերջին օրը:
Դ	Պատահարի պատճառների կամ գույքին պատճառված վնասների կրկնակի փորձաքննություն իրականացվելուց հետո համապատասխանաբար միևնույն պատահարի գծով պատահարի պատճառների կամ տվյալ գույքին պատճառված վնասների լրացուցիչ փորձաքննություն չի կարող նշանակվել:
Ե	Միևնույն պատահարի գծով պատահարի պատճառների, ինչպես նաև տվյալ գույքին պատճառված վնասների կրկնակի և լրացուցիչ փորձաքննություն կարող է նշանակվել առավելագույնը մեկական անգամ՝ համապատասխան փորձաքննության արդյունքների առաջին անգամ (ներառյալ առաջին անգամ ծանուցված արդյունքների ճշգրտման) ծանուցումը ստանալուց հետո, բացառությամբ այն դեպքերի, երբ ապահովագրական պատահարի առաջացման պատճառների փորձաքննության արդյունքներով համապատասխան հիմքեր կան վնասների առաջնային և (կամ)

	լրացուցիչ փորձաքննության արդյունքների վերանայման համար, որի դեպքում վնասների լրացուցիչ փորձաքննությունը կարող է իրականացվել երկրորդ անգամ: Ընդ որում՝ սույն հավելվածով նախատեսված համապատասխան գործընթացների համար նախատեսված ժամկետների հաշվարկը սկսվում է համապատասխան փորձաքննության արդյունքներն առաջին անգամ (ներառյալ առաջին անգամ ծանուցված արդյունքների ճշգրտման) ծանուցումն ստանալու պահից:
Զ	Կրկնակի փորձաքննության արդյունքները հիմք են ընդունվում տվյալ պատահարի գծով իրականացվող բոլոր հատուցման գործընթացներում որպես կրկնակի փորձաքննության արդյունքներ: Համապատասխանաբար, պատահարի պատճառների կրկնակի փորձաքննության արդյունքների առկայության դեպքում տվյալ պատահարով հատուցման հետագա բոլոր գործընթացների նկատմամբ կիրառելի չեն (շրջանցվում են) պատահարի պատճառների կրկնակի փորձաքննության հետ կապված՝ սույն հավելվածով սահմանված գործողությունները:
Է	(Ուժը կորցրել է Բյուրոյի խորհրդի 25.04.2023թ.-ի թիվ 15-Լ որոշմամբ:)
Ը	Եթե պատահարի առաջացման պատճառների առաջնային, լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննության ընթացքում կամ դրանց արդյունքների ծանուցումից հետո, բայց ոչ ուշ քան համապատասխան փորձաքննության հիման վրա ընդունված ապահովագրական հատուցում վճարելու (մերժելու) վերաբերյալ որոշումն ուժի մեջ մտնելուն հաջորդող տասներորդ օրը, իսկ ԴՍԱ-ի և ՀՊԱ-ի փոխադարձ համաձայնության դեպքում՝ նաև մեկ ամիսը, որևէ եղանակով ԴՍԱ-ին (առաջնային կամ լրացուցիչ փորձաքննության արդյունքների ծանուցումից հետո՝ Բյուրոյին) ներկայացվել է այդ փորձաքննությունների հիմքում դրված Ելակետ 1-ի և (կամ) Ելակետ 2-ի՝ սահմանված կարգով շտկված տարբերակը կամ տվյալ պատահարի հանգամանքներն ընդգրկող տեսագրությունը, որը տարբերվում է համապատասխանաբար առաջնային, լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննության հիմքում նախկինում դրված տեսագրությունից կամ փորձաքննության հիմքում նախկինում տեսագրություն առկա չի եղել (այսուհետ սույն պարբերությունում՝ շտկված կամ նոր ելակետային տվյալներ), ապա ԴՍԱ-ն (առաջնային կամ լրացուցիչ փորձաքննության արդյունքները ծանուցված լինելու դեպքում՝ Բյուրոն) վերջին փորձաքննություն իրականացնող կամ իրականացրած միևնույն փորձագետին տրամադրում է շտկված կամ նոր ելակետային տվյալները, իսկ համապատասխան փորձագետը իր փորձագիտական եզրակացության հիմքում դնում է շտկված կամ նոր ելակետային տվյալները, իսկ փորձագիտական եզրակացությունն արդեն իսկ տրամադրած լինելու դեպքում՝ սույն կանոններով տվյալ փորձաքննության համար սահմանված միևնույն ժամկետներում տրամադրում է շտկված կամ նոր ելակետային տվյալների հիման վրա ճշգրտված փորձաքննության եզրակացությունը կամ պատասխանում է, որ շտկված կամ նոր ելակետային տվյալները որևէ ազդեցություն չունեն նախկինում տվյալ գործով իր կողմից տրամադրված եզրակացության վրա: Համապատասխանաբար, այն դեպքում, երբ փորձագետի կողմից տրամադրվում է ճշգրտված փորձագիտական եզրակացություն, դրա հիման վրա ճշգրտվում են նաև սույն կանոնների համաձայն արդեն իսկ

	իրականացված գործընթացներն ու որոշումները: Ընդ որում, շտկված կամ նոր ելակետային տվյալների հիման վրա ճշգրտված փորձաքննության եզրակացություն տրամադրելու համար փորձագետի կողմից լրացուցիչ վճար պահանջվելու դեպքում ԴՍԱ-ի (Բյուրոյի) կողմից փորձաքննության արդյունքների ճշգրտման գործընթացի նախաձեռնումը կարող է պայմանավորվել հատուցման գործընթացում ներգրավված որևէ անձի կողմից այդ վճարի կատարման պարտավորությունն ստանձնելու հանգամանքով: (լրաց. է 29/03/2022թ թիվ 6-Լ)
Հոսքագրի տեխնիկական մասի բացատրություններ	
	Գործողություն
	Ժամկետ (գործողության համար նախատեսված առավելագույն աշխատանքային օրեր)
	Պատասխանատու
	Պայման
	Պարտադիր գործողություն
	Պարտադիր է զուգահեռ գործողություններից որևէ մեկը
Հոսքագրում յուրաքանչյուր փուլի գործընթացն սկսվում է նախորդ գործընթացից հետո: Ընդ որում, ներկայացված դիմումի հիման վրա սահմանված ժամկետում հոսքագրով նախատեսված համապատասխան գործողությունը Բյուրոյի կամ ԴՍԱ-ի կողմից չիրականացվելու դեպքում նախքան այդ գործողության իրականացումը չի սկսվում հաջորդ փուլի գործընթացը (եթե կոնկրետ փուլի համար այլ բան նախատեսված չէ սույն հավելվածով), և սահմանված ժամկետների կետանցման համար համապատասխան ուշացված օրերի համար տույժերի վճարման պատասխանատվությունը կրում է սահմանված ժամկետում համապատասխան գործողությունը չիրականացրած Բյուրոն (ԴՍԱ-ն): Սահմանված ժամկետների կետանցմամբ դիմումի մերժումը հիմք չէ դիմումատուի կամ այլ անձանց համար հոսքագրով նախատեսված գործողությունների համար սահմանված ժամկետների երկարաձգման կամ վերսկսման համար: (լրաց. է 31/03/2020թ թիվ 9-Լ)	
Գործընթացների հաջորդականությունն իրականացվում է սլաքների ուղղությամբ:	
Հոսքագրում զուգահեռ գործողությունները տարբեր ժամկետներ ունենալու դեպքում հիմք է ընդունվում առավելագույն ժամկետ ունեցող գործողության ժամկետը:	

Հավելված 6.3. Ստանդարտ հատուցման գործընթաց 2-ի գործողությունների հաջորդականություն



Հավելված 6.3-ին վերաբերող նշումներ և այլ պահանջներ

Հասկացություններ

Կողմեր՝ տվյալ պատահարում ներգրավված Տուժողներ, Ապահովադիրներ և Ապահովագրված անձինք:

Հոսքագրից հղումներ (աղյուսակի առաջին սյունակում նշված են հղումների համարները)

1	1. Ապահովագրական հատուցումը վճարելու (մերժելու) փաթեթը ծանուցվում է նաև պատահարում ներգրավված և ԱՊՊԱ պատահարի պահին ԱՊՊԱ պայմանագիր չունեցած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ պատշաճ էլեկտրոնային փոստի հասցեին (նման տվյալի առկայության դեպքում): 2. Ապահովագրական հատուցումը մերժելու փաթեթ ծանուցելու դեպքում տվյալ դեպքով հատուցման գործընթացն ավարտվում է, եթե իրավասու անձանց կողմից սույն կանոններով սահմանված կարգով կրկնակի փորձաքննություն իրականացնելու վերաբերյալ դիմում չի ներկայացվում:
2	ՊԿԱ-ի (ՊԿԱ-ների) անունից պատահարի հետևանքով պատճառված վնասի կրկնակի կամ լրացուցիչ փորձաքննություն իրականացնելու պահանջ ներկայացնելու և լրացուցիչ փորձաքննության իրականացմանը համաձայնություն տրամադրելու նպատակահարմարությունը որոշում և Օրենքով նախատեսված իրավունքն իրականացնում է ԴՍԱ-ն, բացառությամբ ՊԿԱ հանդիսացող Բյուրոյի, որը կարող է պատահարի հետևանքով պատճառված վնասի կրկնակի կամ լրացուցիչ փորձաքննություն իրականացնելու պահանջ ներկայացնել նաև ինքնուրույն՝ վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ կամ վարորդի հաշվին: Ընդ որում, այն դեպքում, երբ ապահովագրական պատահարի առաջացման պատճառների փորձաքննության արդյունքներով համապատասխան հիմքեր կան վնասների առաջնային և (կամ) լրացուցիչ փորձաքննության արդյունքների վերանայման համար, ԴՍԱ-ն պարտավոր է նշանակել վնասների լրացուցիչ փորձաքննություն:
3	Պայման 3 ԴՍԱ-ի և Օրենքով նախատեսված այլ անձանց համաձայնությունը լրացուցիչ փորձաքննության անցկացմանը համարվում է ինքնաշխատ տրված, եթե լրացուցիչ փորձաքննության նշանակման դիմումը ներկայացվել է ապահովագրական հատուցումը վճարելու (մերժելու) փաթեթի ծանուցմանը հաջորդող 5 օրվա ընթացքում

4	Պայման 4	ԴՍԱ-ն մերժում է լրացուցիչ փորձաքննության նշանակման դիմումը, եթե վերջինս չի ներկայացվել ապահովագրական հատուցումը վճարելու (մերժելու) փաթեթի ծանուցմանը հաջորդող 5 օրվա ընթացքում:
5		Գույքին պատճառված վնասների գծով ապահովագրական հատուցումն իրականացվում է համապատասխան գումար վճարելով կամ վնասը վերականգնելով՝ ըստ տուժողի կողմից հատուցումը վճարելու (մերժելու) փաթեթի ծանուցումից հետո կատարած ընտրության: Ընդ որում, եթե տուժողը սահմանված կարգով ընտրություն չի կատարում, ապա համարվում է, որ նա ընտրել է համապատասխան գումար վճարելու տարբերակը: Այն դեպքերում, երբ գույքին պատճառված վնասի ընդհանուր չափը մինչև ապահովագրական պատահար տեղի ունենալը գույքի շուկայական արժեքի 80 տոկոսը գերազանցելու կամ սույն կանոններով նախատեսված այլ հիմքով այդ գույքին պատճառված վնասների վերականգնումը գնահատվել է որպես ոչ ողջամիտ, ապահովագրական հատուցումն իրականացվում է համապատասխան գումար վճարելով: ԴՍԱ-ն պարտավոր է ՀՊԱ-ի կողմից համապատասխան պահանջն ստանալու պահից հետո 2 օրվա ընթացքում վերջինին փոխանցել տվյալ գործով ապահովագրական հատուցման վճարման փաստը հավաստող փաստաթղթի սքանավորված տարբերակը:
6		Գույքին պատճառված վնասների առանձնացված գնահատման իրականացման կարգն ու պայմանները, ինչպես նաև դրա իրականացման դեպքում սույն հավելվածով նախատեսված գործընթացների առանձնահատկությունները սահմանվում են սույն կանոնների 103-րդ կետով:
Գործընթացի վերաբերյալ ընդհանուր պահանջներ		
Ա		Միևնույն պատահարի գծով ԱՊՊԱ համակարգում պատճառների առաջնային փորձաքննություն կարող է իրականացվել մեկ անգամ, որի արդյունքները հիմք են ընդունվում որպես առաջնային փորձաքննության արդյունքներ տվյալ պատահարի գծով իրականացվող բոլոր հատուցման գործընթացներում: Համապատասխանաբար՝ 1. պատահարի պատճառների առաջնային փորձաքննության պատվեր ներկայացված լինելու վերաբերյալ սույն կանոններով սահմանված կարգով ծանուցում ստացած Ապահովագրողները տվյալ պատահարի գծով պատճառների առաջնային փորձաքննության առանձին պատվեր ներկայացնում, և արդեն իսկ նշանակված փորձաքննությունն Օրենքի իմաստով համարվում է նշանակված նաև իրենց կողմից,



	2. տվյալ պատահարով հատուցման հետագա բոլոր գործընթացների նկատմամբ կիրառելի չեն (շրջանցվում են) պատահարի պատճառների առաջնային փորձաքննության հետ կապված սույն հավելվածով սահմանված գործողությունները, 3. պատահարի պատճառների առաջնային փորձաքննության եզրակացությանն առաջին անգամ ծանուցվելուց հետո՝ Օրենքով սահմանված ժամկետում, լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննության անցկացման պահանջ չներկայացվելու դեպքում տվյալ պատահարով հատուցման մյուս բոլոր գործընթացների նկատմամբ կիրառելի չեն (շրջանցվում են) պատահարի պատճառների լրացուցիչ և կրկնակի փորձաքննության հետ կապված՝ սույն հավելվածով սահմանված գործողությունները:
Բ	Լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննությունների դիմումի մերժման դեպքում հետագա գործընթացների համար նախատեսված ժամկետների հաշվարկը չի վերսկսվում և շարունակվում է հաշվարկվել ապահովագրական հատուցումը վճարելու (մերժելու) փաթեթի ծանուցման հաջորդող օրվանից սկսված:
Գ	Լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննության անցկացման պահանջ ներկայացնելու համար սահմանված ժամկետի սկիզբ է համարվում առաջին անգամ տվյալ առաջնային (առկայության դեպքում՝ լրացուցիչ) փորձաքննության (փորձաքննությունների) արդյունքների մասին ծանուցում ստանալու օրը (անկախ այն հանգամանքից՝ տվյալ, թե՞ այլ հատուցման գործընթացի շրջանակներում են համապատասխան արդյունքները ծանուցվել), իսկ փորձաքննություն նշանակած ԴՍԱ-ի համար՝ շահագրգիռ անձանց (շահագրգիռ անձանցից վերջինին) առաջին անգամ տվյալ առաջնային (կամ լրացուցիչ (եթե արդեն իրականացվել է)) փորձաքննության (փորձաքննությունների) արդյունքների մասին սույն կանոններով սահմանված կարգով ծանուցելու օրը, բայց ոչ ուշ քան փորձաքննության արդյունքների մասին շահագրգիռ անձանց ծանուցման համար սույն կանոններով սահմանված ժամկետի վերջին օրը:
Դ	Պատահարի պատճառների կամ գույքին պատճառված վնասների կրկնակի փորձաքննություն իրականացվելուց հետո համապատասխանաբար միևնույն պատահարի գծով պատահարի պատճառների կամ տվյալ գույքին պատճառված վնասների լրացուցիչ փորձաքննություն չի կարող նշանակվել:
Ե	Միևնույն պատահարի գծով պատահարի պատճառների, ինչպես նաև տվյալ գույքին պատճառված վնասների կրկնակի և լրացուցիչ փորձաքննություն կարող է նշանակվել առավելագույնը մեկական անգամ՝ համապատասխան փորձաքննության արդյունքների առաջին անգամ (ներառյալ առաջին անգամ ծանուցված արդյունքների ճշգրտման) ծանուցումը ստանալուց հետո բացառությամբ այն դեպքերի, երբ ապահովագրական պատահարի առաջացման պատճառների կրկնակի փորձաքննության արդյունքներով համապատասխան հիմքեր կան վնասների առաջնային

	և/կամ լրացուցիչ փորձաքննության արդյունքների վերանայման համար, որի դեպքում վնասների լրացուցիչ փորձաքննությունը կարող է իրականացվել երկրորդ անգամ: Ընդ որում՝ սույն հավելվածով նախատեսված համապատասխան գործընթացների համար նախատեսված ժամկետների հաշվարկը սկսվում է համապատասխան փորձաքննության արդյունքներն առաջին անգամ (ներառյալ առաջին անգամ ծանուցված արդյունքների ճշգրտման) ծանուցումն ստանալու պահից:
Զ	Կրկնակի փորձաքննության արդյունքները հիմք են ընդունվում տվյալ պատահարի գծով իրականացվող բոլոր հատուցման գործընթացներում որպես կրկնակի փորձաքննության արդյունքներ: Համապատասխանաբար, պատահարի պատճառների կրկնակի փորձաքննության արդյունքների առկայության դեպքում տվյալ պատահարով հատուցման հետագա բոլոր գործընթացների նկատմամբ կիրառելի չեն (շրջանցվում են) պատահարի պատճառների կրկնակի փորձաքննության հետ կապված սույն հավելվածով սահմանված գործողությունները:
Է	<i>(Ուժը կորցրել է Բյուրոյի խորհրդի 25"04"2023թ"-ի թիվ 15-Լ որոշմամբ:)</i>
Ը	Անձնական վնասների հատուցման գործընթացում կիրառելի չեն (շրջանցվում են) գույքին պատճառված վնասների փորձաքննության և հատուցման ձևի ընտրության հետ կապված սույն հավելվածով սահմանված գործողությունները:
Թ	Մեկ ավտոտրանսպորտային միջոցի մասնակցությամբ ԱՊՊԱ պատահարի հետևանքով տուժողին պատճառված անձնական վնասների հատուցման գործընթացում կիրառելի չեն (շրջանցվում են) պատահարի պատճառների փորձաքննության հետ կապված սույն հավելվածով սահմանված գործողությունները:
Ժ	Եթե առկա է քաղաքացիական, քրեական կամ դատական կարգով հարուցված վարչական գործ, և ապահովագրական հատուցման վճարումը կախված է այդ գործի ելքից, ապա փորձաքննությունն նշանակելու, ապահովագրական հատուցումը վճարելու կամ ապահովագրական հատուցման վճարումը մերժելու մասին որոշում ընդունելու կամ փորձաքննության անցկացման, ինչպես նաև այդ որոշումների և փորձաքննության արդյունքների մասին ծանուցելու՝ Օրենքով և սույն կանոններով սահմանված ժամկետները կասեցվում են մինչև տվյալ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու օրը, ինչի մասին կասեցումից մեկ օրվա ընթացքում ԴՍԱ-ն Հավելված 1-ի Ձև 2.6-ով սահմանված ձևով ծանուցում է այն անձանց, ում սույն կանոնների համաձայն պարտավոր է ծանուցել ապահովագրական հատուցումը վճարելու (մերժելու) վերաբերյալ որոշումը: Ընդ որում, ապահովագրական պատահարի հիման վրա հարուցված քրեական գործով վարույթը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին (հայտնի չէ անձը, որը գործով պետք է ներգրավվի որպես մեղադրյալ) կամ 2-րդ (մեղադրյալը թաքնվել է քննությունից կամ դատից, կամ

	նրա գտնվելու վայրն այլ պատճառներով պարզված չէ) կետով սահմանված հիմքով կասեցվելը դիտվում է որպես հարուցված գործն ըստ էության լուծող դատական ակտի չընդունում, որի դեպքում Օրենքի 21-րդ հոդվածի ուժով պատճառված վնասների չափը գնահատվում է, և դրանում անձի մեղավորության աստիճանը որոշվում է փորձագետի (բժշկական կամ այլ հաստատության կամ մասնագետի) կողմից: (լրաց. է 30/03/2021թ թիվ 12-Լ)
Ի	Ապահովագրական հատուցում վճարելու մասին որոշումն ուժի մեջ մտնելուց հետո տուժողի կողմից տվյալ ԱՊՊԱ պատահարի հետևանքով առաջացած անձնական վնասի չափի վրա ազդող լրացուցիչ փաստաթղթեր ԴՍԱ-ին ներկայացնելը Օրենքի և սույն կանոնների իմաստով չի դիտվում որպես ապահովագրական հատուցում ստանալու վերաբերյալ նոր դիմում, և ԴՍԱ-ն, ստանալով համապատասխան փաստաթղթերը, պարտավոր է վերաբացել նախկինում սկսված հատուցման գործընթացը և երեք օրվա ընթացքում որոշում կայացնել նշանակված ապահովագրական հատուցման չափը մեծացնելու (լրացուցիչ ապահովագրական հատուցում վճարելու), նվազեցնելու կամ ապահովագրական հատուցման վճարումը դադարեցնելու մասին՝ ընդունված որոշման հետ կապված հետագա գործընթացները կազմակերպելով Հավելված 6.3-ով սահմանված ընդհանուր կարգով: (փոփ. է 30/03/2021թ թիվ 12-Լ)
Լ	Եթե պատահարի առաջացման պատճառների առաջնային, լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննության ընթացքում կամ դրանց արդյունքների ծանուցումից հետո, բայց ոչ ուշ քան համապատասխան փորձաքննության հիման վրա ընդունված ապահովագրական հատուցում վճարելու (մերժելու) վերաբերյալ որոշումն ուժի մեջ մտնելուն հաջորդող տասներորդ օրը, իսկ ԴՍԱ-ի և ՀՊԱ-ի փոխադարձ համաձայնության դեպքում՝ նաև մեկ ամիսը, որևէ եղանակով ԴՍԱ-ին (առաջնային կամ լրացուցիչ փորձաքննության արդյունքների ծանուցումից հետո՝ Բյուրոյին) ներկայացվել է այդ փորձաքննությունների հիմքում դրված Ելակետ 1-ի և (կամ) Ելակետ 2-ի՝ սահմանված կարգով շտկված տարբերակը, տվյալ պատահարի հանգամանքներն ընդգրկող տեսագրությունը, որը տարբերվում է համապատասխանաբար առաջնային, լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննության հիմքում նախկինում դրված տեսագրությունից կամ փորձաքննության հիմքում նախկինում տեսագրություն առկա չի եղել (այսուհետ սույն պարբերությունում՝ շտկված կամ նոր ելակետային տվյալներ), ապա ԴՍԱ-ն (առաջնային կամ լրացուցիչ փորձաքննության արդյունքները ծանուցված լինելու դեպքում՝ Բյուրոն) վերջին փորձաքննություն իրականացնող կամ իրականացրած միևնույն փորձագետին տրամադրում է շտկված կամ նոր ելակետային տվյալները, իսկ համապատասխան փորձագետը իր փորձագիտական եզրակացության հիմքում դնում է շտկված կամ նոր ելակետային տվյալները, իսկ փորձագիտական եզրակացությունն արդեն իսկ տրամադրած լինելու դեպքում՝ սույն

	կանոններով տվյալ փորձաքննության համար սահմանված միևնույն ժամկետներում տրամադրում է շտկված կամ նոր ելակետային տվյալների հիման վրա ճշգրտված փորձաքննության եզրակացությունը կամ պատասխանում է, որ կամ նոր ելակետային տվյալները որևէ ազդեցություն չունեն նախկինում տվյալ գործով իր կողմից տրամադրված եզրակացության վրա: Համապատասխանաբար, այն դեպքում, երբ փորձագետի կողմից տրամադրվում է ճշգրտված փորձագիտական եզրակացություն, դրա հիման վրա ճշգրտվում են նաև սույն կանոնների համաձայն արդեն իսկ իրականացված գործընթացներն ու որոշումները: Ընդ որում, շտկված կամ նոր ելակետային տվյալների հիման վրա ճշգրտված փորձաքննության եզրակացություն տրամադրելու համար փորձագետի կողմից լրացուցիչ վճար պահանջվելու դեպքում ԴՍԱ-ի (Բյուրոյի) կողմից փորձաքննության արդյունքների ճշգրտման գործընթացի նախաձեռնումը կարող է պայմանավորվել հատուցման գործընթացում ներգրավված որևէ անձի կողմից այդ վճարի կատարման պարտավորությունն ստանձնելու հանգամանքով: (լրաց. է 29/03/2022թ թիվ 6-Լ)
--	--

Հոսքագրի տեխնիկական մասի բացատրություններ

	Գործողություն
	Ժամկետ (գործողության համար նախատեսված առավելագույն աշխատանքային օրեր)
	Պատասխանատու
	Պայման
	Պարտադիր գործողություն
	Պարտադիր է զուգահեռ գործողություններից որևէ մեկը

Հոսքագրում յուրաքանչյուր փուլի գործընթացն սկսվում է նախորդ գործընթացից հետո: Ընդ որում, ներկայացված դիմումի հիման վրա սահմանված ժամկետում հոսքագրով նախատեսված համապատասխան գործողությունը Բյուրոյի կամ ԴՍԱ-ի կողմից չիրականացվելու դեպքում նախքան այդ գործողության իրականացումը չի սկսվում հաջորդ փուլի գործընթացը (եթե կոնկրետ փուլի համար այլ բան նախատեսված չէ սույն հավելվածով), և սահմանված ժամկետների կետանցման համար համապատասխան ուշացված օրերի համար տույժերի վճարման պատասխանատվությունը կրում է սահմանված ժամկետում համապատասխան գործողությունը չիրականացրած Բյուրոն (ԴՍԱ-ն): Սահմանված ժամկետների կետանցմամբ դիմումի մերժումը հիմք չէ դիմումատուի կամ այլ անձանց համար հոսքագրով նախատեսված

գործողությունների համար սահմանված ժամկետների երկարաձգման կամ վերսկսման համար: (լրաց. է 31/03/2020թ թիվ 9-Լ)
Գործընթացների հաջորդականությունն իրականացվում է սլաքների ուղղությամբ:
Հոսքագրում զուգահեռ գործողությունները տարբեր ժամկետներ ունենալու դեպքում հիմք է ընդունվում առավելագույն ժամկետ ունեցող գործողության ժամկետը:

Հավելված 6.3.1

«ԱՊՊԱ ընդհանուր պայմաններ» RL 1-001 կանոնների

ԱՊՊԱ ՊԱՏԱՀԱՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՏՈՒԺՈՂՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԿԱՆԽԱՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

1. ԱՊՊԱ պատահարի հետևանքով տուժողների առողջությանը պատճառված վնասների հետ կապված կանխավճարների համակարգում կանխավճարների կատարման պարտավորություն ունեցող անձը ԴՍԱ-ն է:

2. Կանխավճարները կատարվում են ԱՊՊԱ պատահարի հետևանքով տուժողներին ամբուլատոր-առաջնային և հիվանդանոցային բժշկական օգնություն ցուցաբերելու և առողջությունը վերականգնելու հետ կապված ծախսերի գծով:

3. Կանխավճարները կատարվում են նախքան պատահարի մեջ սահմանված կարգով մեղավորության որոշումը կամ անհայտ Ավտոտրանսպորտային միջոցով անձնական վնասի պատճառման հանգամանքի հաստատումը և (կամ) նման որոշումները պարունակող փաստաթղթի՝ ԴՍԱ-ի կողմից ստացումը:

4. Կանխավճարները կատարվում են յուրաքանչյուր տուժողին մինչև հինգ հարյուր հազար ՀՀ դրամի չափով, բացառությամբ սույն հավելվածի 4.1-րդ կետով նախատեսված դեպքերի: Հիվանդանոցային բժշկական օգնություն ցուցաբերելու ընթացքում մետաղական կոնստրուկցիաների կամ իմպլանտների օգտագործման դեպքում կանխավճարները կատարվում են հավելյալ մինչև երեք հարյուր հազար ՀՀ դրամի չափով: Ընդ որում, եթե օգտագործվող մետաղական կոնստրուկցիան կամ իմպլանտը տուժողին տրամադրվել է հիվանդանոցային բժշկական օգնություն ցուցաբերող բժշկական հաստատության կողմից, և մետաղական կոնստրուկցիայի կամ իմպլանտի գինը ցածր է եղել երեք հարյուր հազար ՀՀ դրամից, ապա մնացորդային գումարը որպես կանխավճար փոխանցվում է տվյալ բժշկական հաստատության կողմից տուժողին մատուցված այլ ծառայությունների համար: ԴՍԱ-ն իր հայեցողությամբ՝ կարող է կատարել սույն կետով նախատեսված գումարից ավելի մեծ գումարի (բայց ոչ ավելի, քան մեկ տուժողի գծով՝ ըստ յուրաքանչյուր տուժողի անձնական վնասների համար սահմանված ապահովագրական գումարը, և մեկ պատահարի գծով՝ ըստ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի անձնական վնասների համար սահմանված ապահովագրական գումարը) չափով կանխավճար:

4.1. Պատահարում որպես ուղևոր կամ հետիոտն ներգրավված տուժողների (բացառությամբ, եթե վերջինները հանդիսանում են պատահարում ներգրավված ավտոտրանսպորտային միջոցներից որևէ մեկի սեփականատեր) գծով կանխավճարները կատարվում են մեկ տուժողի գծով՝ ըստ յուրաքանչյուր տուժողի

անձնական վնասների համար սահմանված ապահովագրական գումարի և մեկ պատահարի գծով՝ ըստ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի անձնական վնասների համար սահմանված ապահովագրական գումարի սահմաններում:

5. Կանխավճարների գործընթացն սկսելու համար հիմք է հանդիսանում որևէ շահագրգիռ անձի կողմից գրավոր՝ ներառյալ էլեկտրոնային եղանակով, կամ բանավոր՝ ԴՍԱ-ի շուրջօրյա գործող հեռախոսահամարով ստացված զանգով կամ ԱՄՄՊ-ի կամ հաղորդակցման այլ եղանակների միջոցով պատահարի մասին ԴՍԱ-ի տեղեկացումը: Նման տեղեկացումից հետո ԴՍԱ-ն պետք է անմիջապես կապ հաստատի տուժողին ամբուլատոր-առաջնային և (կամ) հիվանդանոցային բժշկական օգնության և (կամ) առողջության վերականգնման ուղղությամբ ծառայություններ մատուցող կամ մատուցած բժշկական հաստատության հետ և միջոցներ ձեռնարկի սույն հավելվածով սահմանված կարգով համապատասխան ծառայությունների գծով կանխավճարներ կատարելու ուղղությամբ: *(ըստ. է 27/10/2020թ թիվ 38-Լ)*

6. Կանխավճարները վճարվում են սույն կանոնների Հավելված 8.2-ի ենթահավելված 8.2.1-ով սահմանված պահանջներին համապատասխան:

7. Կանխավճարները վճարվում են ԴՍԱ-ին՝ ներառյալ նրա անունից ապահովագրական հատուցումների կարգավորման իրավասությամբ օժտված աշխատակցին (ներկայացուցչին) ներկայացված կամ ԱՄՄՊ-ի կամ հաղորդակցման այլ եղանակների միջոցով հասանելի դարձված հետևյալ փաստաթղթերի հիման վրա՝

1) քաղվածք հիվանդության պատմությունից (էպիկրիզ) և (կամ) ամբուլատոր քարտից՝ հաստատված բուժող բժշկի ստորագրությամբ և բժշկական հաստատության կնիքով (առկայության դեպքում),

2) միասնական էլեկտրոնային համակարգով պատշաճ կերպով դուրս գրված հաշիվ կամ բուժհաստատության (մետաղական կոնստրուկցիա կամ իմպլանտ մատակարարող կազմակերպության) ղեկավարի և գլխավոր հաշվապահի կողմից ստորագրված և կնքված (կնիքի առկայության դեպքում) թղթային հաշիվ, որոնցում պետք է արտացոլված լինեն նաև բժշկական ծառայություն ստացած անձի անունը, ազգանունը և մատուցված բժշկական ծառայության (տրամադրված մետաղական կոնստրուկցիայի կամ իմպլանտի) տեսակը,

3) բժշկական օգնություն կամ առողջության վերականգնման հետ կապված ծառայություն ստացած (ստացող) անձի անձը հաստատող փաստաթղթի պատճենը,

4) բժշկական օգնություն կամ առողջության վերականգնման հետ կապված ծառայություն ստացած (ստացող) անձից կամ նրա օրինական ներկայացուցչից վերցված՝ համապատասխան Կանխավճարի վճարման պարտավորություն ունեցող

անձին ուղղված ապահովագրական հատուցում ստանալու վերաբերյալ դիմում՝ համաձայն սույն կանոնների 1-ին հավելվածի Ձև 2.2-ի, կամ տուժողի կողմից այդպիսի դիմում ներկայացնելու անհնարինության (մահվան, անգիտակից վիճակում գտնվելու կամ այլ հիմքով) վերաբերյալ գրավոր հիմնավորում, բացառությամբ այն դեպքերի, երբ նշված անհնարինությունն ակնհայտ բխում է սույն կետի համաձայն ներկայացված այլ փաստաթղթերից: Ընդ որում, սույն ենթակետով նախատեսված դիմումը կարող է ներկայացվել ինչպես անմիջապես համապատասխան Ապահովագրողի ներկայացուցչին, այնպես էլ բժշկական հաստատության միջոցով: (7-րդ կետը լրաց. է 27/10/2020թ թիվ 38-Լ)

8. ԴՍԱ-ն պարտավոր է հաշիվը սույն կանոնների համաձայն իրեն ներկայացվելու ամսաթվից հետո՝ 5 օրվա ընթացքում, կանխավճարի կատարման համար սույն կանոններով նախատեսված բոլոր փաստաթղթերի առկայության դեպքում՝ կատարել վճարում, իսկ որևէ փաստաթղթի բացակայության դեպքում՝ բժշկական հաստատությանը (մետաղական կոնստրուկցիա կամ իմպլանտ մատակարարող կազմակերպությանը) գրավոր ներկայացնել սույն կանոններով նախատեսված այն փաստաթղթերի ցանկը, որոնք դեռևս իրեն չեն ներկայացվել (հասանելի դարձվել): Նման դեպքերում ԴՍԱ-ն կանխավճարների կատարումն իրականացնում է վերջին փաստաթուղթն ստանալուց (հասանելի դառնալուց) հետո՝ 5 օրվա ընթացքում: (լրաց. է 27/10/2020թ թիվ 38-Լ)

9. Առանց ապահովագրական հատուցում ստանալու մասին դիմումի կանխավճարներ կատարող ԴՍԱ-ն պետք է միջոցներ ձեռնարկի, որպեսզի համապատասխան տուժողը կամ նրա իրավահաջորդը անձամբ կամ ներկայացուցչի միջոցով առաջին իսկ հնարավորության դեպքում ներկայացնեն այդ դիմումը: Եթե պատահարից հետո՝ երեք ամսվա ընթացքում, ԴՍԱ-ն հնարավորություն չի ունենում ձեռնարկել սույն կետով նախատեսված գործողությունները կամ չնայած ձեռնարկած ողջամիտ միջոցներին՝ համապատասխան տուժողը կամ նրա իրավահաջորդը սահմանված ձևի ապահովագրական հատուցում ստանալու մասին դիմում չի ներկայացնում կամ հրաժարվում է այդպիսի դիմում ներկայացնելուց, ապա ԴՍԱ-ն իրավունք ունի դադարեցնել տվյալ տուժողի գծով կանխավճարների հետագա կատարումը և (կամ) հետադարձ պահանջի իրավունքով դիմել նրան կամ նրա իրավահաջորդին՝ արդեն վճարված կանխավճարների գումարները հետ ստանալու պահանջով:

10. Սույն կանոններով սահմանված կարգով ԴՍԱ-ի կողմից հատուցում վճարելու վերաբերյալ որոշում կայացվելու դեպքում վճարված կանխավճարների գումարները համարվում են համապատասխան տուժողին (նրա իրավահաջորդին) կատարվող ապահովագրական հատուցման կանխավճարներ և նվազեցվում են

նրան վճարվող հատուցման գումարից: Տուժողին հատուցման վճարումը մերժելու մասին որոշում կայացվելու դեպքում ԴՍԱ-ն միջոցներ է ձեռնարկում համապատասխան տուժողի համար որպես կանխավճարներ վճարված գումարները նրանից կամ նրա իրավահաջորդից հետ ստանալու ուղղությամբ: (փոփ. է 29/09/2020թ թիվ 34-Լ)

11. Սույն հավելվածով սահմանված համակարգը չի գործում՝

1) այն անձանց նկատմամբ, ովքեր Օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ ապահովագրական հատուցում ստանալու իրավունքից չեն օգտվում,

2) Օրենքի 25-րդ հոդվածով սահմանված վնասների մասով:

12. Այն դեպքում, երբ կանխավճարների վճարման համար փաստաթղթերն ստանալուց կամ դրանց դիմաց վճարումն իրականացնելուց հետո պարզվում է, որ փաստաթղթերն ստացած և (կամ) վճարումն իրականացրած անձը ԴՍԱ-ն չէ, ապա այդ անձը պարտավոր է իրեն փաստաթղթեր ներկայացրած, սակայն վճարում չստացած բժշկական հաստատություններին ողջամիտ ժամկետում հայտնել իրական ԴՍԱ-ի մասին, ինչպես նաև ԴՍԱ-ին փոխանցել տվյալ տուժողի գծով իր մոտ առկա բոլոր փաստաթղթերը: ԴՍԱ-ն, ստանալով սույն կանոնների 7-րդ կետով նախատեսված փաստաթղթերը և դրանց դիմաց ԴՍԱ չհանդիսացող անձի կողմից վճարում կատարված լինելու փաստը հավաստող փաստաթղթերը, պարտավոր է 3 օրվա ընթացքում վերջինին վերադարձնել վճարված կանխավճարի գումարները: (12-րդ կետը լրաց. է 30/01/2018թ թիվ 1-Լ և փոփ. է 30/03/2021թ թիվ 12-Լ)

**ԱՊՊԱ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

ԳԼՈՒԽ 1. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն հավելվածով սահմանվում են՝

- 1) ԱՊՊԱ ոլորտում պատահարի պատճառների փորձաքննության գործընթացի կազմակերպման կարգն ու ընդհանուր սկզբունքները,
- 2) ԱՊՊԱ ոլորտում պատահարի պատճառների փորձաքննության մեթոդաբանությունը:

2. Սույն հավելվածով չեն կարգավորվում քրեական և վարչական վարույթ իրականացնող մարմինների գործողությունները: Սույն կետով նախատեսված մարմինների կողմից պատահարի պատճառների փորձագիտական եզրակացությունը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ պատահարի գծով համապատասխան ակտ (արձանագրություն, որոշում, եզրակացություն կամ այլ նմանատիպ փաստաթուղթ) կազմելու միջոցով: Ընդ որում՝ Ելակետ 1-ը համարվում է պատահարի պատճառների փորձագիտական եզրակացություն՝ Հավելված 6.2-ով նախատեսված դեպքերում:

2.1. Սույն հավելվածով սահմանված կարգավորումները տարածվում են Պարզեցված հատուցման գործընթացի շրջանակներում իրականացվող հետքաբանական և (կամ) նյութագիտական փորձաքննությունների վրա կիրառելիության դեպքում:

2.2. Սույն հավելվածով չեն կարգավորվում սույն կանոններով նախատեսված դեպքերում ԱՄՄՊ համակարգում ինքնաշխատ ձևավորված պատահարի պատճառների փորձաքննությունների իրականացման հետ կապված հարաբերությունները: Սույն կետով նախատեսված փորձագիտական եզրակացությունները ձևավորվում են՝ հաշվի առնելով փորձաքննության համար տրամադրված համադրելի ելակետային տվյալների հիման վրա նախկինում տրամադրված փորձաքննության արդյունքները: (սույն կետով նախատեսված կարգավորումներն ուժի մեջ կմտնեն համապատասխան տեխնիկական հնարավորությունների ապահովման պահին, ինչի մասին Բյուրոյի կողմից լրացուցիչ կիրառվելի:)

**ԳԼՈՒԽ 2. ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԼՐԱՑՈՒՑԻՉ
ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

3. Սույն հավելվածում օգտագործվող լրացուցիչ հասկացությունները սույն հավելվածում ունեն հետևյալ իմաստը.

- 1) **փորձագետ**՝ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող ԱՊՊԱ պատահարի պատճառների փորձագետ,
- 2) **փորձաքննություն**՝ ԱՊՊԱ պատահարի պատճառների առաջնային և (կամ) լրացուցիչ և (կամ) կրկնակի փորձաքննություն,

3) **ինքնաշխատ պատվեր՝** Բյուրոյի կանոններով սահմանված դեպքերում և կարգով՝ ԱՄՄՊ-ից փորձագետին ինքնաշխատ եղանակով և հերթականության սկզբունքով տրվող առաջնային փորձաքննության պատվեր,

4) **Պատվիրատու՝** սույն կանոնների համաձայն՝ փորձագետին փորձաքննության պատվեր ներկայացրած կամ այն ներկայացնելու պարտավորություն ունեցող Ապահովագրող կամ Բյուրո,

5) **փորձագետի աշխատակից՝** փորձագետի հետ աշխատանքային կամ քաղաքացիաիրավական հարաբերությունների մեջ գտնվող և Բյուրոյի կանոնների համաձայն ԱՊՊԱ ոլորտում համապատասխան փորձաքննությունն իրականացնելու իրավունք (որակավորում) ունեցող ֆիզիկական անձ:

ԳԼՈՒԽ 3. ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ ՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

4. Սույն կանոններով նախատեսված կարգով և դեպքերում ապահովագրական պատահարի պատճառների փորձաքննությունը կարող է հանձնարարվել (պատվիրվել) միայն Բյուրոյի կանոնների համաձայն համապատասխան որակավորում ունեցող փորձագետներին: Կրկնակի փորձաքննությունը չի կարող իրականացվել տվյալ պատահարի հետ կապված առաջնային և (կամ) լրացուցիչ փորձաքննություն իրականացրած փորձագետի կողմից:

5. Սույն կանոններով սահմանված կարգով պատվիրված և ստացված փորձաքննության արդյունքները կիրառելի են բոլոր Ապահովագրողների (Բյուրոյի) համար:

6. Փորձաքննություն իրականացնելու պատվեր փորձագետները կարող են ստանալ բացառապես Հավելված 6-ով նախատեսված Ապահովագրողից կամ Բյուրոյից, ինչպես նաև ինքնաշխատ պատվերի ձևով:

7. Պատվիրատուն ապահովագրական պատահարի առաջացման պատճառների առաջնային (լրացուցիչ) փորձաքննությունը նշանակում է Ձև 4.1-ով, իսկ ապահովագրական պատահարի առաջացման պատճառների կրկնակի փորձաքննությունը՝ Ձև 4.2-ով սահմանված պատվերներ ներկայացնելու միջոցով: Ընդ որում՝ Ձև 4.1-ի և Ձև 4.2-ի 3.2.1-րդ դաշտով նախատեսված առաջադրանքը պարտադիր է և մշտապես ներկայացվում է փորձագետին, իսկ նույն ձևերի 3.2.2-րդ դաշտով նախատեսված առաջադրանքը ներկայացվում է Պատվիրատուի հայեցողությամբ՝ ի լրումն Ձև 4.1-ի և Ձև 4.2-ի 3.2.1-րդ դաշտով նախատեսված առաջադրանքի՝ բացառությամբ սույն կանոններով սահմանված վնասների առանձնացված գնահատման գործընթացում առանձին հետքաբանական և (կամ) նյութագիտական հետազոտության անհրաժեշտության դեպքերի, երբ փորձագետին կարող է ներկայացվել պատվեր՝ Ձև 4.1-ի և Ձև 4.2-ի 3.2.2-րդ դաշտով ներկայացված առանձին առաջադրանքով: Սույն կետում նշված առաջադրանքներից տարբերվող առաջադրանքներ պատվերում չեն կարող ներառվել, իսկ ներառվելու դեպքում՝ փորձագետի կողմից հաշվի չեն առնվում փորձաքննություն իրականացնելիս:

7.1. Պարզեցված հատուցման գործընթացի դեպքում պատվիրատուի հայեցողությամբ փորձագետին կարող է ներկայացվել պատվեր՝ համաձայն Ձև 4.1.2-ի՝ հետքաբանական և (կամ) նյութագիտական հետազոտության իրականացնելու առաջադրանքով:

8. Սույն կանոններով սահմանված կարգով և դեպքերում ԴՍԱ-ի կողմից ապահովագրական պատահարի առաջացման պատճառների փորձաքննության նշանակման համար սահմանված ժամկետներում ԴՍԱ-ի (ԴՍԱ-ներից որևէ մեկի) կողմից համապատասխան փորձաքննություն չնշանակվելու դեպքում սահմանված ժամկետի ավարտին ապահովագրական պատահարի առաջացման պատճառների փորձաքննությունը նշանակվում է ինքնաշխատ:

9. Ինքնաշխատ պատվերը համարվում է տրված փորձաքննության արդյունքներով տուժող ճանաչված անձի (անձանց) համար ԴՍԱ համարվող Ապահովագրողի (Ապահովագրողների) կողմից, որն (որոնք) էլ հանդիսանում է (են) տվյալ փորձաքննության համար փորձագետին վճարելու պարտավորություն կրող անձ: (փոփ. է 29/09/2020թ թիվ 34-Լ)

10. Փորձաքննության պատվերի հետ փորձագետին պարտադիր տրամադրվում են համապատասխան պատահարի խմբի համար նախատեսված հետևյալ ելակետային տվյալները (փաստաթղթերը, տեղեկություններն ու նյութերը)՝

Պատահարի խումբը	Ելակետային տվյալների ցանկը
Պարզեցված հատուցման գործընթաց	Պատահարում ներգրավված ավտոտրանսպորտային միջոցների վերաբերյալ՝ 1) Հայաստանի Հանրապետությունում կամ Արցախի Հանրապետությունում գրանցված ավտոտրանսպորտային միջոցների գծով դրանց հաշվառման ազգային վկայագրերի դարձերեսին Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշման համաձայն լրացման ենթակա տվյալները (այն մասով, որով փաստացի լրացված են): Ընդ որում՝ նշված տվյալները կարող են տրամադրվել փորձագետին պատվերին կցված կամ ԱՄՄՊ-ում փորձագետին այդ տվյալներին համապատասխան հասանելիություն տալով: 2) սույն տողի 1-ին ենթակետում չնախատեսված ավտոտրանսպորտային միջոցների գծով՝ հաշվառման (գրանցման) վկայագրերի կամ մաքսային հայտարարագրերի կամ նմանատիպ այլ փաստաթղթերի լուսապատճենները Համաձայնեցված հայտարարագրի լուսապատճենը կամ էլեկտրոնային տարբերակը Ցանկացած եղանակով ստացված՝ պատահարի վայրում իրականացված բոլոր լուսանկարների և (կամ) տեսագրության և (կամ) պատահարի տեսաձայնագրության էլեկտրոնային ֆայլերը կամ դրանց հղումները
Ստանդարտ հատուցման գործընթաց 1	Պատահարում ներգրավված ավտոտրանսպորտային միջոցների վերաբերյալ՝ 1) Հայաստանի Հանրապետությունում կամ Արցախի Հանրապետությունում գրանցված ավտոտրանսպորտային միջոցների գծով դրանց հաշվառման ազգային վկայագրերի

	դարձերեսին Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշման համաձայն լրացման ենթակա տվյալները (այն մասով, որով փաստացի լրացված են): Ընդ որում՝ նշված տվյալները կարող են տրամադրվել փորձագետին պատվերին կցված կամ ԱՄՄՊ-ում փորձագետին այդ տվյալներին համապատասխան հասանելիություն տալով: 2) սույն տողի 1-ին ենթակետում չնախատեսված ավտոտրանսպորտային միջոցների գծով՝ հաշվառման (գրանցման) վկայագրերի կամ մաքսային հայտարարագրերի կամ նմանատիպ այլ փաստաթղթերի լուսապատճենները Ավտոտրանսպորտային միջոցից տարբերվող գույք վնասված լինելու դեպքում՝ վերջինիս նույնականացման տվյալները պարունակող փաստաթղթի (փաստաթղթերի) լուսապատճենները Ելակետ 1-ի և Ելակետ 2-ի լուսապատճենները կամ էլեկտրոնային տարբերակը Առկայության դեպքում՝ ցանկացած եղանակով ստացված՝ պատահարի վայրում իրականացված բոլոր լուսանկարների և (կամ) տեսագրության և (կամ) պատահարի տեսաձայնագրության էլեկտրոնային ֆայլերը կամ դրանց հղումները (լրաց. է 28/04/2020թ թիվ 10-Լ) Կրկնակի փորձաքննության պատվերի դեպքում՝ բողոքարկվող փորձագիտական եզրակացության լուսապատճենը
Ստանդարտ հատուցման գործընթաց 2	Պատահարում ներգրավված ավտոտրանսպորտային միջոցների վերաբերյալ՝ 1) Հայաստանի Հանրապետությունում կամ Արցախի Հանրապետությունում գրանցված ավտոտրանսպորտային միջոցների գծով դրանց հաշվառման ազգային վկայագրերի դարձերեսին Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշման համաձայն լրացման ենթակա տվյալները (այն մասով, որով փաստացի լրացված են): Ընդ որում՝ նշված տվյալները կարող են տրամադրվել փորձագետին պատվերին կցված կամ ԱՄՄՊ-ում փորձագետին այդ տվյալներին համապատասխան հասանելիություն տալով: 2) սույն տողի 1-ին ենթակետում չնախատեսված ավտոտրանսպորտային միջոցների գծով՝ հաշվառման (գրանցման) վկայագրերի կամ մաքսային հայտարարագրերի կամ նմանատիպ այլ փաստաթղթերի լուսապատճենները Ավտոտրանսպորտային միջոցից տարբերվող գույք վնասված լինելու դեպքում՝ վերջինիս նույնականացման տվյալները

	պարունակող փաստաթղթի (փաստաթղթերի) լուսապատճենները
	Տվյալ պատահարի գծով հարուցված (նախաձեռնված) գործով (վարույթով) օրինական ուժի մեջ մտած գործն ըստ էության լուծող (եզրափակիչ) դատական ակտի կամ քրեական դատավարության օրենսդրության շրջանակներում ընդունված եզրափակիչ դատավարական այլ ակտի կամ քրեական հետապնդման ժամկետները կասեցնելու վերաբերյալ դատավարական ակտի կամ իրավասու պետական մարմնի կողմից նախաձեռնված վարույթի շրջանակներում քրեական հետապնդում չհարուցելու վերաբերյալ տրամադրված փաստաթղթի կամ վարչական վարույթ իրականացնող մարմնի կողմից ընդունված եզրակացության և (կամ) որոշման և այդ ակտի (այլ փաստաթղթի) հիմքում ընկած փաստաթղթերի (դեպքի վայրի սխեմա, բացատրություններ, փորձագիտական եզրակացություն) լուսապատճենները
	Առկայության դեպքում՝ ցանկացած եղանակով ստացված՝ պատահարի վայրում իրականացված բոլոր լուսանկարների և (կամ) տեսագրության և (կամ) պատահարի տեսաձայնագրության էլեկտրոնային ֆայլերը կամ դրանց հղումները (լրաց. է 28/04/2020թ թիվ 10-Լ)
	Կրկնակի փորձաքննության պատվերի դեպքում՝ բողոքարկվող փորձագիտական եզրակացության լուսապատճենը

11. Ստանդարտ հատուցման գործընթաց 1-ի և Ստանդարտ հատուցման գործընթաց 2-ի դեպքում Պատվիրատուի կողմից փորձագետին կարող են տրամադրվել նաև հետևյալ լրացուցիչ փաստաթղթերը և (կամ) նյութերը՝

1) Բյուրոյի խորհրդի կողմից թույլատրված համակարգչային ծրագրերով ստացված պատահարի վայրի սխեման՝ հիմնված բացառապես լուսանկարների և տեսաձայնագրությունների վրա,

2) պատահարում ներգրավված ավտոտրանսպորտային միջոցների վրա առկա՝ ելակետային տվյալները պահպանող մոդուլային համակարգերից (գործարանային նախատեսված՝ պատահարները արձանագրող տվյալների կրիչներից) ստացված ելակետային տվյալները:

12. Պատվիրատուն իրավունք չունի փորձաքննության հետ կապված փորձաքննության պատվերից բացի այլ գրավոր կամ բանավոր ցուցումներ, ուղղորդումներ և (կամ) հանձնարարություններ տալ փորձագետին, իսկ ներկայացվելու դեպքում՝ դրանք փորձագետի կողմից հիմք չեն ընդունվում փորձաքննության ժամանակ:

13. Փորձաքննության իրականացման համար սույն հավելվածով նախատեսված փաստաթղթերից, նյութերից և տեղեկություններից բացի այլ փաստաթղթերի, նյութերի

և (կամ) տեղեկությունների ներկայացումն արգելվում է, իսկ ներկայացվելու դեպքում՝ դրանք փորձագետի կողմից հիմք չեն ընդունվում փորձաքննության ժամանակ:

14. Պատվիրատուն պարտավոր է մինչև տվյալ պատահարի գծով փորձաքննություն նշանակելը ստուգել Ելակետ 1-ում և Ելակետ 2-ում տվյալների ՀՀ օրենսդրությանը համաձայն ամբողջական լրացված լինելը: Այն դեպքում, երբ որևէ ելակետային տվյալում առկա են չլրացված տեղեկություններ (բացառությամբ ավտոմեքենաների հետվթարային դիրքերն ու միմյանց նկատմամբ չափային տվյալներն արտացոլող տեխնիկական տվյալների, որոնք ավտոտրանսպորտային միջոցների տեղաշարժից հետո օբյեկտիվորեն հնարավոր չէ վերականգնել), Պատվիրատուն պարտավոր է ոչ ուշ, քան ապահովագրական հատուցում ստանալու վերաբերյալ դիմումն ստանալուց և Ելակետ 1-ը և Ելակետ 2-ն ԱՄՄՊ-ում մուտքագրվելուց հետո՝ երկու օրվա ընթացքում (երկու ամսաթվերից ամենաուշ ամսաթվից սկսած), Բյուրոյի և ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու պետական մարմնի միջև համաձայնեցված՝ ելակետային տվյալների (Ելակետ 1 և Ելակետ 2) փոխանցման պայմաններին (այսուհետ՝ Պայմաններ) համապատասխան՝ ներկայացնել ելակետային տվյալների շտկման պահանջ: Ընդ որում, սույն կետի համաձայն շտկման պահանջ ներկայացվելու դեպքում տվյալ հատուցման համար ներկայացման ենթակա փաստաթղթերը համարվում են ԴՍԱ-ի կողմից ամբողջական և պատշաճ կերպով չստացված մինչև շտկված Ելակետ 1-ը և Ելակետ 2-ը ԱՄՄՊ-ում մուտքագրվելը, բայց ոչ ուշ, քան Ելակետային տվյալների շտկման համար Պայմաններով սահմանված ժամկետի ավարտը: Ելակետային տվյալների շտկման համար Պայմաններով սահմանված ժամկետի ավարտից հետո Ելակետ 1-ը և Ելակետ 2-ը համարվում են չփոփոխված, և Պատվիրատուն պարտավոր է սահմանված կարգով և ժամկետներում շարունակել սույն կանոններով նախատեսված հետագա գործընթացները: Պատվիրատուն պատասխանատվություն է կրում սույն հավելվածով նախատեսված ոչ ամբողջական ելակետային տվյալների շտկման (ամբողջականացման) ազդակ չներկայացնելու հետևանքով առաջացած վնասների հատուցման համար: Բոլոր դեպքերում ԱՊՊԱ ոլորտում սկսված և (կամ) ավարտված գործընթացները չեն զրկում շահագրգիռ անձանց օրենսդրությամբ սահմանված կարգով բողոքարկելու իրենց պատահարին վերաբերող ելակետային տվյալները կամ իրավասու պետական մարմինների կողմից կամ դատական կարգով հավաքագրելու համապատասխան փաստեր: (լրաց. է 30/03/2021թ թիվ 12-Լ)

15. Ինքնաշխատ պատվերի դեպքում սույն կանոնների 14-րդ կետով նախատեսված պարտավորություններն ու դրանց չկատարման պատասխանատվությունը կրում է պատվերն ստացած փորձագետը:

15.1. Պատվիրատուի կողմից նշանակված փորձաքննությունը հետ կանչվելու դեպքում տվյալ պատահարի գծով փորձաքննության նոր պատվերը կարող է տրամադրվել բացառապես միևնույն փորձագետին, եթե առկա չեն տվյալ փորձագետի կողմից համապատասխան փորձաքննության իրականացումն արգելող՝ օրենքով կամ Բյուրոյի կանոններով սահմանված հանգամանքներ: **Ընդ որում, փորձաքննության նոր պատվեր տրվելու դեպքում փորձաքննության իրականացման համար սույն կանոններով սահմանված ժամկետները հաշվարկվում են սկզբնական նշանակման օրվանից, բացառությամբ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու պետական մարմնի կողմից ելակետային տվյալներում շտկումներ կատարված լինելու դեպքերի:**

** Կարմիր գունավորմամբ նշված կարգավորումներն ուժի մեջ կմտնեն համապատասխան տեխնիկական հնարավորությունների ապահովման պահին, ինչի մասին Բյուրոյի կողմից լրացուցիչ կիրառեկվի:*

16. Փորձագետը պարտավոր է Պատվիրատուից համապատասխան պատվերն ստանալուց հետո, իսկ սույն կանոնների 15-րդ կետով նախատեսված դեպքերում ելակետային տվյալների շտկման պահանջ ներկայացրած լինելու դեպքում՝ շտկված Ելակետ 1-ը և Ելակետ 2-ը ԱՄՄՊ-ում մուտքագրվելուց կամ ելակետային տվյալների շտկման համար Պայմաններով սահմանված ժամկետի ավարտից հետո՝ սույն կանոններով նախատեսված օրերի ընթացքում, իրականացնել փորձաքննություն և Պատվիրատուին տրամադրել փորձագիտական եզրակացություն կամ 3 օրվա ընթացքում տրամադրել փորձագիտական եզրակացություն տալու անհնարինության մասին գրավոր պատասխան (սույն կետի 2-րդ ենթակետով նախատեսված դեպքում պատասխանը տրվում է եզրակացության հետ միաժամանակ): Ընդ որում, փորձագետն իրավունք ունի տրամադրել փորձագիտական եզրակացություն տալու անհնարինության մասին գրավոր պատասխան բացառապես հետևյալ դեպքերում և հիմքերի առկայությամբ՝

1) Ելակետ 1-ում և (կամ) Ելակետ 2-ում առկա են ՀՀ օրենսդրությամբ նախատեսված, սակայն չլրացված այնպիսի տեղեկություններ, որոնք փորձագետի համար անհնարին են դարձնում պատշաճ փորձաքննության իրականացումը և պատահարում մեղավոր կողմի որոշումը՝ բացառությամբ այն դեպքերի, եթե փորձագետի կողմից չի կատարվել սույն կանոնների 15-րդ կետով նախատեսված պարտականությունը:

1.1) Ստանդարտ հատուցման գործընթաց 2-ի շրջանակներում փորձագետին չեն տրամադրվել այնպիսի տեղեկություններ, որոնք ՀՀ օրենսդրության համաձայն՝ լրացվում են Ելակետ 1-ում և Ելակետ 2-ում, եթե դրանց բացակայությունը փորձագետի համար անհնարին է դարձնում պատշաճ փորձաքննության իրականացումը և պատահարում մեղավոր կողմի որոշումը:

2) Ձև 4.1-ի և Ձև 4.2-ի 3.2.2-րդ դաշտով տրված առաջադրանքների դեպքում (այդ առաջադրանքների մասով) կամ Ձև 4.1.2-ի համաձայն տրված պատվերի դեպքում՝ պատահարում ներգրավված որևէ գույքի գծով ապահովված չէ (չեն կատարվել) սույն կանոնների 92-րդ կետի 2-րդ կամ 3-րդ ենթակետով սահմանված պարտավորությունը, ինչի հետ կապված ներկայացվել են համապատասխանաբար վերանորոգված կամ ապամոնտաժված գույքի լուսանկարները կամ ապացույցներ՝ առ այն, որ փորձագետն փորձել է իրեն տրված պատվերում՝ վնասված գույքի զննության համար նշված անձի հեռախոսահամարով կապ հաստատել տվյալ անձի հետ, նույն կետում նշված էլեկտրոնային փոստի հասցեով իրականացրել է սույն կանոնների Ձև 5.3-ով նախատեսված ծանուցումը, սակայն ծանուցումն ուղարկելուց հետո՝ 1 օրվա ընթացքում, անհնարինության հիմքերը չեն վերացվել կամ փորձաքննությունն անհնարին դարձնող հիմքերի բացակայության մասին հետպատասխան չի ստացվել: (16-րդ կետը լրաց. է 28/04/2020թ թիվ 10-Լ և լրաց. և փոփ. է 30/03/2021թ թիվ 12-Լ)

17. Փորձագիտական եզրակացություն տալու անհնարինության մասին գրավոր պատասխանը պետք է տրվի՝ համաձայն Ձև 6-ի՝ նշելով փորձաքննության անհնարինություն առաջացնող՝ սույն հավելվածով նախատեսված հիմքերը, ստորագրված լինի փորձագիտական կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի և փորձագետի աշխատակցի (կրկնակի փորձաքննության դեպքում՝ փորձագետի երկու

աշխատակցի) կողմից՝ վերջինների՝ Հայաստանի Հանրապետությունում ընդունելի էլեկտրոնային ստորագրության կիրառմամբ:

18. Եթե փորձագետի կողմից սույն հավելվածով նախատեսված կարգով տրվել է փորձաքննության անհնարինության մասին գրավոր պատասխան, ապա համարվում է, որ փորձագիտական եզրակացությամբ պատահարի առաջացման մեջ մեղավորությունը բաշխվել է հետևյալ կերպ.

1) Առաջնային փորձաքննության դեպքում՝ հաստատված են համարվում Ելակետ 1-ում կատարված՝ մեղավորության մասին պատահարի կողմերի նախնական նշումները. համապատասխանաբար, բոլոր այն վարորդները, ովքեր ընդունել են պատահարում իրենց մեղավորությունը (կատարել են «Մեղավոր եմ» նշումը) փորձաքննության արդյունքի տեսանկյունից ճանաչվում են հավասարազոր մեղավոր, իսկ մնացած վարորդները՝ անմեղ: Եթե Ելակետ 1-ում պատահարին մասնակից բոլոր վարորդները կատարել են «Մեղավոր չեմ» նշումը, ինչպես նաև եթե փորձաքննությունը նշանակվել է Ստանդարտ հատուցման գործընթաց 2-ի շրջանակներում, ապա փորձաքննության արդյունքի տեսանկյունից բոլոր վարորդները ճանաչվում են հավասարազոր մեղավոր:

2) լրացուցիչ փորձաքննության դեպքում՝ հաստատված են համարվում առաջնային փորձաքննության արդյունքները:

3) կրկնակի փորձաքննության դեպքում՝ հաստատված են համարվում առաջնային (լրացուցիչ փորձաքննություն իրականացված լինելու դեպքում՝ լրացուցիչ) փորձաքննության արդյունքները:

19. Փորձագետի կողմից տրվող եզրակացությունները պետք է բավարարեն համապատասխանաբար Ձև 5.1-ով, Ձև 5.1.1-ով և Ձև 5.1.2-ով սահմանված ձևերին և բովանդակությանը, ստորագրված լինեն փորձագիտական կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի և փորձագետի աշխատակցի (կրկնակի փորձաքննության դեպքում՝ փորձագետի երկու աշխատակցի) կողմից՝ վերջինների՝ Հայաստանի Հանրապետությունում ընդունելի էլեկտրոնային ստորագրության կիրառմամբ: Կրկնակի փորձաքննության եզրակացությունը ստորագրած փորձագետի երկու աշխատակիցները հավասարաչափ պատասխանատվություն են կրում եզրակացության բովանդակության և կատարված եզրահանգումների համար:

20. Փորձագիտական եզրակացության «հետևություններ» բաժնում առաջնային (լրացուցիչ) փորձաքննություն իրականացնող փորձագետը, իսկ 4.1.2-ի համաձայն տրված պատվերի դեպքում՝ հետքաբանական և (կամ) նյութագիտական փորձաքննություն իրականացնող փորձագետը իրականացված հետազոտությունների արդյունքներով համապատասխան ձևերում արտացոլված հստակ (ստանդարտացված) նշումներով ներկայացնում է իր եզրահանգումները (4.1.2-ի համաձայն տրված պատվերի դեպքում՝ միայն 5-րդ ենթակետով նախատեսված եզրահանգումը).

1) իր կողմից ստացված (վերականգնված) պատահարի իրական մեխանիզմի նկարագրությունը և եզրահանգումները պատահարի առաջացման պատճառների և վարորդի (վարորդների), ինչպես նաև այլ անձանց կողմից թույլ տրված խախտումների վերաբերյալ: Ընդ որում, եթե փորձագետի կողմից դիտարկվել են վթարի առաջացման մեկից ավելի հնարավոր մեխանիզմներ, ապա նա պարտավոր է ամբողջական և խորը ուսումնասիրություններով և համապատասխան նկարագրություններով (ներառյալ ուսումնասիրման ընթացքում առաջ քաշված հնարավոր տարբերակների բացառման միջոցով) տրամադրել վթարի առաջացման առավել հավանական մեկ հստակ մեխանիզմ, որի վրա են հիմնվում իր հետագա եզրահանգումները,

2) իր կողմից վերականգնված պատահարի իրական մեխանիզմի՝ փորձաքննությանը տրամադրված ելակետային տվյալների հետ համապատասխանելիության վերաբերյալ: Ընդ որում, դրանց ըստ էության անհամապատասխանելիության դեպքում եզրակացության «Հետազոտության արդյունքում հայտնաբերված հակասությունները և անհամապատասխանությունները» մասում փորձագետը պետք է հանգամանորեն անդրադառնա պատահարի իրական մեխանիզմի համապատասխանությանը փորձաքննությանը տրամադրված ելակետային տվյալների հետ՝ ԱՄՄՊ-ում կատարելով ելակետային տվյալների ճշգրտում,

3) Վթարի իրական մեխանիզմի պայմաններում յուրաքանչյուր վարորդի, իսկ վարորդներից բացի պատահարում այլ անձանց ներգրավված լինելու կամ պատահարի առաջացումն այլ անձանց գործողությունների (անգործության) հետ պատճառահետևանքային կապի մեջ գտնվելու դեպքում՝ նաև վերջինների մասով հստակ մեղավորության կամ անմեղության վերաբերյալ,

4) Պատահարի ձևացման վերաբերյալ, եթե փորձագետի կողմից պարզվում է, որ վթարի ոչ մի մեխանիզմի պայմաններում նման պատահար չէր կարող առաջանալ և (կամ) պատահարի արդյունքում փորձ է կատարվում ծածկել նախկինում այլ հանգամանքներում գույքին պատճառված վնասները: Ընդ որում՝ եթե փորձագետն իր եզրահանգումներում նշում է պատահարի ձևացման վերաբերյալ, ապա փորձագիտական եզրակացության՝ «Հետազոտության արդյունքում հայտնաբերված հակասությունները և անհամապատասխանությունները» մասում նա պետք է հանգամանորեն անդրադառնա այդ փաստերի հիմնավորմանը: Սույն ենթակետով նախատեսված դեպքերում փորձագիտական եզրակացության «հետևություններ» բաժնում չեն կատարվում սույն կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով նախատեսված եզրահանգումները:

5) Տրանսպորտային միջոցների վրա առկա հետքերի՝ վթարի հետ համատեղելիության վերաբերյալ, եթե պատվերում փորձագետին տրված է համապատասխան առաջադրանք: Ընդ որում, փորձագետը տրանսպորտային միջոցների վրա առկա հետքերի՝ պատվերին կից ներկայացված վթարի հետ անհամատեղելիության վերաբերյալ եզրահանգում կարող է կատարել միայն այն դեպքերում, երբ վթարի ոչ մի մեխանիզմի պայմաններում տրանսպորտային միջոցների վրա առկա հետքերը չէին կարող առաջանալ:

6) Պատահարի հետևանքով վնասված գույքացանկի՝ ներառյալ պատահարին մասնակից վնասված ավտոտրանսպորտային միջոցների ցանկի վերաբերյալ,

7) Պատահարի առաջացման վրա կողմնակի ազդեցություն ունեցած հանգամանքների վերաբերյալ, եթե փորձագետի կողմից բացահայտվել են պատահարին ներգրավված ավտոտրանսպորտային միջոցների վարորդների և տուժողների գործողություններից տարբերվող այնպիսի հանգամանքներ, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն ազդեցություն են ունեցել պատահարի առաջացման վրա:

21. Կրկնակի փորձաքննություն իրականացնող փորձագետն ըստ էության ստուգում է առաջնային փորձաքննություն իրականացրած փորձագետի փորձաքննության արդյունքները՝ փորձագիտական եզրակացության յուրաքանչյուր բաժնի «Ա» մասում նույնությամբ լրացնելով առաջնային փորձաքննության արդյունքները, իսկ «Կ» մասում լրացնելով իր դիտարկումներն առաջնային փորձաքննության արդյունքները սույն կանոններին համապատասխանելու վերաբերյալ՝

անհամապատասխանությունների հայտնաբերման պարագայում հստակ շարադրելով դրանք:

22. Պատվիրատուի լրացուցիչ պահանջով փորձագետը, իր կողմից կատարված եզրահանգումները հիմնավորելու համար, պարտավոր է երկու օրվա ընթացքում վերջինին տրամադրել նման եզրահանգումների համար հիմք հանդիսացող՝ Բյուրոյի խորհրդի կողմից թույլատրված (փորձագետի որակավորման հիմք հանդիսացող)՝ ճանապարհատրանսպորտային պատահարների համար հավաքագրվող ելակետային տվյալների հիման վրա վթարի մեխանիզմը վերականգնելու ծրագրով ստացված վթարի մոդելավորման արդյունքները: Մոդելավորման արդյունքների տրամադրման պարտավորություն փորձագետը չունի բոլոր այն դեպքերում, երբ տրամադրված ելակետային տվյալներում առկա է պատահարի ամբողջական տեսագրությունը:

23. Այն դեպքում, երբ պատահարում ներգրավված են երկուսից ավելի ավտոտրանսպորտային միջոցներ, և փորձագետի կարծիքով տվյալ պատահարի արդյունքում առաջացած տարբեր բախումներում առկա են վարորդների մեղավորության տարբեր բաշխվածություններ, ապա փորձագիտական եզրակացության հետևություններ բաժինը, նույն կառուցվածքի պահպանմամբ, լրացվում է լրացուցիչ հավելվածով, որտեղ նշումներ են կատարվում վարորդներից յուրաքանչյուրի մեղավորության կամ անմեղության մասին՝ ըստ ավտոտրանսպորտային միջոցներին և (կամ) այլ գույքին պատճառված առանձին վնասների:

ԳԼՈՒԽ 4. ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

24. Փորձագետը փորձաքննություն իրականացնում է բացառապես հետևյալ ելակետային տվյալների հիման վրա՝

1) Պատվիրատուի կողմից սույն կանոնների համաձայն իրեն տրամադրված ելակետային տվյալները,

2) փորձագետի նախաձեռնությամբ կատարված՝ պատահարի վայրի հետազոտության արդյունքում ստացված օբյեկտիվ ելակետային տվյալները,

2.	Կերակրողին կորցրած անձանց պատճառված վնասներ	1) տուժողի խնամքի ներքո գտնվող կամ նրա մահվան օրը նրանից խնամք ստանալու իրավունք ունեցող անաշխատունակ անձինք, 2) տուժողի մահվանից հետո ծնված նրա երեխան, 3) տուժողի ծնողներից մեկը, ամուսինը կամ ընտանիքի անդամը՝ անկախ նրա աշխատունակությունից,	Տուժողի՝ սույն հավելվածի 4-րդ գլխով սահմանված կարգով հաշվարկված աշխատավարձի (եկամտի) (ներառյալ՝ կենսաթոշակի և այլ նմանօրինակ վճարների) այն մասի չափով, որը վերջինի կենդանության օրոք կերակրողին կորցրած անձն ստանում էր կամ ստանալու իրավունք ուներ իր ապրուստի համար: Ընդ որում, այն դեպքում, երբ հնարավոր չէ որոշել, թե կերակրողին կորցրած անձինք կամ նրանց մի մասը մահացածի աշխատավարձի (եկամտի) որ չափն էին ստանում կամ ստանալու իրավունք ունեին, համարվում է, որ մահացածի	Ամենամսյա վճարումների տեսքով՝ մինչև տվյալ տուժողի անձնական վնասների գծով կատարված բոլոր հատուցումների համար ապահովագրական գումարի սպառումը, բայց ոչ ավելի, քան հետևյալ ժամկետները՝ 1) անչափահասներին՝ մինչև 18 տարեկան դառնալը, 2) 18 տարեկանից բարձր տարիքի սովորողներին՝

		որը չի աշխատում և զբաղված է տուժողի խնամքի ներքո գտնվող նրա 14 տարեկան չդարձած կամ թեկուզև նշված տարիքին հասած, սակայն բժշկական մարմինների եզրակացությամբ իր առողջական վիճակով կողմնակի խնամքի կարիք ունեցող երեխաների, թոռների, եղբայրների և քույրերի խնամքով, 4) տուժողի խնամքի ներքո գտնվող և նրա մահվանից հետո՝ 5 տարվա ընթացքում, անաշխատունակ դարձած անձինք:	աշխատավարձը (եկամուտը) (դրա չբաշխված մասը, եթե կերակրողին կորցրած անձանց մի մասին հասանելիք չափը հստակ է) նրա կենդանության օրոք հավասարաչափ բաշխվել է իր և կերակրողին կորցրած այն անձանց միջև, ովքեր ապահովագրական հատուցում վճարելու մասին որոշում կայացնելու օրվա դրությամբ հայտնի են ԴՍԱ-ին (բացառությամբ այն անձանց, ում հասանելիք չափը հստակ է): Այն դեպքում, երբ համաձայն սույն հավելվածի 20-րդ կետի՝ հատուցման չափը ենթակա չէ վերահաշվարկի, ապահովագրական հատուցում վճարելու մասին որոշում կայացնելու օրվանից հետո ԴՍԱ-ին դիմած կերակրողին կորցրած անձանց հատուցման չափը սահմանվում է նույն պատահարի հետևանքով կերակրողին կորցրած այլ անձանց համար արդեն իսկ որոշված հատուցմանը հավասար չափով, եթե հնարավոր չէ որոշել, թե կերակրողին կորցրած տվյալ անձը մահացածի աշխատավարձի (եկամտի) որ չափն է ստացել կամ ստանալու իրավունք ունեցել:	մինչև ցերեկային ուսուցման ձևով ուսումնական հաստատություններում ուսման ավարտը, սակայն ոչ ավելի, քան մինչև 23 տարեկան դառնալը, 3) 55 տարեկանից մեծ կանանց և 60 տարեկանից մեծ տղամարդկանց՝ ցմահ, 4) հաշմանդամներին՝ հաշմանդամության ժամանակ, 5) ծնողներից մեկին, ամուսնուն կամ ընտանիքի այլ անդամին, որն զբաղված է մահացածի խնամքի տակ գտնվող նրա երեխաների, թոռների, եղբայրների և քույրերի խնամքով՝ մինչև վերջինների 14 տարեկան դառնալը, իսկ այդ ընթացքում անաշխատունակ դառնալու դեպքում՝ նաև խնամքի ավարտից հետո:
--	--	--	---	--

19. Կերակրողին կորցրած անձանց պատճառված վնասի հատուցման գումարը կյանքի թանկացման դեպքում, օրենքով սահմանված կարգով, ինդեքսավորվում է, իսկ նվազագույն աշխատավարձի չափը բարձրանալու դեպքում մեծանում է աշխատավարձի նվազագույն չափի բարձրացմանը համամասնորեն:

20. Կերակրողի մահվան հետ կապված վնասի հատուցման իրավունք ունեցող յուրաքանչյուր անձի համար սահմանված հատուցման չափը ենթակա չէ վերահաշվարկի, բացառությամբ հետևյալ դեպքերի՝

- 1) երեխայի ծնունդը կերակրողի մահվանից հետո,
- 2) մահացած կերակրողի երեխաների, թոռների, եղբայրների և քույրերի խնամքով զբաղված անձանց հատուցման վճարի նշանակումը և դադարումը:

21. Սույն հավելվածի 20-րդ կետով նախատեսված դեպքերում վերահաշվարկ իրականացնելիս կիրառվում է սույն հավելվածի 18-րդ կետով սահմանված՝ հատուցման չափի հաշվարկման սկզբունքը: Ընդ որում, վերահաշվարկն իրականացվում է վերահաշվարկին հաջորդող ժամանակահատվածի համար:

ԳԼՈՒԽ 6. ԱՆՁՆԱԿԱՆ ՎՆԱՍՆԵՐԻ ԳԾՈՎ ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԵՐԹԵՐԸ

22. Տուժողին պատճառված անձնական վնասների չափը սույն կանոններով նախատեսված ապահովագրական գումարի չափը գերազանցելու դեպքում ապահովագրական հատուցման գումարը ըստ տվյալ տուժողի գծով առկա ծախսերի՝ բաշխվում է հետևյալ հերթականությամբ.

1) առաջին հերթին հաշվանցվում են կատարված կանխավճարները (ներառյալ այլ Ապահովագրողի կողմից կատարված կանխավճարները և Բյուրոյի կողմից կատարված նախնական հատուցումները),

2) երկրորդ հերթին վճարվում են բժշկական օգնություն ցուցաբերած կամ առողջության վերականգնում իրականացրած բժշկական հաստատությանը վճարման ենթակա գումարները,

3) երրորդ հերթին վճարվում են բժշկական պարագաներ տրամադրած կազմակերպությանը վճարման ենթակա գումարները,

4) չորրորդ հերթին վճարվում են անմիջապես տուժողին կամ նրա ներկայացուցչին վճարման ենթակա առողջությանը պատճառված վնասի հետ կապված ծախսերը,

5) հինգերորդ հերթին վճարվում են կորցրած աշխատավարձի (եկամուտների) գծով հատուցման գումարները,

6) վեցերորդ հերթին վճարվում են հուղարկավորության հետ կապված ծախսերը, և

7) յոթերորդ հերթին վճարվում են կերակրողին կորցրած անձանց պատճառված վնասները:

23. Միևնույն հերթում գտնվող ծախսերի հատուցման համար ապահովագրական գումարը չբավարարելու դեպքում նշված ծախսերը հատուցվում են տվյալ հերթի ընդհանուր ծախսերում իրենց համամասնության համաձայն, իսկ մի քանի բժշկական հաստատության կողմից բժշկական օգնություն ցուցաբերված կամ առողջության վերականգնում իրականացված լինելու դեպքերում առաջնահերթությունը տրվում է ավելի շուտ նման ծառայություն մատուցած հաստատությանը:

24. Յուրաքանչյուր հաջորդող հերթում գտնվող ծախսերը հատուցվում են նախորդ հերթում ընդգրկված ծախսերը լրիվ հատուցվելուց հետո: Ընդ որում, հերթերում ներառվող ծախսերը որոշվում են հատուցման իրականացման պահին առկա տեղեկատվության համաձայն, և հատուցում վճարելուց հետո առավել բարձր հերթում ներառման ենթակա ծախսերի մասին տեղեկատվություն ստացվելու դեպքում նշված ծախսերը հատուցվում են առաջիկա հերթի շրջանակներում:

ՏՈՒՐՈՒՆ ԱՌՈՂՇՈՒԹՅԱՆ ՊԱՏՏԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՀԵՏԵՎԱԼՔՈՎ ԱՐԱՋԱՑԱԾ ԵՎ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԵՆԹԱՎ ՍԱՆՍԵՐԸ ԵՎ ԱՅՐ ՍԱՆՍԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՏՈՒԹՅԱՆ, ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՓԱՏՏԱՅԻ ԱՂԱՑՈՒՑԱԾՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ, ՀԱՏՈՒՑՄԱՆ ԿՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԻՐԸ, ՈՐԻ ԳՈՒՎ ԱՐԱՋԱՑԵԼ ԵՆ ՍԱՆՍԵՐԸ		ՍԱՐԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ՝ ԸՍՏ ՄԵՎ ՊԱՏՏԱՌՎԱԾ ԵՆԻՎ ՄԵՎ ՏՈՒՐՈՒՆԻ ՄԱՏՈՒՑԱԾ ՍԱՐԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՆԱԿԻ, ԳՈՐԱՄԻ ԵՎ ԺՎԱՄԵՏԻ	ՍԱՐԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ՝ ԸՍՏ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԸՆԴՈՒՆԵԼԻ ԿԱՅՆԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ			ՍԱՐԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ՝ ԸՍՏ ՍԱՐԱՑՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂ ԿԱՅՆԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԻ		ՀԱՏՈՒՑՄԱՆ ԿՃԱՐՈՒՄԻ ԻՐԱՎԱՆԱՑՎՈՒՄ Է				
Ի/Կ	Խումբը		Ենթախումբը	ՍԱՐԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ՝ ԸՍՏ ՆԵՒԱՆԱՍՆԸ	Ծառայությունից օգտվելու առավելագույն թաևաքը	Ծառայությունից օգտվելու առավելագույն գումարը	Ծառայությունից օգտվելու առավելագույն ժամկետը	Ընտրվում է տուժողի, իսկ դրա ակնհայիության դեպքում՝ շահագրգիռ այլ անձի կողմից	Ընտրվում է Ապահովագրողի (Բյուրոյի) կողմից	Համապատասխան ծառայությունը մատուցած կազմակերպությանը, եթե ծառայության դիմաց դեռևս վճարված չէ	Տուժողին կամ տուժողի պահանջով համապատասխան ծառայության դիմաց վճարում կատարած անձին, եթե ծառայության դիմաց ծառայություն մատուցող կազմակերպությանը վճարվել է	
1			Ծառայության ծառայության կողմից մատուցվող ծառայություններ	Դեպքի վայրից տեղափոխում՝ բժշկական հաստատություն	Սահմանափակումներ առկա չեն	Սահմանափակումներ առկա չեն	Սահմանափակումներ առկա չեն	ՀՀ-ում նման ծառայություններ մատուցելու իրավունք ունեցող կազմակերպություններ	Այո	Ոչ	Կիրառելի է	Կիրառելի է
		Բժշկական հաստատությունից տեղափոխում՝ մեկ այլ հաստատություն		Ցուցված է տուժողի՝ սուղ (հիվանդանոցային) շրջանը վարած բժշկի կողմից	Սահմանափակումներ առկա չեն	Սահմանափակումներ առկա չեն	Սահմանափակումներ առկա չեն		Այո	Ոչ	Կիրառելի է	Կիրառելի է
		Բժշկական հաստատությունից տեղափոխում՝ տուն		Սահմանափակումներ առկա չեն	Սահմանափակումներ առկա չեն	Սահմանափակումներ առկա չեն	Սահմանափակումներ առկա չեն		Այո	Ոչ	Կիրառելի է	Կիրառելի է
2		Ամբուլատոր բուժօգնություն (տուն տուղի առաջին երեք ենթատողերում՝ Նշված ծառայություններից օգտվելու առավելագույն գումարի և ժամկետի սահմանափակումները կիրառվում են միայն միևնույն ստացիոնար բուժօգնությունը տրամադրված ամբուլատոր բուժօգնության նկատմամբ)	Ամբուլատոր բուժում և խորհրդատվություն	Սահմանափակումներ առկա չեն	Սահմանափակումներ առկա չեն	120.000 ՀՀ դրամ	Սահմանափակումներ առկա չեն	ՀՀ-ում գրանցված և լիցենզավորված բժշկական հաստատություններ	Այո	Ոչ	Կիրառելի է	Կիրառելի է
			Լաբորատոր գործիքային հետազոտություններ	Նշանակված է տուժողին բուժող բժշկի կողմից	Սահմանափակումներ առկա չեն	100.000 ՀՀ դրամ	Սահմանափակումներ առկա չեն	ՀՀ-ում գրանցված և լիցենզավորված բժշկական հաստատություններ	Այո	Ոչ	Կիրառելի է	Կիրառելի է
			Բուժման համար Նշանակված դեղորայք	Նշանակված է տուժողին բուժող բժշկի կողմից	Սահմանափակումներ առկա չեն	ամսական 40.000 ՀՀ դրամ	Չամսային սույն ենթահավելվածին կից արդյունակ 8.2.1.1-ի	ՀՀ-ում գրանցված և լիցենզավորված բժշկական հաստատություններ և դեղատներ	Այո	Ոչ	Կիրառելի է	Կիրառելի է
			Բուժման և ֆունկցիայի վերականգնման Նպատակով Նշանակված բժշկական սարքավորումներ, պարագաներ և պրոթեզներ	Նշանակված է սուղ (հիվանդանոցային) շրջանը վարած բժշկի և (կամ) ընտանեկան բժշկի/ մանկաբույժի/ թերապևտի և (կամ) ռեաբիլիտոլոգի, պրոթեզների մասով մասնագիտացված օթոպեդի կողմից	Սահմանափակումներ առկա չեն	Չամսային սույն ենթահավելվածին կից արդյունակ 8.2.1.2-ի	Սահմանափակումներ առկա չեն	ՀՀ-ում գրանցված և լիցենզավորված բժշկական հաստատություններ, դեղատներ, բժշկական սարքավորումներ և պարագաներ վաճառող մասնագիտացված կազմակերպություններ	Այո	Ոչ	Կիրառելի է	Կիրառելի է
			Վերականգնողական բուժում	Նշանակված է սուղ (հիվանդանոցային) շրջանը վարած բժշկի և (կամ) ընտանեկան բժշկի/ մանկաբույժի/ թերապևտի և (կամ) ռեաբիլիտոլոգի կողմից	Սահմանափակումներ առկա չեն	Բուժման առաջին 2 ամիսների համար՝ ամսական 120.000 ՀՀ դրամ, դրան հաջորդող ամիսների համար՝ ամսական 70.000 ՀՀ դրամ	Չամսային սույն ենթահավելվածին կից արդյունակ 8.2.1.1-ի	ՀՀ-ում գրանցված և լիցենզավորված բժշկական հաստատություններ, դեղատներ, բժշկական սարքավորումներ և պարագաներ վաճառող մասնագիտացված կազմակերպություններ	Այո	Ոչ	Կիրառելի է	Կիրառելի է
3		Ստացիոնար բուժօգնություն	Հիվանդանոցային բուժօգնություն	Սահմանափակումներ առկա չեն	Սահմանափակումներ առկա չեն	Հիվանդանոցային վնասի մասով՝ օրական 10.000 ՀՀ դրամ, իսկ Չանձնածոցովի կողմից հաստատված վնասների ցանկում ներառված հիվանդությունների համար համապատասխան ցանկում ներառված օտարերկրյա բժշկական հաստատություններում՝ 20.000 ՀՀ դրամ	Սահմանափակումներ առկա չեն	ՀՀ-ում գրանցված և լիցենզավորված բժշկական հաստատություններ	Այո	Ոչ	Կիրառելի է	Կիրառելի է
			Բուժման և ֆունկցիայի վերականգնման Նպատակով Նշանակված ինվանտներ, մետաղական կոնստրուկցիաներ, էնդոպրոտեզներ, բժշկական սարքավորումներ, պարագաներ և այլն	Նշանակված է սուղ (հիվանդանոցային) շրջանը վարած բժշկի և (կամ) ընտանեկան բժշկի/ մանկաբույժի/ թերապևտի և (կամ) ռեաբիլիտոլոգի, պրոթեզների մասով մասնագիտացված օթոպեդի կողմից	Սահմանափակումներ առկա չեն	Սահմանափակումներ առկա չեն	Սահմանափակումներ առկա չեն	ՀՀ-ում գրանցված և լիցենզավորված բժշկական հաստատություններ, դեղատներ, բժշկական սարքավորումներ և պարագաներ վաճառող մասնագիտացված կազմակերպություններ	Այո	Ոչ	Կիրառելի է	Կիրառելի է

		Կերակվանքի տրամադրված քանակ (ներառյալ դեղորայքը և հետազոտությունները)	Նշանակված է սուր (հիվանդանոցային) շրջանը վարած բժշկի և (կամ) ընտանեկան բժշկի/ մանկաբույժի/ թերապևտի և (կամ) ռեաբիլիտոլոգի կողմից	Սահմանափակումներ առկա չեն	1. Ամսական 240.000 ՀՀ դրամ: 2. Հիվանդանոցային վնասի մասով՝ զրական 10.000 ՀՀ դրամ: իսկ Համեմատողովի կողմից հաստատված վնասների ցանկում ներառված հիվանդությունների համար համապատասխան ցանկում ներառված օտարերկրյա բժշկական հաստատություններում՝ 20.000 ՀՀ դրամ	Համաձայն սույն ենթահավելանքին կից աղյուսակ 8.2.1.1-ի	ՀՀ-ում գրանցված և լիցենզավորված բժշկական հաստատություններ	Այո	Ոչ	Կիրառելի է	Կիրառելի է
4	Մասնագիտացված տնային ինստի		Նշանակված է սուր (հիվանդանոցային) շրջանը վարած բժշկի և (կամ) ընտանեկան բժշկի/ մանկաբույժի/ թերապևտի և (կամ) ռեաբիլիտոլոգի կողմից	Սահմանափակումներ առկա չեն	Ամսական 60.000 ՀՀ դրամ	2 ամիս	ՀՀ-ում մասնագիտացված տնային ինստի ծառայություններ մատուցելու իրավունք ունեցող կազմակերպություններ	Այո	Ոչ	Կիրառելի է	Կիրառելի է
5	Սանատոր-կուրորտային բուժում (որը վերաբերվում է բացառապես ռիտմիկային կամ խոշոր հոդերի վնասվածքներով վնասներին)		Նշանակված է սուր (հիվանդանոցային) շրջանը վարած բժշկի և (կամ) ընտանեկան բժշկի/ մանկաբույժի/ թերապևտի և (կամ) ռեաբիլիտոլոգի կողմից	Սահմանափակումներ առկա չեն	250.000 ՀՀ դրամ	1 ամիս	ՀՀ-ում գրանցված և լիցենզավորված բժշկական հաստատություններ	Այո	Ոչ	Կիրառելի է	Կիրառելի է
	Ստոմատոլոգիական ծառայություններ		Նշանակված է ստոմոլոգի բուժող բժշկի կողմից	Սահմանափակումներ առկա չեն	Սահմանափակումներ առկա չեն	Սահմանափակումներ առկա չեն	ՀՀ-ում գրանցված և լիցենզավորված բժշկական հաստատություններ	Այո	Ոչ	Կիրառելի է	Կիրառելի է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԾՔԻ ԴՈՒՐ ԳՏԻՎԱԾ ՀԱՅԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՐԻՄԻ ՇՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՏՈՒՑՄԱՆ ԱՊԸԱԶՆԱԿԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Սույն ենթահավելանքին կից աղյուսակ 8.2.1.3-ով նախատեսված վնասների գծով ծառայությունների մատուցման համար ընդունելի են համարվում նաև համապատասխան աղյուսակով նախատեսված բժշկական հաստատությունները:
2. Սույն ենթահավելանքին կից աղյուսակ 8.2.1.3-ով չնախատեսված վնասների գծով օտարերկրյա բժշկական հաստատությունների կողմից սուժողին ծառայություններ մատուցվելու դեպքում հատուցումը վճարվում է ոչ ավելի, քան ՀՀ-ում համապատասխան ծառայության համար նախատեսված ծառայության արժեքի չափով:
3. Սույն ենթահավելանքին կից աղյուսակ 8.2.1.3-ով նախատեսված վնասների գծով այդ աղյուսակով չնախատեսված օտարերկրյա բժշկական հաստատությունների կողմից սուժողին ծառայություններ մատուցվելու դեպքում հատուցումը վճարվում է ոչ ավելի, քան աղյուսակում նշված բժշկական հաստատություններում համապատասխան ծառայության համար նախատեսված ծառայության արժեքի չափով:

**ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԲՈՒԺՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ
ԺԱՄԿԵՏՆԵՐԸ՝
ԸՍՏ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ**

Հ/հ	Վնասվածքների հիմնական խմբերը	Տուժողի վերականգնողական բուժման առավելագույն ժամկետը	
		Մեկ նշանակման համար	Մեկ պատահարի գծով տվյալ տուժողին կատարված բոլոր նշանակումների համար (ժամկետի սկիզբ է համարվում՝ 1) Տվյալ պատահարի հետևանքով պատճառված վնասների գծով միայն ամբուլատոր բուժօգնություն և (կամ) վիրահատական միջամտությամբ չուղեկցված ստացիոնար բուժօգնություն ստացված լինելու դեպքում՝ առաջին անգամ բժշկական հաստատությունից տուժողի դուրս գրման օրը, 2) տվյալ պատահարի հետևանքով պատճառված վնասների գծով վիրահատական միջամտությամբ ուղեկցված ստացիոնար բուժօգնություն ստացված լինելու դեպքում՝ վերջին վիրահատական միջամտությունից հետո բժշկական հաստատությունից տուժողի դուրս գրման օրը)
1. Գանգուղեղային վնասվածքներ			
1)	թեթև	1 ամիս	1 ամիս
2)	միջին ծանրության	2 ամիս	3 ամիս
3)	ծանր	2 ամիս	12 ամիս
2. Ողնուղեղային վնասվածքներ			
1)	պարապարեզ	2 ամիս	2 ամիս
2)	պարապլեգիա	2 ամիս	3 ամիս
3)	կվադրիպարեզ	2 ամիս	6 ամիս
4)	կվադրիպլեգիա	2 ամիս	12 ամիս
3. Կտրվածքներ, նյարդերի, փափուկ հյուսվածքների և ներքին օրգանների վնասվածքներ, այրվածքներ			
1)	ողնաշարի, ազդրոսկրի, մեծ ոլոքի կտրվածքներ, կոնքազդրային հոդի և ծնկահոդի ներհոդային կտրվածքներ	2 ամիս	6 ամիս
2)	այլ կտրվածքներ	2 ամիս	4 ամիս

3)	փափուկ հյուսվածքների վնասվածքներ	2 ամիս	2 ամիս
4)	նյարդերի վնասվածքներ՝ ֆունկցիայի խանգարմամբ	2 ամիս	6 ամիս
5)	ներքին օրգանների վնասվածքներ	2 ամիս	4 ամիս
6)	այրվածքներ առանց սպիացման և ֆունկցիայի խանգարման	2 ամիս	2 ամիս
7)	այլ այրվածքներ	2 ամիս	12 ամիս

**ԲՈՒԺՄԱՆ ԵՎ ՖՈՒՆԿՑԻԱՅԻ ՎԵՐԱԿԱՆԳՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՇԱՆԱԿՎԱԾ
ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ԵՎ ՊՐՈԹԵԶՆԵՐԻ
ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ**

Հ/հ	Անվանումը	Հատուցման ենթակա առավելա- գույն սահմանաչափը (ՀՀ դրամ)
1.	Անվասայլակի ձեռքբերում	70 000
2.	Տեխնիկական այլ միջոցների և բժշկական պարագաների ձեռքբերում	120 000
3.	Պրոթեզներ	
ա.	ստորին վերջույթի՝ ծնկան հոդից ներքև	400 000
բ.	ստորին վերջույթի՝ ծնկան հոդից վերև	600 000
գ.	վերին վերջույթի՝ դաստակ/նախադաստակ	200 000
դ.	վերին վերջույթի՝ արմնկային հոդից վերև	350 000
ե.	վերին վերջույթի բիոպրոթեզ	1 000 000
4.	Օրթեզներ	
ա.	սրունք-թաթային՝ 12-18 տարեկան	25 000
բ.	սրունք-թաթային՝ 18 տարեկանից բարձր	35 000
գ.	ծունկ-սրունք-թաթային՝ 12-18 տարեկան	80 000
դ.	ծունկ-սրունք-թաթային՝ 18 տարեկանից բարձր	150 000
ե.	կոնքազդրային հոդ-ծունկ-սրունք-թաթային՝ 12-18 տարեկան	110 000
զ.	կոնքազդրային հոդ-ծունկ-սրունք-թաթային՝ 18 տարեկանից բարձր	200 000
է.	կորսետ	90 000

**2025 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ «ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԲԵՈՂ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 12-ՐԴ
ՀՈԴՎԱԾԻ 5-ՐԴ ՄԱՍՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ
ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԳՏՆՎՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ**

Հ/հ	Տուժողի առողջությանը պատճառված վնասի տեսակը, որի գծով բժշկական օգնությունը կամ առողջության վերականգնումը Հայաստանի Հանրապետության տարածքում հնարավոր չէ արդյունավետ իրականացնել	Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գործող բժշկական հաստատության անվանումը, որի կողմից համապատասխան վնասի գծով բժշկական օգնություն ցուցաբերվելու կամ առողջության վերականգնում իրականացվելու դիմաց տուժողն իրավունք ունի ստանալու օրենքով նախատեսված ապահովագրական հատուցում
1.	Բարակ աղիի տարածուն վնասում, ախտահարում կամ կորուստ, որն առաջացրել է բարակ աղիի փոխպատվաստման անհրաժեշտություն	Ռուսաստանի վիրաբուժության գիտական կենտրոն (Ռուսաստանի Դաշնություն, 119991, Մոսկվա, ԳՍՊ-1, Աբրիկովսկի նրբ., տ. 2, հեռ.՝ (7 495) 766-47-04; 246-89-88, ինտերնետային կայք՝ www.med.ru), Ա.Վ. Վիշնևսկու անվ. վիրաբուժության ինստիտուտ (Ռուսաստանի Դաշնություն, Մոսկվա, Բոլշայա Սերպուխովսկայա փող., տ. 27, հեռ.՝ (7 495) 236-72-90; 237-08-14, ինտերնետային կայք՝ www.vishnevskogo.ru)
2.	Լյարդի վնասում, ախտահարում կամ կորուստ, որն առաջացրել է լյարդի մեծածավալ մասնահատման կամ փոխպատվաստման անհրաժեշտություն	Ռուսաստանի վիրաբուժության գիտական կենտրոն (Ռուսաստանի Դաշնություն, 119991, Մոսկվա, ԳՍՊ-1, Աբրիկովսկի նրբ., տ. 2, հեռ.՝ (7 495) 766-47-04; 246-89-88, ինտերնետային կայք՝ www.med.ru), Ա.Վ. Վիշնևսկու անվ. վիրաբուժության ինստիտուտ (Ռուսաստանի Դաշնություն, Մոսկվա, Բոլշայա Սերպուխովսկայա փող., տ. 27, հեռ.՝ (7 495) 236-72-90; 237-08-14, ինտերնետային կայք՝ www.vishnevskogo.ru)
3.	Գլխի, պարանոցի, իրանի, ուսագոտու կամ վերին վերջույթի այրվածքներ, որոնց վերականգնողական բուժումը պահանջում է՝ սալինտներ՝ վերին վերջույթի համար կամ ճնշող (կոմպրեսիոն) «հագուստ»՝ դեմքի, իրանի կամ վերին վերջույթի համար	Ա.Վ. Վիշնևսկու անվ. վիրաբուժության ինստիտուտ (Ռուսաստանի Դաշնություն, Մոսկվա, Բոլշայա Սերպուխովսկայա փող., տ. 27, հեռ.՝ (7 495) 236-72-90; 237-08-14, ինտերնետային կայք՝ www.vishnevskogo.ru)

4.	Մարմնի 50%-ի և ավելի խորը այրվածքներ (III և IV աստիճանի), որոնք պահանջում են ալյուտրանսպլանտացիայի իրականացում	Ա.Վ. Վիշնևսկու անվ. վիրաբուժության ինստիտուտ (Ռուսաստանի Դաշնություն, Մոսկվա, Բոլշայա Սերպուխովսկայա փող., տ. 27, հեռ.՝ (7 495) 236-72-90; 237-08-14, ինտերնետային կայք՝ www.vishnevskogo.ru)
5.	Ողնուղեղային վնասվածքներ, որոնց հետևանքով առաջացած քրոնիկական խիստ արտահայտված ցավային համախտանիշները պահանջում են ռադիոհաճախականային սարքի իմպլանտացիա և (կամ) որոնց հետևանքով առաջացած շարժողական կոպիտ խանգարումները պահանջում են նեյրոստիմուլիացիա	Ռուսաստանի բժշկական գիտությունների ակադեմիայի Ն.Ն. Բուրդենկոյի անվան նեյրովիրաբուժության ԳՀԻ (Ռուսաստանի Դաշնություն, Մոսկվա, 4-րդ Տվերսկայա-Յամսկայա փող., տ. 16, հեռ.՝ (7 495) 251-65-26, ինտերնետային կայք՝ www.nsi.ru)
6.	Գանգուղեղային և (կամ) ողնուղեղային վնասվածքի հետևանքով առաջացած շնչառության քրոնիկ խանգարումներ, որոնք պահանջում են դիաֆրագմալ նյարդը խթանող սարքի իմպլանտացիա և (կամ) գանգուղեղային վնասվածքի հետևանքով առաջացած ենթակեղևային հանգույցների դիսֆունկցիա, որը պահանջում է գլխուղեղի խորանիստ հատվածների ստիմուլիացիա	Մոտոլի համալսարանական հիվանդանոց (Չեխիայի Հանրապետություն, Պրահա 5, 15006, Վուվալու 84, հեռ.՝ (420 2) 431-111, ինտերնետային կայք՝ www.fnmotol.cz)
7.	Գանգի դիմային հատվածի ոսկրերի ու փափուկ հյուսվածքների տարածուն վնասվածքային դեֆեկտներ, որոնց վերականգնման համար պահանջվում է համակարգչային մոդելավորում	Ստոմատոլոգիայի և դիմաձնոտային վիրաբուժության կենտրոնական գիտահետազոտական ինստիտուտ (Ռուսաստանի Դաշնություն, Մոսկվա, Տիմուր Ֆրունզեի փող., տ. 16, հեռ.՝ (7 495) 246-1334, ինտերնետային կայք՝ www.cniis.ru)
8.	Աչք-ակնակապճի վնասվածք՝ ակնագնդի և (կամ) ակնակապճի ոսկրերի ամբողջականության խանգարմամբ, երբ ամբողջությամբ կամ մասնակի պահպանված է տեսողությունը	Մոսկվայի Հեմհոլցի անվան աչքի հիվանդությունների գիտահետազոտական ինստիտուտ (Ռուսաստանի Դաշնություն, Մոսկվա, Սադովայա Չերնոգրյազգկայա փող., տ. 14/19, հեռ.՝ (7 495) 623-73-53, ինտերնետային կայք՝ www.helmholtzeyeinstitute.ru)

9.	Սույն ցանկի 1-8-րդ կետերով չնախատեսված վնասներ, որոնց գծով բժշկական օգնությունը կամ առողջության վերականգնումը Բժշկական հանձնաժողովի որոշմամբ (հիմնված Հայաստանի Հանրապետության տարածքում գործող նեղ մասնագիտական բուժօգնություն ցուցաբերող բժշկական հաստատության եզրակացության, պահանջվող այլ փաստաթղթերի և իրականացված հետազոտությունների վրա) հնարավոր չէ արդյունավետ իրականացնել Հայաստանի Հանրապետության տարածքում	Բժշկական հանձնաժողովի որոշմամբ սահմանված Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գործող բժշկական հաստատություն (հաստատություններ), որտեղ համապատասխան վնասի գծով բժշկական օգնությունը կամ առողջության վերականգնումը կարող է արդյունավետ իրականացվել
----	---	--

**ԼՐԱՑՈՒՑԻՉ ԵՎ (ԿԱՄ) ԿՐԿՆԱԿԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ
ԵՎ ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ**

**ԳԼՈՒԽ 1. ԼՐԱՑՈՒՑԻՉ ԵՎ ԿՐԿՆԱԿԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ՆԿԱՏՄԱՄԲ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ**

1. Լրացուցիչ և կրկնակի փորձաքննությունների իրավունքից օգտվող անձինք, լրացուցիչ և կրկնակի փորձաքննություններ իրականացնողները (կազմակերպողները), լրացուցիչ և կրկնակի փորձաքննությունների իրականացման ժամկետները սահմանված են **Հավելված 6-ով**:

2. Լրացուցիչ և կրկնակի փորձաքննությունների համար ներկայացվող դիմումների ձևերը սահմանված են **Հավելված 1-ի** համապատասխանաբար **Ձև 8.1-ով և Ձև 8.2-ով**:

3. Լրացուցիչ և կրկնակի փորձաքննությունների գործընթացում կիրառվող ծանուցումներն իրականացվում են սույն կանոններով սահմանված ձևերին համապատասխան:

**ԳԼՈՒԽ 2. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

4. Ընկերությունը, լրացուցիչ փորձաքննության իրականացման պահանջի վերաբերյալ դիմում ստանալուց հետո սույն կանոնների **Հավելված 6-ով** սահմանված ժամկետում ներկայացնում է լրացուցիչ փորձաքննության արդյունքները կամ մերժում է դրա նշանակումը:

**ԳԼՈՒԽ 3. ԿՐԿՆԱԿԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

5. Կրկնակի փորձաքննություն նշանակելու համար ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) Բոլոր անհրաժեշտ դաշտերը պատշաճ լրացված դիմում՝ ապահովագրական պատահարի արդյունքում գույքին պատճառված վնասների և (կամ) պատահարի առաջացման պատճառների կրկնակի փորձաքննություն իրականացնելու պահանջի վերաբերյալ (համաձայն **Հավելված 1-ի Ձև 8.2-ի**),

2) անձը հաստատող փաստաթղթի և Ավտոտրանսպորտային միջոցի (որին վերաբերում է կրկնակի փորձաքննության դիմումը) հաշվառման (գրանցման) վկայագրի կամ մաքսային հայտարարագրի կամ նմանատիպ այլ փաստաթղթերի պատճենները կամ լուսապատճենները, բացառությամբ, եթե կրկնակի փորձաքննության պահանջը ներկայացվել է Հայաստանի Հանրապետությունում կամ Արցախի Հանրապետությունում հաշվառված Ավտոտրանսպորտային միջոցի (որին վերաբերում է կրկնակի փորձաքննության դիմումը) սեփականատիրոջ կողմից,

3) Բյուրոյի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակված չափով և պահանջն ընդունող անձի կողմից սահմանված կարգով կրկնակի փորձաքննության վճարի կատարման փաստը հավաստող փաստաթղթի պատճենը կամ լուսապատճենը, բացառությամբ, եթե կրկնակի փորձաքննության պահանջը ներկայացվել է ԱՄՄԴ-ի միջոցով, որի դեպքում վճարման փաստը հավաստվում է էլեկտրոնային վճարման մասին Բյուրոյի կողմից ստացված ծանուցմամբ,

4) սույն կանոններով նախատեսված՝ լրացուցիչ լուսանկարներ և (կամ) տեսագրություն (առկայության դեպքում),

5) սույն կանոնների **Հավելված 7**-ի 11-րդ կետով նախատեսված փաստաթղթեր (նյութեր) (առկայության դեպքում),

6) Ավտոտրանսպորտային միջոցից տարբերվող գույքին պատճառված վնասների գծով կրկնակի փորձաքննության պահանջ ներկայացվելու դեպքում՝ վերջինի նույնականացման տվյալները պարունակող փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենները (լուսապատճենները):

6. Կրկնակի փորձաքննության դիմումը և անհրաժեշտ այլ փաստաթղթերը ներկայացվում են սույն կանոններով սահմանված ընդհանուր կարգով: Ընդ որում, Ապահովագրիչների, Ապահովագրված անձանց և տուժողների կողմից ներկայացվող դիմումների դեպքում (եթե դիմումը չի ներկայացվում Բյուրոյի պաշտոնական ինտերնետային կայքի համապատասխան բաժնում կամ համապատասխան բջջային հավելվածի միջոցով դիմումի լրացման համար անհրաժեշտ ամբողջական տեղեկատվությունը մուտքագրելու միջոցով) որպես դիմումն ընդունող համապատասխան անձ (Ապահովագրող) հանդես է գալիս ԴՍԱ-ն, որը կրկնակի փորձաքննության պահանջ ներկայացրած անձի կողմից նման պահանջ ներկայացնելու իրավասության առկայության և ներկայացված փաստաթղթերի ամբողջականության ստուգումից հետո նույն օրվա ընթացքում դիմումը և այլ փաստաթղթերն ուղարկում է Բյուրոյին: Դիմումի ուղարկման փաստի ուժով ԴՍԱ-ն հավաստում է կրկնակի փորձաքննության իրականացման պահանջ ներկայացրած անձի կողմից կրկնակի փորձաքննության համար սահմանված չափով վճարի կատարման փաստը:

7. Սույն հավելվածի 6-րդ կետով սահմանված կարգով դիմումը Բյուրոյի կողմից ստացվելուց հետո դիմում ներկայացրած անձին ուղարկվում է ծանուցում կրկնակի փորձաքննություն իրականացնելու պահանջի վերաբերյալ դիմումն ստացված լինելու վերաբերյալ՝ համաձայն **Ձև 8.4-ի**:

8. Կրկնակի փորձաքննության անցկացման պահանջ ներկայացրած անձի կողմից սույն հավելվածով չնախատեսված փաստաթղթեր ներկայացվելու դեպքում, դրանք չեն ընդունվում Բյուրոյի կողմից և չեն տրամադրվում փորձագետին:

9. Բյուրոն իր անունից իրականացվող հատուցման գործընթացի ժամանակ անհրաժեշտության դեպքում Օրենքով սահմանված ժամկետում կարող է նշանակել կրկնակի փորձաքննություն:

10. Սույն հավելվածով նախատեսված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց անմիջապես հետո, բայց ոչ ուշ, քան Օրենքով սահմանված ժամկետի ավարտը Բյուրոն որոշում է կայացնում կրկնակի փորձաքննություն նշանակելու կամ մերժելու մասին: Նման որոշում Բյուրոն կարող է կայացնել նաև սույն հավելվածի 9-րդ կետով սահմանված կարգով:

11. Այն դեպքում, երբ նույն փորձագիտական եզրակացության կապակցությամբ կրկնակի փորձաքննության անցկացման պահանջ են ներկայացրել մեկից ավելի շահագրգիռ անձինք, ապա կրկնակի փորձաքննությունը նշանակվում է փորձաքննության անցկացման համար պահանջվող գումարի վճարումը հավաստող փաստաթուղթը առաջինը Բյուրո ներկայացրած անձի պահանջով, պայմանով, որ մինչև այդ պահը Ապահովագրողը կրկնակի փորձաքննության անցկացման պահանջ չի ներկայացրել, որի դեպքում կրկնակի փորձաքննությունը նշանակվում է ապահովագրողի պահանջով: Սույն կետով նախատեսված դեպքում Բյուրոն (Ապահովագրողը) վերադարձնում է բոլոր այն անձանց կատարած վճարումները, ովքեր սույն կետի իմաստով չեն համարվում կրկնակի փորձաքննության անցկացման պահանջ ներկայացրած անձինք:

12. Լրացուցիչ և կրկնակի փորձաքննություն իրականացնելու պահանջի վերաբերյալ դիմում ներկայացրած անձը կարող է հրաժարվել իր ներկայացրած դիմումից՝ սույն կանոնների 6-րդ կետով սահմանված կարգով և սույն կանոնների **Հավելված 1-ի Ձև 8.3-ով** սահմանված ձևով ներկայացնելով համապատասխան դիմում, որի դեպքում Բյուրոն չի նշանակում կրկնակի փորձաքննություն: Եթե կրկնակի փորձաքննություն իրականացնելու պահանջի վերաբերյալ ներկայացված դիմումին ընթացք չտալու վերաբերյալ դիմումը ներկայացնելու պահի դրությամբ Բյուրոյի կողմից արդեն իսկ նշանակված է կրկնակի փորձաքննություն, ապա ներկայացված դիմումը թողնվում է անհետևանք, և կրկնակի փորձաքննությունն իրականացվում է սահմանված կարգով:

13. Կրկնակի փորձաքննության արդյունքները փորձաքննության պահանջ ներկայացրած անձին ծանուցելուց հետո ոչ ուշ, քան փորձաքննության պատվերն ստանալու ամսվան հաջորդող ամսվա տասնհինգը, Բյուրոյին կամ Ապահովագրողին կրկնակի փորձաքննության համար նախապես վճարված գումարից (կրկնակի փորձաքննության պահանջը Ապահովագրողի կողմից ներկայացրած լինելու դեպքում՝ Ապահովագրողի միջոցներից) համապատասխանաբար Բյուրոյի կամ Ապահովագրողի կողմից փորձագետին է փոխանցվում կրկնակի փորձաքննության վճարը: (փոփ. և լրաց. է 27/04/2021թ թիվ 13-Լ)

14. Բյուրոն մերժում է կրկնակի փորձաքննության անցկացման պահանջը (չի նշանակում կրկնակի փորձաքննություն), եթե՝

1) չեն պահպանվել Օրենքով և **Հավելված 6-ով** սահմանված՝ կրկնակի փորձաքննության անցկացման պահանջ ներկայացնելու ժամկետները,

2) նույն ապահովագրական պատահարի շրջանակներում իրականացվել է (իրականացվում է) պահանջվող կրկնակի փորձաքննություն,

3) բողոքարկվող եզրակացության հետ կապված իրականացվում է լրացուցիչ փորձաքննություն,

4) պահանջի վերաբերյալ ներկայացված դիմումի ձևը չի համապատասխանում (լրացված չէ) սույն կանոններով սահմանված ձևին (ձևով),

5) սահմանված ժամկետում չի ներկայացվել սույն կանոններով սահմանված փաստաթղթերից որևէ մեկը,

6) կրկնակի փորձաքննություն իրականացնելու պահանջի վերաբերյալ դիմում ներկայացրած անձը կրկնակի փորձաքննություն իրականացնելու պահանջի իրավունք չունեցող անձ է,

7) կրկնակի փորձաքննություն իրականացնելու պահանջի վերաբերյալ դիմում ներկայացրած անձի կողմից մինչև կրկնակի փորձաքննություն նշանակվելը ներկայացվել է կրկնակի փորձաքննություն իրականացնելու պահանջի վերաբերյալ ներկայացված դիմումին ընթացք չտալու վերաբերյալ դիմում,

8) սահմանված ժամկետում սահմանված չափով չի կատարվել կրկնակի փորձաքննության վճարը:

15. Կրկնակի փորձաքննությունների մերժման դեպքում Բյուրոն մերժման (չնշանակման) մասին **Հավելված 1-ի Ձև 9.1**-ով սահմանված կարգով ծանուցում է կրկնակի փորձաքննություն իրականացնելու պահանջի վերաբերյալ դիմում ներկայացրած անձին և ԴՍԱ-ին:

16. Կրկնակի փորձաքննության անցկացման պահանջը մերժվելու դեպքում Բյուրոն (Ապահովագրողը) կրկնակի փորձաքննության անցկացման համար նախապես վճարված գումարը վերադարձնում է այդ գումարը վճարած անձին:

Հավելված 10
«ԱՊՊԱ ընդհանուր պայմաններ» կանոնների

**ՏՈՒԺՈՂԻ ԳՈՒՅՔԻՆ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

1. Սույն կանոնների համաձայն՝ տուժողի կողմից գույքին պատճառված վնասի վերականգնման տարբերակն ընտրվելու դեպքում վերականգնման գործընթացը կազմակերպում է ԴՍԱ-ն, որը պարտավորվում է ձեռնարկել լավագույն ջանքեր վերանորոգող կազմակերպության հետ հարաբերություններում տուժողի շահերը պաշտպանելու՝ մասնավորապես ողջամիտ ժամկետում որակյալ աշխատանքի արդյունք ստանալու համար: ԴՍԱ-ն իրավունք չունի ինչպես վերանորոգող կազմակերպության հետ պայմանագրի կնքման, այնպես էլ դրա կատարման փուլում ձեռնարկել այնպիսի գործողություններ՝ ներառյալ տրամադրել այնպիսի համաձայնություններ, որոնք կսահմանափակեն տուժողի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով և այլ օրենքներով՝ ներառյալ դրանց դիսպոզիտիվ դրույթներով սահմանված իրավունքները կամ հնարավորությունները:

2. Վերականգնման գործընթացն իրականացվում է այն վերանորոգող կազմակերպությունում, որը նախատեսված է (նշված է) ապահովագրական հատուցում վճարելու (մերժելու) վերաբերյալ որոշման հիմքում դրված վնասների գնահատման փորձաքննության եզրակացությունում: Ընդ որում, վերականգնման ենթակա են գույքին պատճառված այն վնասները, որոնք որպես պատահարի հետևանքով պատճառված վնասներ փորձագետի կողմից նշվել են վնասների գնահատման տվյալ փորձագիտական եզրակացությունում: Երաշխիքային ժամկետում գտնվող գույքի համար երաշխիքային ժամկետ տված անձի կողմից վնասվածքների վերականգնման հատուկ պայմաններ (կոնկրետ վերանորոգող կազմակերպություն և այլն) սահմանված լինելու դեպքում ԴՍԱ-ն պարտավոր է սույն կանոնների պահանջների պահպանմամբ իր հնարավորությունների սահմաններում ապահովել նշված պայմաններով վերականգնման գործընթացը: (փոփ. և լրաց. է 30/03/2021թ թիվ 12-Լ)

3. Այն դեպքում, երբ հատուցումն իրականացվելու է վնասի վերականգնման եղանակով, ապահովագրական հատուցում վճարելու (մերժելու) վերաբերյալ որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ երեք օրվա ընթացքում, նախքան վերականգնման գործընթացի սկսվելը ԴՍԱ-ն պարտավոր է տուժողին ծանուցել՝

1) վերանորոգող կազմակերպության կողմից առաջարկվող վերականգնման ծառայության մատուցման պայմանների մասին, մասնավորապես՝ վերականգնման ժամկետի և կազմակերպության կողմից տրվող երաշխիքային ժամկետի, իսկ սույն հավելվածի 4-րդ կետի 2)-րդ ենթակետով նախատեսված դեպքերում՝ նաև յուրաքանչյուր բաղադրիչի համար տուժողի

կողմից լրավճարման ենթակա գումարի չափի մասին: Տուժողը նշված պայմանների հետ չհամաձայնվելու դեպքում իրավունք ունի երկու օրվա ընթացքում գրավոր եղանակով պահանջել ապահովագրական հատուցումն իրականացնել համապատասխան գումարը վճարելու եղանակով: Վերջին դեպքում հատուցման գումարի վճարման համար սույն կանոններով սահմանված ժամկետի հաշվարկն սկսվում է ԴՍԱ-ի կողմից համապատասխան պահանջն ստանալու օրվան հաջորդող օրվանից:

2) Վնասների գնահատման եզրակացությամբ նշված այն փոխարինվող բաղադրիչները, որոնց ձեռքբերման աղբյուրը տվյալ վերանորոգող կազմակերպությունը չէ, մինչև վերականգնման գործընթաց սկսելը ձեռքբերելու և վերանորոգող կազմակերպությանը հանձնելու անհրաժեշտության մասին:

4. Տուժողը կամ Ապահովագրիչը (Ապահովագրված անձը) կամ որևէ երրորդ անձ պետք է նախքան գույքի վերականգնման գործընթացն սկսվելը գրավոր պարտավորություն ստանձնի լրավճարելու վնասի վերականգնման համար՝ ապահովագրական հատուցման ենթակա գումարի չբավարարող մասով, եթե՝

1) սույն կանոններով սահմանված որևէ հիմքով (ապահովագրական գումարի գերազանցում, պատահարի մեջ տուժողի մեղքի առկայություն և այլն) հատուցման ենթակա գումարը պակաս է պատահարի հետևանքով տուժողին պատճառված փաստացի վնասից, կամ

2) տուժողը ցանկանում է գույքի վերականգնման համար օգտագործել վնասի հաշվարկում փորձագետի կողմից սույն կանոնների համաձայն դրված բաղադրիչներից տարբերվող բաղադրիչներ կամ այնպիսի բաղադրիչներ, որոնց գծով փորձագետը կիրառել է մաշվածություն:

5. Ոչ ոքի կողմից սույն կանոնների 4-րդ կետով նախատեսված պարտավորությունը ԴՍԱ-ի կողմից համապատասխան պահանջը ներկայացվելուց հետո՝ երկու օրվա ընթացքում, չստանձնվելու դեպքում համապատասխան գույքին պատճառված վնասների վերականգնումը գնահատվում է որպես ոչ ողջամիտ, և տուժողին պատճառված վնասները սույն կանոնների համաձայն ԴՍԱ-ի կողմից հատուցվում են համապատասխան գումար վճարելու միջոցով:

6. ԴՍԱ-ն պետք է ապահովի, որպեսզի գույքի վերականգնման աշխատանքներն ավարտվեն սույն հավելվածի 3-րդ կետով նախատեսված կարգով համաձայնեցված ժամկետում, բայց ոչ ուշ, քան վերանորոգող կազմակերպության կողմից առաջարկվող վերականգնման ծառայության մատուցման պայմանները տուժողին ծանուցելու և դրա հետ տուժողի չհամաձայնվելու համար սահմանված ժամկետի ավարտի (սույն կանոնների 3-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված փոխարինող բաղադրիչը (մի քանի բաղադրիչի դեպքում՝ դրանցից ամենավերջինը) վերանորոգող կազմակերպությանը հանձնելու) օրվան հաջորդող՝

1) տասն օրվա ընթացքում, եթե վերականգնման արժեքը չի գերազանցում հարյուր հազար ՀՀ դրամը,

2) մեկ ամսվա ընթացքում, եթե վերականգնման արժեքը գերազանցում է հարյուր հազար ՀՀ դրամը:

7. Սույն հավելվածի 6-րդ կետով նախատեսված ժամկետները կարող են երկարաձգվել մինչև 15 օրով, բայց ոչ ավելի, քան սույն հավելվածի 3-րդ կետով նախատեսված կարգով համաձայնեցված ժամկետի ավարտը, եթե տվյալ գույքի վերականգնման համար անհրաժեշտ որևէ բաղադրիչ Հայաստանի Հանրապետության համանման բաղադրիչի ձեռքբերման շուկայում բացակայում է և տվյալ բաղադրիչը ներկրվում է օտարերկրյա պետությունից:

8. Գույքի վերականգնման աշխատանքները համարվում են ավարտված այն պահից, երբ տուժողի, ԴՍԱ-ի և վերանորոգող կազմակերպության կողմից եռակողմ ստորագրվում է վերականգնման աշխատանքների հանձնման-ընդունման ակտ՝ համաձայն **Ենթահավելված 10.1-ի**: Ընդ որում, տուժողի կողմից հանձնման-ընդունման ակտը երկու օրվա ընթացքում անհիմն չստորագրվելու կամ ստորագրումից խուսափելու դեպքում նշված ակտը համարվում է նրա կողմից ստորագրված: (փոփ. է 30/03/2021թ թիվ 12-Լ)

9. Տուժողն ինչպես գույքի վերականգնման գործընթացում, այնպես էլ դրա ավարտից հետո կարող է պահանջել ԴՍԱ-ից համապատասխան հիմքերի առկայության դեպքում իրացնել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով և այլ օրենքներով՝ ներառյալ դրանց դիսպոզիտիվ դրույթներով պատվիրատուի համար նախատեսված իրավունքները՝ ներառյալ սահմանված ժամկետում կամ որակով չիրականացված աշխատանքների իրականացումը տվյալ վերանորոգող կազմակերպության հաշվին այլ վերանորոգող կազմակերպության հանձնարարելու հետ կապված:

10. Վերանորոգող կազմակերպության կողմից տվյալ գույքի վերականգնման աշխատանքների արդյունքի համար պետք է տրվի ոչ պակաս, քան մեկ տարի երաշխիքային ժամկետ, իսկ փոփոխված պահեստամասերի (դետալների, ագրեգատների և բաղադրիչների, բացառությամբ ընթացային մասի դետալների) համար՝ դրանց նպատակային նշանակությամբ օգտագործման համար սովորաբար նախատեսվող ժամկետով երաշխիք:

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱԿՏ
ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

Հանձնման-ընդունման ակտի ստորագրման ամսաթիվը _____

Հանձնման-ընդունման ակտի ստորագրման վայրը _____

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

(ԴՍԱ-ի անվանումը)

հասցեն՝ _____

ՀՎՀՀ՝ _____

Բանկ՝ _____

Հ/Հ՝ _____

Էլ. փոստ՝ _____

հեռ.՝ _____

ԿԱՏԱՐՈՂ

(Վերանորոգող կազմակերպության անվանումը)

հասցեն՝ _____

ՀՎՀՀ՝ _____

Բանկ՝ _____

Հ/Հ՝ _____

Էլ. փոստ՝ _____

հեռ.՝ _____

ՍՏԱՑՈՂ

(Տնօրդի անուն, ազգանունը կամ անվանումը)

հասցեն՝ _____

Էլ. փոստ՝ _____

հեռ.՝ _____

Պատվիրատուն՝ _____ ի դեմս _____, Կատարող՝ _____ ի դեմս _____ և Ստացող՝ _____ ի դեմս _____, հիմք ընդունելով Պատվիրատուի և Կատարողի միջև կնքված _____ 20 ____ թ. թիվ _____ կապալի պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) և Պատվիրատուի կողմից _____ 20 ____ թ. ընդունված թիվ _____ ապահովագրական հատուցումը վճարելու (մերժելու) վերաբերյալ որոշում-ծանուցումը՝ կազմեցին սույն ակտն այն մասին, որ Կատարողը հանձնեց, իսկ Պատվիրատուն և Ստացողն ընդունեցին ստորև նշված աշխատանքների արդյունքները՝ կատարված Պայմանագրի պայմաններին և Բյուրոյի կանոններին համապատասխան : Վերականգնված գույքը հանձնվեց Ստացողին:

Կատարողի անունից		
	(ստորագրություն)	(անուն և ազգանուն)
Պատվիրատուի անունից		
	(ստորագրություն)	(անուն և ազգանուն)
Ստացողի անունից		
	(ստորագրություն)	(անուն և ազգանուն)

**ԲԶՋԱՅԻՆ ՀԱՎԵԼՎԱԾԻ ՄԻՋՈՑՈՎ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ
ԼՐԱՑՄԱՆ ՀՐԱՀԱՆԳԸ**

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն հավելվածը մշակվել է Հայաստանի Հանրապետության Կառավարության 2010 թվականի օգոստոսի 26-ի «Համաձայնեցված հայտարարագրի ձևը, բովանդակությունը, լրացման հրահանգը հաստատելու մասին» N 1104-Ն որոշմամբ հաստատված Հավելվածի 9-րդ կետի հիման վրա:

2. Սույն հավելվածով սահմանվում է Համաձայնեցված հայտարարագրի լրացման բջջային հավելվածի (այսուհետ՝ Բջջային հավելված) բեռնման, տեղադրման և դրա միջոցով Համաձայնեցված հայտարարագրի լրացման կարգը:

3. Բջջային հավելվածի բեռնման և շահագործման ընթացքում տեղի է ունենում տվյալների փոխանակում համացանցի միջոցով: Բջջային հեռախոսների միջոցով համացանցի օգտագործման համար սահմանված սակագների վերաբերյալ տեղեկատվությանն անհրաժեշտ է ծանոթանալ բջջային կապի օպերատորներից:

4. Բջջային հավելվածի շահագործման համար անհրաժեշտ է պատշաճ հասանելիություն ապահովել բջջային հեռախոսի տեղորոշման և լուսանկարահանման ֆունկցիոնալ հնարավորություններին:

5. Էլեկտրոնային եղանակով Համաձայնեցված հայտարարագիր կարող է կազմվել բացառապես սույն հավելվածի 6-րդ կետում նշված ինտերնետային կայքերում հրապարակված հղումներով բացվող և ամբողջական անվանմանը համապատասխանող Բջջային հավելվածի միջոցով:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՎԵԼՎԱԾԻ ՆԵՐԲԵՌՆՈՒՄ

6. Բջջային հավելվածն անվճար ներբեռնման հիմունքներով հասանելի է «Android» և «iOS» օպերացիոն համակարգով աշխատող բջջային հեռախոսների համար համապատասխանաբար «Google Play» և «App Store» էլեկտրոնային հարթակներում: Էլեկտրոնային հարթակների հղումը, ինչպես նաև Բջջային հավելվածի ամբողջական անվանումը մշտապես հրապարակված է www.appa.am և www.aswa.am ինտերնետային կայքերում:

7. Բջջային հավելվածի միջոցով պատահարը կարելի է արձանագրել ինչպես պատահարին մասնակից վարորդի հեռախոսի միջոցով (հեռախոսում ներբեռնված Բջջային հավելվածի միջոցով), այնպես էլ ցանկացած այլ անձի հեռախոսի միջոցով (հեռախոսում ներբեռնված Բջջային հավելվածի միջոցով):

ԳԼՈՒԽ 3. ՊԱՏԱՀԱՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ

8. Բջջային հավելվածի միջոցով պատահարի արձանագրման գործընթացում էլեկտրոնային եղանակով հավաքագրվում է Համաձայնեցված հայտարարագրում լրացման ենթակա տեղեկատվության ամբողջությունը, որը ներառում է հետևյալ խումբ տվյալների էլեկտրոնային եղանակով հավաքագրումը՝

1) պատահարի վերաբերյալ ընդհանուր տվյալների հավաքագրում (Ընդհանուր տվյալներ),

2) պատահարի մասնակից և իրեն մեղավոր համարող վարորդի և նրա կողմից վարած Ավտոտրանսպորտային միջոցի վերաբերյալ տվյալների հավաքագրում (Մեղավոր վարորդի մաս),

3) պատահարի մասնակից և իրեն անմեղ համարող վարորդի և նրա կողմից վարած Ավտոտրանսպորտային միջոցի վերաբերյալ տվյալների հավաքագրում (Անմեղ վարորդի մաս),

4) Ավտոտրանսպորտային միջոցների փոխադարձ դիրքերի և ընդհանրական վնասվածքների վերաբերյալ տվյալների հավաքագրում (Հետվթարային լուսանկարներ), որոնք ներառում են նաև Համաձայնեցված հայտարարագրում լրացման ենթակա՝ «ՏՄ ՎՆԱՍՎԱԾ ԴԵՏԱԼՆԵՐ ՆՇՈՒՄՆԵՐ» դաշտում «X» նշում կատարելու միջոցով անհրաժեշտ նշումները և փոխարինում են դրանց:

5) Հաստատումներ և ծանուցումներ:

9. Վարորդները Համաձայնեցված հայտարարագրի լրացման բջջային հավելվածի միջոցով պատահարն արձանագրում են հետևյալ հաջորդական քայլերի իրականացման միջոցով՝

Քայլը	Նկարագրությունը
Ընդհանուր տվյալներ	
Քայլ 1	Ներկայացվում են Համաձայնեցված հայտարարագրով գրանցվող պատահարի պայմանները, որոնց առկայության և պատահարի մասնակից վարորդների՝ դրանց տեղեկացվածության վերաբերյալ հաստատող պատասխան տրվելու դեպքում միայն կարող է անցում կատարվել Քայլ 2-ին, հակառակ դեպքում Համաձայնեցված հայտարարագիրը չի կարող լրացվել
Քայլ 2	Մուտքագրվում է պատահարի տեղի ունենալու ամսաթիվը և ժամը
Քայլ 3	Մուտքագրվում է պատահարի տեղի ունենալու վայրը
Մեղավոր վարորդի մաս	
Քայլ 4	Լուսանկարելու միջոցով մուտքագրվում են իրեն մեղավոր համարող վարորդի կողմից վարված ավտոտրանսպորտային միջոցի հաշվառման (գրանցման) վկայագրի դիմերեսը և դարձերեսը: Ընդ որում՝ եթե մուտքագրված լուսանկարներից Բջջային հավելվածը չի կարողանում ինքնաշխատ ճանաչել և համապատասխան համակարգերի հետ ինտեգրման եղանակով ստանալ տվյալ Ավտոտրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշները, ապա ձեռքով մուտքագրվում է տվյալ Ավտոտրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշը
Քայլ 5	Լուսանկարելու միջոցով մուտքագրվում են իրեն մեղավոր համարող վարորդի վարորդական վկայականի (դրա բացակայության դեպքում՝ վարորդի անձը հաստատող փաստաթղթի) դիմերեսը և դարձերեսը

Քայլ 6	Մուտքագվում է իրեն մեղավոր համարող վարորդի բջջային հեռախոսահամարը, որով հնարավոր է կապ հաստատել վերջինի հետ պատահարի պահից սկսած առնվազն մեկ ամսվա ընթացքում
Անմեղ վարորդի մաս	
Քայլ 7	Լուսանկարելու միջոցով մուտքագրվում են իրեն անմեղ համարող վարորդի կողմից վարված ավտոտրանսպորտային միջոցի հաշվառման (գրանցման) վկայագրի դիմերեսը և դարձերեսը Ընդ որում՝ այն դեպքում, երբ այդ լուսանկարներից Բջջային հավելվածը չի կարողանում ինքնաշխատ ճանաչել և համապատասխան համակարգերի հետ ինտեգրման եղանակով ստանալ տվյալ ավտոտրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշները, ապա ձեռքով մուտքագրվում է տվյալ ավտոտրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշը
Քայլ 8	Լուսանկարելու միջոցով մուտքագրվում են իրեն անմեղ համարող վարորդի վարորդական վկայականի (դրա բացակայության դեպքում՝ վարորդի անձը հաստատող փաստաթղթի) դիմերեսը և դարձերեսը
Քայլ 9	Մուտքագվում է իրեն անմեղ համարող վարորդի բջջային հեռախոսահամարը, որով հնարավոր է կապ հաստատել վերջինի հետ պատահարի պահից սկսած առնվազն մեկ ամսվա ընթացքում
Հետվթարային լուսանկարներ	
Քայլ 10	Լուսանկարելու միջոցով մուտքագրվում են Ավտոտրանսպորտային միջոցների փոխադարձ դիրքերը և ընդհանրական վնասվածքները ներառող հետևյալ լուսանկարները՝ 1) Լուսանկար, որն ընդգրկում է վթարում ներառված երկու ավտոտրանսպորտային միջոցների փոխադարձ դիրքերը, 2) Լուսանկար, որն արտացոլում է մեղավոր վարորդի վարած Ավտոտրանսպորտային միջոցի ընդհանրական վնասվածքները, 3) Լուսանկար, որն արտացոլում է անմեղ վարորդի վարած Ավտոտրանսպորտային միջոցի ընդհանրական վնասվածքները: Ընդ որում՝ Բջջային հավելվածի կողմից իրականացվում է լուսանկարների որակական տեխնիկական հատկանիշների (չափազանց լուսավոր, չափազանց մութ, առանց ֆոկուսի և այլն) ստուգում և որևէ լուսանկարի՝ տեխնիկական հատկանիշների չբավարարելու դեպքում անհրաժեշտ է կրկնել տվյալ լուսանկարումը

Հաստատումներ և ծանուցումներ	
Քայլ 11	Բջջային հավելվածում տեղեկատվություն մուտքագրողը հաստատում է, որ 1) պատահարին մասնակից վարորդները տեղեկացված են, որ հայտարարագիրը հաստատելով մեղավորության մասով հետագա բողոքարկման հնարավորություն չունեն, և պատահարում միակ մեղավոր է ճանաչվելու Բջջային հավելվածում որպես մեղավոր մուտքագրված ավտոտրանսպորտային միջոցի վարորդը, բացառությամբ Բյուրոյի կանոններով նախատեսված դեպքերի, (յրաց. է 29/01/2021թ թիվ 1-Լ) 2) պատահարին մասնակից վարորդները փոխադարձ համատեղ կամքով հաստատում են Համաձայնեցված հայտարարագիրը, ինչպիսի փաստի ուժով այն համարում են (համարվում է) իրենց կողմից ստորագրված, 3) իր կողմից մուտքագրված տվյալները համապատասխանում են իրականությանը, իսկ մուտքագրված տվյալները և փաստաթղթերը տրամադրված են պատահարի մասնակից վարորդների կողմից, 4) գիտակցում է, որ իրականությանը չհամապատասխանող տվյալներ ներկայացնելու դեպքում կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության:
Քայլ 11-ում նշված հաստատումից անմիջապես հետո, բայց ոչ ուշ, քան 15 րոպեի ընթացքում ԱՄՄՊ-ն էլեկտրոնային եղանակով ծանուցում է ուղարկում պատահարում ներգրավված Ավտոտրանսպորտային միջոցների գծով պատահարի պահին կնքված և գործող ԱՊՊԱ պայմանագրով Ապահովադիր հանդիսացող անձանց և ՊԿԱ-ներին, իսկ այդ Ավտոտրանսպորտային միջոցներից որևէ մեկի գծով պատահարի պահին կնքված և գործող ԱՊՊԱ պայմանագրի բացկայության դեպքում՝ նաև Բյուրոյին: Ծանուցումը ներառում է տեղեկատվություն Համաձայնեցված հայտարարագրով գրանցված պատահարի և դրա որոշ մանրամասների մասին: Քայլ 11-ում նշված հաստատումը չկատարվելու կամ դրանից առաջ որևէ Քայլից հետո հաջորդ Քայլին չանցնելու դեպքում Համաձայնեցված հայտարարագիրը համարվում է չլրացված և չստորագրված: Համաձայնեցված հայտարարագիրը համարվում է չլրացված և չստորագրված նաև, եթե Քայլ 11-ում նշված հաստատումը կատարվելուց հետո՝ 3 ժամվա ընթացքում, պատահարի վայրում երկու ավտոտրանսպորտային միջոցների վարորդների ներկայությամբ այդ պատահարի գծով ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու պետական մարմնի կողմից կազմվել է Ելակետ 1 և Ելակետ 2:	